



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

23354

938

398.5  
G-15

1876

2010

398.5

3-15

ՄՐ

ՀԱՅԿԱՆԱԿԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՅՈՒԹՈՒՅՑ

Հատոր I.

(Ա. գրձ)

ՀԱՅ ԸՆԴ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՈՒՅՑ ԱՐԴՅՈՒՆԱԴԱՏ ՀԱՅՈՒԹՈՒՅՑ ԱՐԴՅՈՒՆԱԴԱՏ

ԱՐԴՅՈՒՆԱԴԱՏ

ՅՈՎԱՆԻԿԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ:

(-1001)  
2845

2002

1876

ԲԱԳՈՒ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՊԱՍԱՊԵԱՆՑ:

40354-աշխ.

Տ Յ Ո Ւ Ր Ա Յ Ո Ւ Ր

Լ Ա Ր Ա Ր Ա Ր

(Եռու 11)

Дозволено цензурою Тифлисъ, 29 Ноября 1875 года.

23434-60

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հարկաւոր ենք համարում քանի մի խօսք աւ սել մեր այս աշխատասիրութեան մասին : - Անեկդօտը ինքն լսա ինքեան մի փոքրիկ ծիծաղաշարժ անցք է, որ պատահելով խօսակցութեան մէջ ծիծաղ է արտադրում : Ծիծաղել կարելի է զանազան և անհամար պատճառներից զրգուուած, ուստի և անեկդօտը յառաջանում է հաղար ու մի պատճառներից : Բայց ինչ գէր է խաղում անեկդօտը կեանքի մէջ : Նա ծիծաղեցնելով մարդուս, միւնյն ժամանակը կրթում է նորա միտքը : Նայելով, թէ ինչ նիւթի վերայ է առված անեկդօտը, մենք որ և է հասկացողութիւն ենք կազմում նոյն խկ նիւթի վերայ : Եթէ անեկդօտը զիւղացու վերայ է, նորա արտայայտած երկու խօսքից մենք կարողանում ենք դադախար կազմել նորա մտաւոր զարդացման վերայ, այն յարաբերութեան վերայ, որ նու ունի դէսի իւր ընտանիքը, դէսի իւր դրացին, դէսի իւր քահանան . . . . : Շատ անգամ երկու խօսք բաւական է լինում, որ մարդս ձանացում էր ուրիշներից . խկ մի փոքրիկ անեկդօտ կարծես ստեղծվում է, որ նա կատարելապէս յայտնուած լինէր անձանօթի մօտ : Եթէ մենք որ ևէ անձնի վերայ ունինք մի քանի անեկդօտներ, այն ժամանակը նա շատ կամ սակաւ հասկանալի է լինում մեզ . խկ եթէ մենք ունինք անեկդօտներ մի ամբողջ ժողովրդի կեանքից, այդ մի և նոյն է, թէ

մենք ունինք հասկացողութիւն մի ժողովրդի վերայ :  
Որքան շատ և բազմասեռի են անեկդօտները, այն-  
քան լայն և ընդարձակ են կազմուող գաղափարները :

**Անեկդօտը** մի հայելի է, որի մէջ երևում է  
մարդ իւր արժանաւորութիւններով կամ պակա-  
սութիւններով : Իսկ մարդը մի յայտնի դասակարդի,  
մի ամբողջ հասարակութեան հետևաբար և մի  
ամբողջ ազգութեան ներկայացուցիչ է : Անեկդօտը  
ցոյց է տալիս մեզ որ ևէ ազգի մտաւոր և բարո-  
յական զարգացման մակերեւոյթը . թոյլ է տալիս մեզ  
նկատել այն դանազանութիւնը, որ կայ նորա և իւր  
գրացիների մէջ : Անեկդօտը ծանօթացնում է մեզ  
Եւրոպացու և Ասիացու բնաւորութեան, նոյն լաւ  
և վատ կողմերի հետ : Նա ցոյց է տալիս քաղաքա-  
ցու և գիւղացու տարբերութիւնը . պատկերացնում է  
մեզ հոգեւորականը և աշխարհականը . տղամարդը  
և կինը . զիսութիւնը, տգիտութիւնը, կրթութիւնը,  
ծլատութիւնը, խորամանկութիւնը, կեղծաւորութիւնը,  
գողութիւնը, երկչուառութիւնը, սէրը, ատելութիւնը,  
ժրածանութիւնը, ծուլութիւնը, սառանսրտութիւնը :

**Ամեն** ազգ ունի իւր անեկդօտները, թէ տպու-  
ած և եթէ անտիպ, Եւրոպան երկուսից ևս ունի .  
իսկ Ասիան - միայն վերջննը, խօսելով զեթ Հայերիս  
վերաբերութեամբ :

**Մի** փոքրիկ ծառայութիւն կամենալով մասու-  
ցանել մեր ընթերցասէր հասարակութիւններին, մենք  
ձեռք զարկեցինք սոյն այս աշխատութեանը : Որքան  
ներեցին մեզ հանդամանքները, մենք օգուտ քաղե-  
ցինք գէսկերից, որոնք չխնայեցին տալ մեզ ամե-  
նայն գոյնի անեկդօտներ : Կէտաք և Գէտէր . - ահա՝

այն աղբիւրները . որոնք առատօրէն պարզեցին մեզ  
մեր աշխատութեան պաշարեղնները : Այս տողերը  
զբելիս մենք սեպուհ պարտականութիւն ենք համա-  
րում յայտնել մեր հրապարակական շնորհակալու-  
թեան հաւաստիքը այն անձներին, որոնք բարեհա-  
ճեցին հաղորդել մեղ անեկդօտներ :

**Զկամենալով** սահմանափակուիլ միայն Հայե-  
րով . մենք այս անդամ կամեցանք ներկայացնել ըն-  
թերցով դասին, որքան կարելի է, բազմակողմանի  
նիւթեր պարունակող մի զիրք : Այս նսպասակով  
ահա՝ սոյն զիրքի մէջ մի նշանաւոր տեղ ևս տուել  
ենք օտարազգի անեկդօտներին : Զանազան զիրքերը,  
որոնցից մենք օգուտ ենք քաղել, աւելորդ ենք հա-  
մարում յիշել այս տեղ, կիշենք միայն նոցանից  
պիտառները, - սոքա են՝ „Անեկdotы Нéмецкие,  
Французские, Американские и Английские.  
С.-Петербургъ, годъ 1874“ և „Անեկdotы  
всехъ въковъ“ и народовъ. Կ. Է. Վ. Ի.,  
годъ 1846.—

**Մենք** աշխատել ենք, յայտնի բան է, միշտ  
ընտրութիւն անել անեկդօտների մէջ . մանաւանդ  
այդ զիրքերից, որովհետեւ զոքա պարունակածնն  
խրեանց մէջը և շատ անհամ անեկդօտներ, որոնց  
մեր աշխատութեան դուրս ենք թողել : Աթէ ան-  
խտիր ներմուծելու լինենք բոլոր պատահած անեկ-  
դօտները, նոյն թիւր այնքան մէծ էր, որ մեր զիր-  
քը այն ժամանակը երեք անդամ աւելի հաստ կլի-  
նէր, քանի թէ այժմ է :

**Որ** քան մ.լ ծանօթ են այս օրինակ հրա-  
տարակութիւններ զանազան լեզուներով, կարող ենք

ասել, որ նոցա մէջ անեկդօտների դասաւորութեան վերայ ամեննեխն ուշք չէ դարձուցված : Հատերը հաւաքելին միենոյն նիւթի անեկդոտներ և գրքի մէջ տուել են նոցա որոշ տեղը . ոմանք անդամ դորա վերայ ուշշակրութիւն չեն դարձրել , այլ դասաւորել են , ինչպէս պատահել է , թէ՛ այս և թէ՛ այն դասաւորութիւնը սառցնում են ընթերցողի մէջ ծիծագիլու ախորժակը և միանգամայն կորյնում են իւրեանց համնուհոտք : - Գուցէ մեղ ևս չէ յաջողել մի պատշաճ և զեղեցիկ դասաւորութիւն տալ նոցա , բայց թող ընթերցողը դատէ , թէ որքան մենք հասած ենք մեր նպատակին : Երբէք նման անեկդօտներ չպէտք է պատահեն միմեանց . - Նոքա ձանձրայնում են մարդուն , ինչպէս միատեսակ կերակութերը . Այլ միշտ պէտք է զանազանութին միմեանցից . այդպէս ահա . Մօլլայ - Նասրէդղինի ստախօսութեան մօտ դուք կդանէք Նասղօչօնի սրամութիւնը . Անզլիայու . սառնարատութիւնից յետոյ դուք կտեսնէք Հայքահանային . սիրահարական անեկդօտի կողքին ձեղ կպատահի հարցաքննուող աշակերտը . . . . . :

**Ս**եր անեկդօտները երկու մասն են բաժանուած : Առաջին մասնում չէ երեսում մի որոշ , յայտանի անձնաւորութիւն , այլ բոլորը ընդհանրացած է : Իսկ երկրորդում խառն են բոլորովին , կան ընդհանուր անեկդօտներ մասնաւոր անձնի և գուարձախօսների : - Մասնաւոր անձները սոքա են՝ Նիւտօն , Վոլտեր , Ֆօնտրնէլը , Նապօլէօն , Հենրիկոս IV-դ , Լիւտէր , Յովանէփ II-դ , Լուդովիկոս XIV-դ : Զուարձախօսները՝ Եզօպոս , Բալակիրե , Մ. Նասրէդղին :

**Ա**շխատեցինք որ ևէ անեկդօտ լոյս ընծայել այն ժողովնի բարբառով , որի մէջ նա աեղի է ունեցած՝ նորան առաւել կինդանութիւն և զեղեցկութիւն տալու համար , թէպէտ այս մասնում սակաւ յաջողուած լինէր մեզ :

Ուրախ և զուարթ ծիծաղը շատ թանկագին բան է , և մեր ժամանակում նորա յարուցանելլ հեշտ չէ : Մենք հաւաստի ենք , որ մեր անեկդօտները որ ևէ փոքրիկ հասարակութեան և ընտանեկան նեղ շրջաններում կարող են ծիծաղ արտադրել նոցա մէջ , որոնք գեռ կատարելապէս չեն զրկուած ծիծաղիլու լինդունակութիւնից : Որքան պարապ ժամեր կորչում են քնի և տաղտկութեան մէջ . ի՞նչ են անում մեր փաճառ ականները ամառը իւրեանց խանութներում : Ահա՝ մի զիբք , որ կարող է պիտանի լինել այդպիսի ժամերում և օգտակար համարուիլ : - Իսկ եթէ մեր „Անեկդօտները“ մի թեթև զարկ կտար ընթերցասիրութեանը , սապա մենք կիսով չափ հասած կլինէինք մեր նպատակին :

**Ա**նեկդօտները անվերջանալի են թէ անցեալում և թէ անցեալից յետոյ : Ուստի մենք կաշխատենք շարունակել անեկդօտներ ժողովելլ : Միւս հասորը մենք կազմելու ենք այն անեկդօտներից միայն , որոնք չայի կեանքին են պատկանում : Սորանով կամեցած կինք , որքան հնար է ուսումնասիրել Հայն :

# ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

## I. ՄԱՐԴ

Մի մարդ կարդումէր անեկզօտների ղիբքը, և  
ինչքան կարդում էր՝ սյնքան ծիծաղում էր. Մէկ  
ուրիշը հարցրեց. „Այ մարդ, ինչի՞ ևս ծիծաղում:  
— Ինչպէս ծիծաղեմ, պատասխան տուեց առա-  
ջնորդ, ևս գիրը մեռածի սուներն էլ ժամանակ:

\* \*

Երկու եղբայրներ այնպէս նման էին միմեանց, որ  
անգամ զբացին չէր կարողանում զանազանել մէկը  
միւսից. Նոյսնից մէկը մեռաւ: Միւսին պատահեց  
ծանօթը և ասաց. „Թէ Ասոսձ կ'սիրես, ասա՛ ինձ,  
դու մեռար, թէ քո եղբայր:“

\* \*

Սոր էր լուսացել: Միացքանի մարդը պատա-  
հուց փողոցումը մի սապատողի (Հուղեան) և ասաց.  
— Պետրոս, այս օր ինչ վաղես բեռնաւորուել:

— Այս՝ զեռ վաղէ քեզ համար, - պատասխանեց սապատողը, - որովհետեւ դու զեռ քո մէկ լուսամուտն ես բաց արել:

\* \*

Պ'արոն բժիշկ, ինչ պէսք է անեմ դիշերները ինձ մի բան է երևում:

— Ինչ կերպարանք ունի, - հարցրեց բժիշկը:  
 — Իշխ կերպարանք ունէ:  
 — Ուրեմն, տուն գնա, - ասաց բժիշկը, և գինի չխմես, դու հարբած ես էլել և վախեցել ես քո սեփական ստուերից:

\* \*

Գիշերով ման էր գալիս վիողոցումն մի հարբած մարդ: Նա աչքերը բարձրացրեց գէսի երկինք, և սեսնելով պայծառ լուսինը, հարցրեց մի անցաւորի. „Էն ինչ արկնքումը!“ Անցաւորը. որ նոյնպէս դիշնուցը թմրած էր, նացեց լուսին և ասաց „Է՞ է՞ն.... ես տեղացի չեմ!“

\* \*

Բիշէթ, պ'արոն, - հարցրեց կօնդուկտօրը մի պարոնի, որ կարծում էր, թէ իրան երեսից էլ կ'ձանաչէին, որովհետեւ նա ամբողջ տարին անց ու դարձ էր անում այդ ճանապարհով:

— Իմ երեսս իմ բիշէթն է, - ասաց նա առանց բարկանալու:

— Եթէ այդպէս է, - ասաց կօնդուկտօրը, - իմ պարտականութիւնն է նշան դնել բոլոր նստողների բիշէթների վերայ. և այս խօսքերով նա ապտակ խփեց նորա երեսին:

\* \*

Երկու երեխաներ նստած էին մի տեղ: Հարցրեցին նոցանից մեծին. „Աս քու աղքերն ա...“

— Զէ, ես եմ դրա աղքերը. պատասխանեց մեծը:

\* \*

Ներկարարի մօտ մէկը թել տարաւ և ասաց.

— Այս թելը այնպիսի գոյնով ներկի՛ր, որ ո՛չ սել լինի, ոչ սպիտակի, ոչ կարմիր, ոչ գեղին, . . . մի խօսքով այնպիսի գոյն ունենայ, որ եղած գոյներից ո՛չ մէկը չ'լինի:

— Շատ լաւ, - ասաց ներկարարը:

— Ես ո՞ր օրը գամ ստանալու:

— Այնպիսի՛ օր արի՛, որ ո՛չ երկուշաբթի լինի, ոչ երեքշաբթի, ոչ չորեքշաբթի, ոչ հինգշաբթի... մի խօսքով այնպիսի օր ա՛րի, որ եղած օրերից ո՛չ մէկը չ'լինի:

\* \* \*

Սեղանաւորի (զարդարված) խանութը ներս մտաւ  
մի գիւղացի և հարցրեց. պարոն, դուք ի՞նչ էք ծա-  
խում: Սեղանաւորը կամեցաւ մի վորք ծիծալել  
զիւղացու վերայ և ասաց.

— Ես իշխ գլուխ եմ ծախում:

— Երեխ, թէ լաւ առուտուր ունիք դուք, ասաց  
զիւղացին, որովհետեւ ձեր խանութում մէկ իշխ պը-  
լուխ է մնացել միայն:

\* \* \*

X Մէկը տեսութիւն դնաց մի հարուստի մօա և մի  
թիզ հեռու նատեց նորանից: Այս բանի վերայ հա-  
րուստը նեղացաւ և ասաց. „ի՞նչքան կ'լինի քո և  
իշխ մէջ եղած զանազանութիւնը:“

— Մի թիզ, պատասխանեց առաջինը:

\* \* \*

Դիլիժանաւում նատած էին երկու մարդիկ: Մէկը  
միւսին մեղաղբումը, թէ նա զողացել է իւր թաշ-  
կինակը, բայց երբ շուտով գտաւ միւս զրպանուժ,  
ներողութիւն խնդրեց: Միւսը սորան պատասխա-  
տուեց մեծ հանդարտութիւնով. „միք շփոթուի  
մենք երկուսս էլ սխալուած ենք. դուք ինձ գող կար-  
ծեցիք, իսկ ես ձեղ կարծեցի մի ազնիւ պարոն:“

\* \* \*

Համբ Յովսէփը պէտք է ճաշ ուտեր Գրիգորի  
տանը: Գրիգորը ուղարկեց իւր ինոջը, որ հիւրին  
ընկունէր հիւրասենեակում: Բայց ներս է մտնում  
կարապեալ, և կինը, կարծելով, թէ դա էր համբ  
Յովսէփը, սկսեց նորա հետ խօսել մատներով: Կարա-  
պեսն էլ մի և նոյն կերպով նորան պատասխան էր  
տալիս, և նոքա տասը բոպէ այդպէս խօսումին մի-  
մեանց հետ, երբ նոյա մօտ ներս մտաւ Գրիգորը:  
Վինը ասաց Գրիգորին:

— Ամբողջ երկու ժամ ես խօսումի այս համբի հետ:

— Ի՞նչպէս, ասաց կարապեալ կնոջը. իսկ ես կար-  
ծումի թէ դուք համբ էք:

\* \* \*

Մէկին տանումին խեղգելու: Մէկ պարզամիտ  
մարդ հարցրեց մի ուրիշի:

— Ի՞նչ է արել այս մարդը. որ արժանացել է կա-  
խաղանին:

— Մ' աններելի յանցանկ, պատասխանեց միւսը,  
երեակայեցէք դուք, սիրելիս, այս չարազործը՝ ան-  
ցեալ տարի եկած ձիւնը հաւաքել և չորացրել է  
փոնումը, իսկ այս տարի բոլորը ծախել է:

— Օ՛չ, աններելի չարազործ, դոչեց պարզամիտ

Հարցնողը, և միայն պէտք է կախուի՞:

\* \*

Երեխան լաց էր լինում օրօրոցումը, և մայրը բարկանալով ասաց հօրը. „վե՛ր կաց, հիմի դո՛ւն օրօրի՛, կէսը քունն ա, կէսը իմը. . . . Հայրը շուռ եկաւ միւս կողքի վերայ և ասաց. „թող իմ կէսը լաց ըլի, դուն քու կէսն օրօրի՛:“

\* \*

Վեց տարեկան օրիորդը խաղումէր փոքրիկ կատուի և տիկինի հետ:Մէկը հարցրեց տորսն. „կատուին աւելի շատ ես սիրում, թէ տիկինդէ՞ւ Երեխան հարցնողի ականջում պատասխանեց. „կատուին աւելի շատ եմ սիրում, համա տիկինիս ոչինչ չասես:“

\* \*

Հարբեցողը եկաւ բժշկի մօտ և գանգատումէր աչքացաւից:

- Դու կամ պիտի ձեռք վերցնես արաղից, կամ պէտք է կուրանայ քո աչքը, ասաց բժիշկը:
- Եթէ այդպէս է, ուրեմն մնաս բարով, ոչք-ձայն տուեց հարբեցողը:

\* \*

— Ի՞նչ ես մտածում:

— Մտածումեմ, թէ յիմարի հարցմոնքին ի՞նչ պէս պատասխան տամ:

\* \*

— Ինչի՞ ես տարակուսկած:

— Եշս սատկեց:

— Ի՞նչ անենք աղբեր, էս օր ա. թէ էդուց, մենք էլ նրա ճամփովը պէտք է գնանք:

\* \*

Մի վաճառական՝ սովորութիւնն ուներ միշտ հարցնել պատճառը իւր պաշտօնակատարներից, թէ ինչո՞ւ նոքա ուշանումէին: Նոցա ներելով, նա միշտ ասումէր վերջը. „շատ լաւ, բայց խնդրեմ, միւս անդամ էլ չլինի այդպիսի բան:“

— Ի՞նչու ուշացար, հարցրեց մի առաւօտ վաճառս ինքու:

Այսօր առաւօտը ինձ տղայ ծնուեց, պատասխանն էր պաշտօնակատարի:

— Շատ լաւ, ասաց վաճառականը, բայց, խնդրեմ, միւս անդամ էլ չլինի այդպիսի բան:



\* \*

Աղվոկատին ասաց մի երիտասարդ:  
 — Հայրս մեռաւ և կտակ գրեց:  
 — Զի կարելի, ասաց աղվոկատը, երբէք լսուած  
 չէ: Դուք կամենումէիք ասել, որ ձեր հայրը կտակ  
 գրեց և յետոյ մեռաւ... այնպէս չէ:

\* \*

Մարդու մէկը երազում սատանայ է տեսնում,  
 բոնումէ նորա միրուքից և ասում: „Անիծուած, մարդ  
 կերանցը խաբելու համար դու երկարացնումես մի-  
 րուքը . . . . և երբ կամենումէր ապտակ խփել նորա  
 երեսին, յանկարծ զարթեցաւ քնիցը և տեսաւ իւր  
 միրուքը իւր ձեռքին բոնած:

\* \*

Մէկը գաղետում տակել էր տուել հետեւելլ.  
 „Գնում եմ Սոսկվայ, ով կամենումէ, թող գայ  
 հետո:“ Կէս զիշերին որա դուռը թրխկ-թխկա-  
 ցնումեն, սա զարթնումէ և զիշերով եկողը հարց-  
 նումէ: „Պարոն, դուք էք գնում Սոսկվայ:“  
 — Այո, ասումէ միւսը:  
 — Ես էլ էի ուզում ձեզ հետ գտալ, բայց նե-  
 րողութիւն. էլ չեմ կարող գալ-խօսեց եկողը:

\* \*

— Պու ինչ արեցիր կովում: Հարցրեցին զինուորին:  
 — Թշնամու ոտը կարեցի, պատասխանեց նա:;  
 — Բայց ինչ չու գլուխը չ'կտրեցիր:  
 — Որովհետեւ գլուխն արդէն կտրածէր:

\* \*

Մի ընկերութիւն կազմեցին. անունը ղրեցին  
 „կոպէկանոց ընկերութիւն:“  
 — Բայց, պարոններ, ինչպէս կարելի է, ասաց  
 խորհրդի սնդամը, կարելի է մեր կոպէկը միլիոն է  
 դառնում:

\* \*

Մի գող պէտքէ խեղդէին, և քահանան խոս-  
 տովանեցնումէր:

— Որդի, ասումէր քահանան, մենք ամենքս մահ-  
 կանացու կնք:

— Ճշմարիտ է, ասաց գողը, համա ձեզ որ չեն  
 խեղդում: . . .

\* \*

Գիւղացին իւր իշով գնումէր: Մի երիտասարդ  
 կամենալով ծաղըել նորան, հարցրեց.

— Ուր էք գնում երկուսդ միասին գիւղացին  
պատասխան տուեց.

— Երեքիս համար խոտ բերելու:

\* \*

Մէկ իւր բարեկամին զամբիւղով (շարունակայ.)  
լոռեր ուղարկեց և մի նամակ էլ զրեց: Տանողը ձաւ-  
նապարհին քնեց, լոռերը դուրս թռան զամբիւղեց  
և լոկ նամակով գնաց: Նամակ կարդացողը հարցրեց.

— Այստեղ լոռեր կա՞ն:

— Փա՛ռք Աստուծոյ, որ լոռերը ըդեղ լցա ըն-  
կան, ևս հենց զիտէի թէ թռել են, ասաց տանողը:

\* \*

Վարդապետը, քահանան և սարկաւազը ձաւ-  
նապարհին գողերից կողոպտուած գալիս են մի զիւղ  
մի պառաւի տուն, և խնդրումեն կերակուր: Պա-  
ռաւը մի սադի ձու ուներ միայն, բերեց, զրեց և  
ցա առջելը: Նոցա մէջ վէճ ծագեցաւ, թէ ո՛վ ու-  
տեր ձուն և երկար վիճելուց յիտոյ վարդապետը  
սուածարիեց. ով մեզանից զօրաւոր խօսքեր կ'ասէ  
սուրբ գըքից, թող նա ուտէ, և նա ասաց. „Ղազարէ,  
արի ե՛կ արտաքս:“ Այս ասելով ձուն զրեց մէջ  
տեղը, Քահանան ասաց. „լուծէք զդա, և թողէք եր-  
թալ:“ և սկսեց կճպել ձուն: Իսկ սարկաւազը

վեր առաւ ձուն և „Մուտ յուրախութիւն տեառն  
քո՛ւ ասելով՝ կուլ տուեց:

\* \*

Գժուած ուղովը մի մարդ ներս ձգեց օտարի  
տունը: Այդ տեղ նա նայեց չորս կողմբ և ասաց  
Այս, ներողութիւն, ուղահ գալիս. . . . .

\* \*

— Պարոն Մարտիրոս, ի՞նչպէս չէք ամաչում քնել  
այսքան երկար ժամանակ, երեք ժամէ, որ արեգակը  
դուրսէ եկել:

— Լաւ, ի՞նչէ, արեգակը երեկոյին է քնում, իսկ  
ևս մինչեւ կէս զիշերը նստած էի:

\* \*

Ժշատը իւր հիւրի առաջեւ զրեց մի ամանով  
սառածիկ ջրալի լորի: Հիւրը սեղանի վերայ սկսեց հա-  
նել շորերը: Ժշատը հարցրեց. „ի՞նչես անում:“

— Ես լորու ջրի մէջը պէտքէ լողանամ, հատիկ-  
ները բռնելու համար, - պատասխանեց հիւրը:

\* \*

Մի ընտանիքի տուել էին . . . . . ներօն  
(Ք Հայել) մականունը. Մէկ օր այդ ընտանիքից Փ

կին կանգնած էր փողոցում, յիսի ավին, և չէր  
սրտապնդվում դուրս գնալ միւս ափը։ Այդ կողմբ  
անցնումէր մի Ռուս։ Սա, տեսնելով կոտջ զրութիւնը  
ասաց նորան։

— Ե՞րօս։ - Զքուի վիս հարեանի անունը։ - ա-  
սաց կինը, Ռուսը որտեղից գիտէր, թէ ես Ներօսենց  
հարսն եմ։

\* \*

— Տէր Աստուած, օգնի՛ր ինձ, - աղաղակեց դեղ  
քսող նկարիչը որ փաքը էր մնացել վեր էր ընկում  
վերին էտաժից, բայց խարյն ոտին տեղ դանելով՝  
ձայն տուեց, „Դէ, հիմի էլ չի հարկաւոր։“

\* \*

Մի աշակերտի ծաղրումէին ընկերները, և  
ասում։

— Զ՞ս ամաջում. երեք տարի է առաջին դասա-  
տանն ես ընկած։

— Ի՞նչու պէտք է ամաջմ, ասաց ծոյլ աշակերտը.  
իմ վարժապետը ահա երեսուն տարի է առաջին  
դասատանն է։

\* \*

Ճողովում խորհրդականներից մէկը քնեց խոր-  
հրդի ժամանակը, երբ ամէնքը յայտնեցին իւրեանց

Կարծիքը մի գործի մասին, հարցրեցին և քննածին,  
„պա՛րոն, ձեր կարծիքն ի՞նչպէս է։“ Քննածը աչքերը  
շրիշիելով ասաց,

— Թողլ կախուի, թողլ կախուի, ի՞նչպէս առաջ է, պարոն,  
Բայց խօսքը արտի վերաց է, պարոն,  
— Ուրեմն, թողլ հնձուի, ասաց քննածը,

\* \*

Ամօթ չէ ձիուց վեր ընկար։  
— Ե՛ս պարոն, մթէ կարելի էր մնալ երկնքի  
և երկրի մէջ։

\* \*

Մէկ շատախօս խօսումէր մի մարդու հետ։  
— Կարելի է ձեզ ձանձրացրեցի, - ասաց վերջը  
շատախօսը։  
— Խնդրեմ խօսեցէք, - պատասխանեց միւսը, - իս  
ձեզ մեմ ականջ ընտամ։

\*

Երկու բարեկամներ թղթակցութիւն ունեին մի-  
մեանց հետ։

— Մէկը դրեց նամակումը, „նամակդ թուով  
գրի՛ր։“ Միւսը պատասխանը դրեց՝ և վերջումը  
աւելցրեց, թիւ։

\* \*

Քահանան քարոզել սկզբումը ասաց. դու ով  
ես: Այս խօսքերից յետոյ նա սպասեց, որ ժողովուր-  
դը մտածէր և լաւ հասկանար քարոզել միտքը:  
Բայց մի օֆիցեր, որի վերայ քարոզելը դցել էր իւր  
աչքը, եկաւ մէջ տեղը, կարծելով, թէ իրան էր  
հարցնում և ասաց բարձր ձայնով. „Ես, ես տաս-  
ներրորդ պոլիի օֆիցերն եմ, եկելեմ այս տեղ պաշ-  
տօնական դործի համար:”

\* \*

✓ Դատաւորը ասումէր մի կնոջ.

— Տիկին, ամօթ չ' ձեզ, որ այսպէս արիւն  
թաթախ էք արել ձեր աղամարդի երեսը, չ' որ  
սա տան մեծն է, սա ձեր գլուխն է:

— Բայց միթէ ես չ' կարող քորել իմ պլու-  
խը-պատասխանեց կինը:

\* \*

Կոյրը, անդամնալցօծը և աղքատը ընկերացել  
էին: Սոքա մի աման լրի ունեին ուտելու: Կոյրը  
ասաց անդամնալուծին:

— Մէծ մէծ թէքէք մի դնի բերանդ,

— Առ' ևս կայ, ասաց անդամնալոյցը - թէ չ' վեր  
կթռչնեմ էնպէս քացի կ' խփեմ որ տեղն ու տեղդ

Հողիդ կ' աւանդես,

— Ապա՞նի, ես ջուղաբ կ' տամ, - ասաց աղքատը:

\* \*

Ապիրավէրի խանութը ներս է մտնում մի  
ծառայ: Նա տեսնումէ աթոռի վերայ դրած սափ-  
րավէրի գոգնոյը և ածելին, բայց ինքը չ' կար այն-  
տեղ: Այն բոպէին բալիս էր գէպի այդ խանութը  
մի քաղաքացի պարոն: Ծառան մտածեց ծիծաղել  
նորա վերայ ու մի բոպէումը նա կապեց գոգնոյը և  
ներս ընդունեց եկողին:

— Ապիրեցէք երեսս, ասաց նա և նստեց:

— Ծառան սապոն քսեց նորա երեսին սպասե-  
լով՝ որ շուտով կ' գայ սափրավէրը և կ' վերջայնէ  
սկսածը: Բայց քաղաքացին բոլորովին սապոնի մէջն  
էր, իսկ սափրավէրը գեռ ևս չ' ը երեսում: Ծա-  
ռան շուտով զեն գցեց գոգնոյը և գուրս էր փախ-  
չում գունովը:

— Ուր, հարցրեց զարմացած քաղաքացին, - սափ-  
րեցէք, ասումեմ:

— Ամենելին ո՛չ, պա՛րոն, այս տեղ միայն սապոն  
են քսում: Իսկ սափրումեն աշ'ա կողքի խանու-  
թում ասաց ծառան և անհետացաւ:



\* \* \*  
 Ա Ականքիքում ինչ որ վնասվումէր, միշտ  
 ծառային էին մեղադրում: Տան տիկինը ծննդական  
 պառկեց անկողնում, և ծառան ասաց. „Հիշ, էս  
 էլ ինձ կ'մեղադրեն:“

\* \* \*  
 Պատերազմում առնուեցաւ մի քաղաք, որի  
 պարապի վերայ քնած էր մի մարդ: Յանկարծ եկաւ  
 թնդանօթի զունդը և թույրեց նորա զլուխը: Սպաս  
 նուածի ընկերը, որ այս բանը տեսաւ, ասաց.  
 „Ինչպէս կ'զարմանայ իմ ընկերը, երբ զարթնէ ու  
 տեսնէ, որ էլ զլուխ չունի:“

\* \* \*  
 Ա Արդ և կին դուրս էին նայում լուսամուտից,  
 երբ բարձր ձայնով էշը զռաց:  
 — Լումես, գէորդ, ասաց կինը մարդուն. քո  
 բարեկամը զըռումէ:  
 — Բոլորովին ձշմարիտ է, պատասխանեց ամուսի-  
 նը. միայն կնոջ կողմից է բարեկամ:

\* \* \*  
 Օ Օտուան նախասենեակում մաքրումէր տիրոջ

Հ Վերարկուն: Այդ միջոցին ներս մտաւ նամակը ձեռ-  
 քին մի անձանօթ մարդ, և ասաց թէ պատասխանը  
 հարկուոր էր խեղոն: Նամակը ձեռքին ծառան  
 շտապով ներս վաղեց գէպի իւր տիրոջ սկնեակը:  
 Տէրը բաց արեց նամակը և ըդհոնէր ինչ մտածել:  
 Նամակումը զրած էր. „Հեռաննումէ վերարկուն, մնում  
 է նամակը:“ Տէրը և ծառան շուտով զուրս եկան  
 դէպի նախասենեակը, և այն տեղ տեսան որ նամակ  
 բերողը, ինչպէս և կախ արած վերարկուն, անհետա-  
 ցել էին: Վերարկուի տեղը զրած էր մի թղթի կտոր  
 խոշոր տառերով զրած. „Վերաբրկուն ԳնԱՅ:“

\* \*

— Ա Վի փոքր էլ հանի լեզուդ, ասումէր բժիշկը  
 հիւսնդ կնոջ - մի փոքր էլ-էլ-էլ: . . . . .

— Ա յս ինչ է, բժիշկ, ձայն տուեց հիւսնդը. մի-  
 թէ դուք կարծումէք, թէ կնոջ լեզուին վերջ չկ'այ:

\* \*

— Ա րադը ձեր ամենաչար թշնամին է:  
 — Ա յո, բայց տէր՝ հայր, միթէ աւետարանում  
 է զրած. „սիրեցէք ձեր թշնամիներին:“  
 — Ա յո, դբած է, բայց ոչ մեկ տեղ չէ զրած,  
 թէ թշնամիներին պէտք է կուլ տալ:

Մի վաղոնում նստած էին երկու կին և մի  
տղամարդք: Կանայքը անդադար խօսում էին, վերջա-  
պէս նոցանից մէկը տղամարդին հարցրեց:

— Արդեօք չե՞նք խանգարում ձեզ:

— Ո՛չ, տիկին, ես արդէն քսան տարի է պսակ-  
ված եմ:

\* \* \*

Գիւղացին անտառում վայս էր կարում, եկաւ  
մի փոքր զետի ափիը և թրջում էր չորացած հացը:  
Պատահմունքով հացը ջուրն ընկաւ:

— Ոնց որ հացը տարար, ընմնց էլ փետը դու  
կատրի, ասաց բարկացած զիւղացին և կացինն էլ  
դցեց հացի ետելից:

\* \* \*

— Ինչ անեմ, ո՞ր ջուրն ընկնեմ:  
— Մեր Քոից աւել ուրիշ ջուր չ'ունենք ո՞ւ....

\* \* \*

— Դուք վատ էք հաղնուած, - ասաց դաստառը  
վիացին, կալատուչին, - այդպէս չպէտք է գատարան գաք:  
— Պա՛րոն դատաւոր, ես ձեզանից վատ չեմ  
հաղնուած:

— Ի՞նչպէս թէ . . .

— Որովհետեւ դուք ձեր բանելու շորերումն էք,  
ես էլ իմումը:

\* \*

ԵՐԵԽԱՆ: Մա՛մի, քու տու որ մենձանամ, ինձ օ  
էլ մարդ կասե՞ն:

ՀԱՅՐԻ: Են վախտը եքայ էշ կինես:

ԵՐԵԽԱՆ: Ըստեց, ոնց որ դուն:

\* \*

Օրէնք կար, որ մի տարի սլէտը է անցկենար  
տղամարդի մահից յետոյ, որ այրի կինը պսակուէր:  
Մի այրի կին իւր ամուսնու մահից երեք ամիս յետոյ  
եկաւ քաղաքադլսի մօտ և իրաւոնք էր խնդրում  
պսակուելու: Երբ քաղաքադլուխը կնոջը յայտնեց  
օրէնքը, , ես զիտեմ, որ իմ ամուսնու մահից անցել է  
երեք ամիս, բայց չէ ո՞ր նա ինն ամիս էլ հիւանդ  
էր, “ ասաց այրի կինը:

\* \*

Մի խեղճ՝ մարդու տունը դիւելով դող մտաւ:  
Տղամարդը կնոջը ասաց, - վ'այ, ի՞նչ դժուար բան է  
օտարութիւնը, ես ամանջումեմ, որ դողը ոչինչ չէ  
դանիք: Կինը ասաց.

— Եղ թողնենք, դու մի բարձր ձեհսով վախեցրու,  
կարելի է, ուրիշն անից դողացածը էս անդ թողնի:

\* \*

— Մերձակայ զիւղումը թաղմանը գնացած և  
հողեհացին բաւական հարբած մի զիւղական քառ  
հանոյ, սայում նստած, զնումեր զիշերով իւր  
տունը: Քահանան մի անդամ բարձրացրեց զլուխը,  
և տեսնելով երկնքումը շողշողուն աստղերի խումբը,  
հարցրեց սայլորդին: „Էն ինչա վերել:

— Քեկեխ են ուսումն տէր - տէր, պատասխան տըւ  
եց սայլորդը:

— Դէ, սէլի զլուխը դէնը քշի, ասաց քահանան:

\* \*

Աղքատը սովորութիւն էր արել համի ձեւա-  
նալ: Մէկը այդ աղքատին ողորմութիւն տալուց յե-  
տոյ հարցրեց: Քանի տարի է որ դու համի ես:

— Երկու տարի է, - սպատասխանեց աղքատը:

\* \*

Մի քանի մարդկերանց մէջը կար մի շատախօս,  
որ առանց գաֆարելու խօսում էր իւր մօր մասին,  
զովելով նորան: Ոչ ոք չգիտէր, թէ ինչպէս վերջ  
գնէր նորա խօսակցութեանը: Վերջապէս մէկը հարց-  
րեց շատախօսին:

— Գիտէք ինչ պատահեցաւ ձեր մօրը, երբ նա  
19 սարեկան էր: Այս հարցը շատ զարմացրեց շա-  
տախօսին և նա պատասխանեց: „ոչ չգիտէմ:“

— Նա մտաւ 20-երրորդ տարուայ մէջ, ասաց  
հարցնողը:

Մի գողի վկեց թոկ անցկացրեցին խեղդելու, և  
գողը ասաց: „Էս անտէրը քիչ մնաց, որ խեղդուէի:“

\* \*

Ծառան զիրք էր կարդում: և տէրը հարցրեց.

— Եղ զիրքը ո՞ւմ զրածն է: Ծառան ասաց: „ա-  
զա, ինչի ես վրես ծիծաղում: միթէ չես տեսնում,  
որ տպած է:“

\*

Աւելներ ծախողը ներս մնաւ սափրանոցը երեւ  
որ սափրելու համար: Սափրավերը յետ արեց մէկ  
աւելը, և ծախողի երեսը սափրելուց յետոյ հարցրեց:

— Ինչ արժէ աւելը:

— Երկու կոպէկ, - ասաց ծախողը:

— Զէ, ասաց սափրավերը, ես քեզ մի կոպէկ  
էտամ: իսկ եթէ այդ քիչ է, վեր առ քո աւելը:  
Ծախողը վեր առաւ աւելը և հարցրեց,

— Ինչքան պէտք է տամ սափրելու գին:

Երկու կոպէկ:

— Չէ, -ասաց ծախողը, -ես քեզ մի կոպէկ կտամ, իսկ եթէ այդ քիչ է, յետ տուր ուրեմն իմ մորուքը:

\* \*

— Կարելի՞ է արդեօք ազատուել թշնամներից:

— Շատ հեշտ է, հարկաւոր է միայն բնութիւն չունենալ և ոչինչ բանի վերայ չմտածել:

\* \*

**Մէկը** ասաց միւսին. վարդի գոյնով բադ տեսե՞լ ես:

— Ո՛չ, պատասխանեց միւսը:

— Եթէ այդպէս է, -ասաց առաջնը, -արի՞ քեզ տանեմ ցոյց տամ և տարաւ երեք օրուայ ձանապարհ: Երբ մօտեցան տանը, բաց արեց և ցոյց տուեց սպիտակ բարդերը, և լունափափ վարդի գոյն է, “Հարցրեց երկրորդը: Ի՞նչ ես ասեմ, ասաց առաջնը, մի՞ թէ սպիտակ վարդ չես տեսել:”

\* \*

**Մէկը** մի նամակ տարաւ փոշոր: Նամակի վերջումը գրել էր. „մօռացայ քո անունդ և աղդդ, չկարողացայ գրել նամակի երեսին. դու բնքդ գնա փոշոր և հարցրու որ տոանաս այս նամակը:”

\* \*

Ծաղրածու մարդուն հարցրեցին. „Ել ինչի՞ Հանաք չես անում:”

— Զարարի մէջն եմ, պատասխանեց, -քաղցածու թիւնից որ մեռնելիս ըլեմ, ասումեն, Հանաք ես անում:

\* \*

**Երկու** ճանապարհորդ մի հաւ ունեին ուտելու: Մէկը ասաց միւսին. „այս հաւը մեզ բաւական չէ, թող ով լաւ երազ տեսնէ, նա ուտէ:” Այս ասողը քնեց, իսկ միւսը կերաւ հաւը: Առաջինը երբ զարթեց ասաց. „զարմանալի երազ տեսայ. ինձ հրեշտակները տանում էին երկինքը:” Հաւով կտացածը ասաց, ես Ել տեսայ քեզ, որ բարձրանում էիր և իմ մէջն ասացի. նա ել չի ցած գայ և կերայ հաւը:

\*

**Փողոցումը** անց էր կենում մի երիտասարդ հագած միւսանց վերայ երկու սեւ սերթուկ:

— Ինչու դուք այդպիսի շոգում երկու սերթուկ էք հագել, հարցրեց նորան ծանօթը:

— Որովհետեւ երեկ մօրաքոյրս մեռաւ, այսօր հօրեղբայրս:

\* \*

**Մէկը** գանգատում էր ժլատին. էնողէս զըժուար տեղն եմ ընկել, որ կամ թուանքով պէտք է դլուխա սպանեմ; կտիր թոկով պէտք է խեղջուեմ, և կամ ջուրը պէտք է ընկնեմ: Ժլատոր ասաց, աւելի լաւ է ջուրն ընկիր, ծախսերից կաղատուես:

\* \*

**Տատ—մօրը հարցրեցին.**

— **Մկրտութեան համար քանի բան է հարկաւոր:**

— **Երեք բան:**

— **Ու. երկու բան, ջուրը և Աստուծոյ խօսքը:**

**Տատ—մայրը հարցրեց.**

— **Եթէ երեխան չնի, ումը կմիլուէք, այ ձեղ երրորդը:**

\* \*

**Մարդու մէկը ներս մտաւ հիւրանոցը և հարցրեց ծառային.**

— **Կարելի՞ է որ իմ փողով ճաշ ուտացնես ինձ:**

— **Կարելի է, պատասխանեց. և լաւ ճաշ զրեց նորա առաջեր:**

**Երբ ճաշը վերջացրեց, նա հանեց դրապանից երկու կոսէկ և տուեց: Ծառան նայեց երեխին, զար-**

մանալով իսկ հիւրը ասաց, ի՞նչ ես մտիկ տալիս երեսիս, ես քեզ. հարցրեցի թէ կարելի՞ է, որ իմ փողով ճաշ ուտացնես, իմ փողս: Էս էւ աւել շունիմ:

\* \*

**ԳՈ.ՏՍ.ԽՈՐԸ: Ի՞նչեց դիմէք, որ այս ձեր թաշ կինակն է:**

**ԳՈ.ՆԳ.Պ.ՏՈՒՐԸ: Դորա ձեից, և նորանից որ իս անձան մասնաւուց, դորանից մի քանիսն էլ ունիմ գրապանումա:**

**ԳՈ.ՏԱ.ՔՈՐԸ: Այդպէս չի կարելի հաստատել, ես էլ ունիմ գրապանումն հէնց այսպիսի թաշկինակ:**

**ԳՈ.ՆԳ.Պ.ՏՈՒՐԸ: Չատ կարելի է, ինձանից շատ են գողացել այդպիսի թաշկինակներ:**

\* \*

**Ճլտուր ներս մտաւ եկեղեցին, այս միջոցին, երբ քահանան քարոզում էր ողորմութեան վերայ: Նա ասաց, էս տէրաէրը էնողէս է քարոզում, որ հէնց ես էլ պէտք է սկսեմ աղքատութիւնը:**

\* \*

**Մէկ մէծ աւաղանի մէջ ամառ ժամանակ**

Խեղդուեցին, մէկը միւսից յետոյ, երկու կանայք,  
Տեղական կառավարիչը զրեց այդ տեղ այս յայտա-  
րարութիւնը. „ով կ'համարձակուի խեղդուել այս  
հաւուգում, սաստիկ կպատժուի օրէնքով!“

\* \*

**Պառաւը շուտ շուտ ջրով լցնում էր ամանը**  
և տանում էր քահանայի մօտ, որ նա օրհնէր,  
որովհետեւ ասում էր, թէ կատուի գունչը դիսաւ  
այս կամ այն ամանին; Վերջապէս քահանան ձանձա-  
րանալով, մէկ օր ասաց պառաւին. „ինչը էսքան  
նեղացնում ես և ինձ համբերութիւնից հանում  
գնա՛, բեր՝ էս տեղ քու կատուն, որ օրհնեմ նորա  
դունչը!“

\* \*

**Տան տէրը ոտնացաւ ունէր, նա նստած էր մի**  
գիշեր վառարանի մօտ: Ներս է մտնում սննեակը մի  
լաւ հագնուած մարդ և ասում է. „պ'արոն, ես  
տեսնումեմ, որ ձեր ծառան գնացել է փողոցը և  
սրահի դուռը բաց է թողել, էս տեղ շատ հեշտ  
կարող է ներս մտնել մի դող, կ'հանդինէ այս մոմերը,  
ահա՛ էս պէս և դուրս կ'փախչէ էս երկու շամաշ-  
դանները ձեռքին,“ ասաց և դուրս փախաւ:

Աշակերտները խօսք էին տուել, որ միմեանց  
տու չասեն: Մէկը միւսին ասաց. „դու մեծ էշ ես.“  
երկրորդը ասաց. ոչ թէ դու, այլ դու:

\* \*

— Ո՞րքան պէտք է տամ ձեղ, -հարցնում էր  
ատամնացաւից նոր ազատուածը ատամնաբութին:  
— Մէկ մանէթ, -պատասխանեց ատամնաբոյժը:  
— Մէկ մանէթ, -հանաք ես անում, անցեալ շա-  
րաթ մեր սափրավերը հանեց ատամն այնպէս, որ  
ամբողջ մի ժամ ինձ թրեեց մեր տանը և այդ բո-  
լորի համար միայն 10 կոպէկ առաւ, իսկ դու մի  
անգամ մատով դուրս հանեցիր, և մանէթ ես  
ուզում:

\* \*

Մի քաղաքում գիշերով պահապան կանգ-  
նեցրին Հազար փթանոց զանգակի վերայ: Մի ծաղ-  
րածու մարդ անցկացաւ և պահապանին ասաց.  
„արթուն կա՛ց, զանգակը ո՛չ ո՛ք գողանայ!“

\* \*

**Ժամերգութեան ժամանակը ժողովուրդի միջից**

խօսելու ձայներ էին լվում: Քահանան առաջ եկաւ  
և ձայն տուեց. „Հանդարտուեցէք, սիրելիք:“ Տէր  
հայր, մենք չենք, հպարտութիւնով խօսեց կանանց  
դասից մի կին-Աւելի լաւ, -ասաց քահանան, -ուրեմն  
ձայները երկար չեն շարունակուի:

\* \*

❖ Մէկին պէտք է սպանէին: Գատաւորը խղճա-  
լով ասաց նորան. Խնդրի բնտրիր քեզ համար մահ,  
ի՞նչպէս ես կամենում մեռնել:

— Գիտէք, -ասաց բռնուածը, -զլուխ կտրելը, խեղ-  
գուելը, հրացանով սպանուելը ես չեմ հաւանում  
և այս պատճառով ես ամենից լաւ եմ համարում  
մեռնել ծերութիւնից:

\* \*

❖ — Այդ ի՞նչ ես անում, Սո՛փիա:

— Իմ մարդու զերեզմանի վերայ ցանում եմ և  
չըում, որ շուտով խոտ դուրս դայ:

— Ինչո՞ւ:

— Միթէ զու չդիտես, մարդս մեռնելու ժամա-  
նակը աց, որ մինչեւ իր զերեզմանի վերայ խոտ  
չդուրս գայ, ես ուրիշի հետ չպահուեմ: Բայց հիմա  
ինձ հետ պսակվում է մէկ լաւ մարդ, և ես պսա-  
կուելուց առաջ շտապում եմ, որ այս աևդ խոտ

Դուրս դայ:

\* \* \*

— Ինչո՞ւ չես դին ածում: այս աղը՝ բարկանա-  
լով ասաց տէրը ծառային: Ա այս մասնաւուն մաս

— Սայլ չկայ:

— Յի՛մար, ասաց տան տէրը, սրահում մի պիս-  
փորիր և լցու մէջը:

— Իսկ դուրս փորած հողը ուրախանեմ: Հարցընց  
ծառան:

— Յիմար, մի քիչ խորը փորիր փոսը, և լցու  
այն տեղ աղըն էլ հողն էլ:

\* \* \*

Փասն տարեկան երիտասարդը քառասուն տա-  
րեկան աղջկան ձեռք խփեց խաղի ժամանակը: Աղ-  
ջեկը ասաց. „մօրս հետ խօսիր:“ . . .

\* \* \*

Հարսանիքում մէկը կոմեց մի կնոջ ոտները: Կինը  
բարկանալով՝ ձայն տուեց. ի՞նչ ես անում: պարոն,  
իմ ոտները հօ զողացած կամ վարձած չեն:

— Եթէ այդպէս է, ի՞նչու աւելի հաստ, և ամուր  
ոտներ չէք բնտրել, -պատասխանեց առաջինը:



\* \*

Յառային վարձողը խոստանում էր. „բացի  
քո քսան մանեթը, ես քեզ կհագցնեմ էլ:” Ծա-  
ռան համաձայնեցաւ և միւս առաւօտը չէր վեր  
կենում անկողնից: Տէրը հարցրեց. ինչու չես վեր  
կենում տեղիցդ:

— Բաս դուք ինչի չեք հագցնում շրերս, դուք  
խոստացել էք, պատասխանեց ծառան:

\* \*

❖ Ճանապարհորդը հիւանդացաւ հիւրանոցում  
և բժիշկ կանչել տուեց: Նա մէնակ պառկած էր  
անկողնում, երբ ներս մուտք մէկը:

— Դո՞ւք էք բժիշկը, հարցրեց ճանապարհորդը:

— Այո՛, ինչ է պատահել ձեզ:

— Ես շատ հիւանդ եմ:

— Կարող էք ման գալ:

— Ո՛չ:

— Անեակումն էլ չէք կարող ման գալ:

— Զեմ կարող: Գլուխս էլ չեմ կարող բարձրացնել:

— Ես դորա դեղը դիտեմ, ասաց կարծեցեալ բժիշ-  
կը: Վեր առաւ սեղանի վրայից նորա ժամացոյցը և  
քսակը ու դուրս գնաց:



\* \*

Երկու մարդիկ մի մշակի կանգնեցրին իւրեանց  
մէջ աեղը և հարցրեցին.

— Դու յիսար ե՞ս, թէ ցնորուած:

— Երկուսի մէջ աեղն եմ պատասխանեց մշակը:

\* \*

— Քան՞ի տարեկան ես:

— 38 կամ 48:

— Ի՞նչու, մի՛թէ 10 տարին քեզ համար միւ-  
նցն է:

— Օ՛չ, չէր կատուած, ես համարում եմ իմ  
փողերը, ոչխարները: բայց ոչ իմ տարիները, որով-  
հետև ո՛վ կարող է դողանալ տարիներա:

\* \*

Ուսումը աւարտեց յետոյ դիւղայու որդին  
առաջին անգամ ճաշ էր ուտում իւրեանց տանը:  
ձաշին նա ասաց ծնողներին. „Ես իմ ուսումով  
կհաստատեմ, որ այս տեղ երեք աղաւնի կայ, թէ-  
պէտ դուք կարծումէք որ երկուսն է, - ահա, այս  
մէկ, այս երկու. բայց մէկ և երկու երեք է: Հայրը  
պատասխան տուեց. „որովհետեւ դու այդ քան ու-  
սումով այդ բանը մտածեցիր, ուրեմն թող մէկ

աղաւնին վեր առնէ մայրդ, միւսը ևս, իսկ երրորդը  
դու վեր առ։<sup>“</sup>

\* \*

Դատարանում ժողովուրդը խօսում էր բարձր  
ձայնով։ Գատաւորը ասաց, „սուս կացէք, ինչ պա-  
տահեց ձեզ, ձեր գոռագոռոցի մէջ ահա տասը դործ  
վճռեցի, բայց ոչինչ չհասկացայ։“

\* \*

Յ արժապետը դիշերը մինչեւ լոյսը բիւեարդի  
վերայ խաղացել էր, և անքուն մնացած, առաւո-  
տը մտնում է դասատունը և աշակերտին դաս է  
հարցնում, իսկ ինքը գլուխը գնում է սեղանի վերայ։

Աշակերտը դասը վերջացնելուց յետոյ ձայն է  
տալիս, „վերջացրի վարժապետ։“ Իսկ վարժապետը, որ  
գեռ երազութիւն էլ խաղում էր, գլուխը բարձրացրեց  
և ասում է խաղի խօսքերը. „Դնելու եւ  
середину!“

\* \*

Մէջետի դրանը նստած էր մի կօշկակար թուրք,  
որ 15 տարի ներս չէր մտել մէջետը։ Մօլան մէջե-  
տում համբերութեան վերայ քարոզել էր և սորան  
պատմել էին։

— Համբերութիւնը լաւ բան է, հարցնում էր  
նա մօլային, որ դուրս էր գալիս մէջետից։

— Շատ լաւ բան է։ շատ համբերողը դրախտը  
կ'զնայ, - պատասխանեց մօլան։ Ուրեմն ևս էլ կար-  
ժանանամ դրախտին, - ասաց կօշկակարը, - որովհետեւ  
ամբողջ 15 տարի է նստած եմ մէջետի դրանը և  
այնքան համբերութիւն եմ ունեցել, որ մի անգամ  
չեմ ներս մտել մէջետը։

\* \*

Սեղանաւորի փողերի վերայ մի մարդ երկու  
ձեռքով խիում է և փախչում։ Սեղանաւորը վազում  
է ետեկից, բռնում է և պահանջում իւր փողերը։

— Ես քո փողերը չեմ վեր առել, գրաւ զնե՞նք  
100 մանէթ, եթէ իմ մէջ փաղ գտնես, ևս 100  
մանէթ տամ, եթէ չգտնես, դու տաս։ Սեղանաւորը  
համաձայնեց, և հաւաքուած մարդկերանց մէջ,  
որոնեց նորա գրպանները, ամեն տեղ, բայց երբ ոչ  
ինչ չգտաւ. ինքը տուեց նորան 100 մանէթ. — Մի  
ուրիշ անգամ միւնոյն մարդը նոյնպէս անցկացաւ  
սեղանաւորի մօտից և ձեռքերը խփելով արձաթ  
փողերին. վեր առաւ, փախաւ։

— Ել չ'ս կարող խարել, - ձայն տուեց սեղա-  
նաւորը։

Ժշատը մեռնելիս ասաց . „էս մոմը ի՞նչ հարկաւոր է , մի՞թէ մթնումը չի կարելի մեռնել : ”

\* \*

Դերձակի մօտ գալիս է շորեր առնողը և ասումէ .  
— Շատ նեղ ես կարել , թեմերը պատուեց :  
— Վնաս չունի , կ'զբանուի : - Եկաւ միւս անդամ .  
— Լաւ չէ կարած , մէջքը պատուեց :  
— Կղբանուի : Վերջապէս մէկ օր էլ եկաւ .  
— Կողքերն էլ պատուեց :  
— Ահա , հիմա տմեն բան զբանուեց . — ասաց դերձակը :

\* \*

— Սիրտ կ'այրի . . . ասում էր ժշատը հիւրին , որ  
թէյ էր խմում , բաժակում շաքար լընելով .  
— Ես կընեմ շաքարը , ասաց հիւրը - տեսնենք  
ում սիրտը կ'այրի :

\* \*

Մարդու մէկը սովորութիւն ունէր մանդալիս  
համարել իւր քայլերի թիւը : Մի օր նա զբօնում  
էր , համարելով քայլերը . նորան պատահեց մի մարդ .

երբ առաջնը 573 քայլ էր փոխել և կանգնած  
կրկնում էր այդ թիւը , որ չմոռանար :  
— Աերեցէք : ասաց միւսը , - մի խօսք ասեմ :  
— Շատ ուրախ եմ . - 573 , պատասխանեց առաջնը :  
— Միայն մի բան հարցնեմ :  
— Շատ լաւ . - 573 :  
— Դուք լսել էք , որ բժիշկ Մարտիրոսեանը , իմ  
հօրեղայրս , մեռաւ և իւր եղօր որդքերանցը թողել  
է ամենքին հինգ հարիւր մանեթ :  
— Ճիշդ այդպէս է , - պատասխանեց առաջնը . - 573 !  
— Բայց զիաէք , թէ քանի եղօր որդիք ունէր :  
— 573 ! - պատասխանեց առաջնը :

\* \*

— Պետրոս , դու ասումես , թէ Պօղոսը քեզ  
կողոպտեց , չէ :  
— Այս :  
— Այն գիշերը լուսին կա՞ր :  
— Ո՛չ :  
— Աստեղեր :  
— Ո՛չ :  
— Լուսամոխց լոյս կա՞ր :  
— Ո՛չ , մեր չորս կողմը , տասը վերստ հեռաւու-  
րութեան մէջ տուն չկար :  
— Լա՛ւ , ուրեմն , եթէ ոչ լուսինն էր լուսաւո-

բում ոչ աստղեր, ոչ լուսամտից մոմի լոյսը, ի՞նչ  
պէս ես հաստատում, որ քեզ խփողը Պօղոսն էր:

— Բայց նա զլսիս այնպէս սաստիկ խփեց, որ  
կրակ թափուեց զլսից և լուսաւորեց չորս կողմա:

\* \*

Երեխան ճաշից խոռվել էր: Տեսնելով, որ ճա-  
շը վերջանում է և ոչ ոք իրան չի ասում. „Հաց  
կեր”-նա կամաց ասում է մօրը. „Նանի, նանի, ինձ  
անա. Ավո՞ ի՞նչ:

\* \*

- Գետ' րդ - ի՞նչպէս ես:
- Շատ լաւ եմ: Հնորհակալեմ, Գրիգոր:
- Բայց իմ անունս Գրիգոր չէ:
- Այսո, իմ անունս էլ Գէորգ չէ:

\* \*

- Զէ՛, արեգակը լաւ է:
- Զէ՛, լուսինը լաւ է:
- Արեգակը ինչի՞ է լաւ լուսնից, դո՞ւնէ լուսինը  
զիշերը լոյս է տալիս, իսկ ցերեկը արեգակը ինչ  
հարկաւոր է, առանց նորան էլ լոյս է:

\* \*

Քահանան քարողումը ասաց. „Երկու ճանաւ-

պարհ կայ, մէկը մեծ և լայն է և տանում է դէ-  
պի դժոխքը, միւսը նեղ է և փշոտ, և տանում է  
դրախտը:“

— Եթէ այդպէս է, ասաց մէկը լսողներից, - Ճի-  
կարելի, որ երկումն էլ թողնենք, անտառովը գնանք:

\* \*

— Բոլոր իմաստունները, ասում էր մի Յոյն, - Յու-  
նաստանից են դուքս եկել:

— Հա՛, այդ է պատճառը, հա՞ս, որ հիմա այն  
տեղ ոչ մէկը չկայ:

\* \*

Կաւումը ով հիւանդանում էր. բժիշկը դե-  
ղի փոխանակ ծովի ծուր էր խմայնում նորան: Ան-  
բախտութիւն պատահեց բժշին, - ծովս ընկաւ: Շատ  
փնտռեցին. բայց չգտան: Մէկը հարցրեց. „, մեր բժիշկը  
ուր գնաց:“ Պատասխան տուին. մեր բժիշկը եր  
ափտէկը ընկաւ:

\* \*

Վաճառականը այնպէս սովորել էր զրել  
Ա. Կարապետեան և ընկերութիւն, որ երբ քահա-  
նան մլրտում էր իւր նորածին երեխային. նա ցուցա-  
կումը ստորագրեց. Ա. Կարապետեան և Ընէ. և

իւր սիալը նկատեց այն ժամանակը, երբ ամենքը  
ծիծաղեցին:

\* \*

Հարցաքննելիս վարժապետը հարցրեց աշակեր-  
տին. Սէմը, Քամը և Յարէթը Նոյի որդիքն էին.  
ո՞ւմ տղերքն էին:

Երեխան չկարողացաւ պատասխան տալ և ու-  
ղարկուեցաւ հօր մօտ:

— Յիմար, ասաց հայրը, — այդ ինչպէս չես հաս-  
կացել. Աբդարը, Սարգիսը և Ստեփանը ձեր հոգա-  
բարձուի որդիքն են. ո՞ւմ տղերքն են ուրեմն:

— Յայտնի բան է, մեր հոգաբարձուի:

— Դ'է, յիմար. չէ որ միւնոյն է: - Երեխան գնաց  
նորից քննուելու: Հարցրեցին:

— Դ'է ասա. Սէմը, Քամը և Յարէթը Նոյի որ-  
դիքն էին. ո՞ւմ տղերքն էին:

— Մեր հոգաբարձուի, — համարձակ պատասխան  
տռեց աշակերտը:

\* \*

Մէկը լսել էր, որ ձիու տարիքը ձանաշելու հա-  
մար նորա ատամներին պէտք է նայել: Կամեցան  
փորձել, ջա՛ր, քո ձին երեսուն երկու տարեկան է, «  
ասաց նա ձիապանին: Պարոնը ատամները համարել էր:

\* \*  
Ապիրավէրը միարդու երեսը ասպիրելով  
հարցրեց նորան:

— Քանի՞ եղայրներ էք:  
— Եթէ քո ձեռքիցդ պրծնեմ չորս կ'լինք. իսկ  
եթէ ո՛չ՝ երեքը կմնան:

\* \*

Ծառան այզիից նոր միրդ տարաւ ընծայելու  
իւր տիրոջը: Տէրը ասաց.

— Սորա համար արժէ, որ քեզ մի կով ընծայեմ:  
— Պարոն, ինձ համար միշտ կով չես. - պատաս-  
խանն էր ծառայի:

\* \*

— Այս ի՞նչ է նշանակում, որ իմ մորուքն է  
ապիտակ, իսկ քու զլինիդ մազերը:

— Նշանակում է ես զլիով շատ եմ աշխատել,  
իսկ դու՝ շանէքով:

\* \*

Ադվոկատը պայման դրեց օրիորդի հետ, որ  
նորանից կառնէր հավտր մանեթ: Հետեւալ օրը  
օրիորդը եկաւ նորա մօտ և մսաց.

— Ճշմարիտ. դուք կամենում եք պատկուել ինձ  
հետ:

— Պատկուել, -հարցրեց աղվոկատը, -և այդպիսի  
բան չեմ առաջարկել ձեզ:

— Այո, -բայց դուք պահանջում եք իմ բոլոր կա-  
րողութիւնը, և ես կարծում եմ որ դուք այնքան  
բարի կինէք: որ ինձ էլ հետը կվերառնէք: Երկար  
շմածելով, աղվոկատը համաձայնեց:

\* \*

€ Երկու հարցեցող գնում էին գինետան մօտով:  
— Կ'տեսնես Պետրոս, ասում էր նորանից մէկը  
միւսին. ես կանցկենամ գինետան առաջեկց, բայց  
ներս չեմ մտնիլ:

— Զէ՛, ես զիտեմ: չես կարող գուն ներս կ'մտնես:

— Զէ՛, չեմ մտնիլ կ'տեսնես. -այս ասելով հար-  
ցեցողը անցաւ մի փոքր և ասաց. „տես՞ար, խօսքս  
կատարեցի, ուրեմն հիմա սորա համար արժէ խմել.“  
Ասաց և ներս մտաւ գինետունը:

\* \*

Մէկը ներս մտաւ Ժլատի տունը և տեսաւ, որ  
նա ճանձեր էր բռնում, վերջապէս նա մէկ ճանձ  
բռնեց և զցեց շաքարամանը և խուփը ծածկեց:  
Ներս մտնողը հարցրեց ինչո՞ւ ես այդպէս անում:

— Իմանալու համար, թէ ծառան չէ գողանում  
շաքարը, պատասխանեց Ժլատը:

\* \*

— Քաղցած եմ: -ասաց ճանապարհին ծառան գ  
վարդապետին, -հաց ուտենք հայր -սուրբ:

— Հիմա ինչո՞ւ ուտենք, երեկոյին էլի կ'քաղցենք,  
ասաց վարդապետը:

Ծառան ոչինչ չասաց և լուռ ու մունջ շա-  
րունակեցին ճանապարհը:

Ծառային բարկացնելու համար վարդապետը  
հանեց գրապանից աւետարանը և կարգում էր. իսկ  
նորա ձին սկսեց քայլելով վնդրացնել: Ճանապարհին  
մէկը մօտեցաւ ծառային և հարցրեց.

— Վարդապետը ուր է գնում-ն'ըկինք, -պատաս-  
խանեց ծառան:

— Բայց դժուար, թէ դուք այս ճանապարհով  
գնաք այնտեղ:

— Զէ՛, կ'գնանք, -ասաց ծառան, -որովհետեւ վար-  
դապետը աղօթք է անում, ես էլ ծոմ եմ պահում:

\* \*

— Յովհաննէս, լսեցի՞՞, որ Գէորգին բերդը դրեցին  
կող գողանալու պատճառով:

— Ի՞նչ յիմարն է. -մի՞թէ նա չէր կարող առնել

և փողը չտալ: մասաւ մի պահանք արածանի  
\* \* \*

Գիշերով մի մարդ զարկում է պանդոկի դուռը:  
— Ով ես՝ հարցնում է, արթնանայով, պանդու  
կապեալը:

— Ես Մկրտիչն եմ, գէորգի եղբայրը, տուրբ Սարդ-  
սի երեսիսը, քարվանսարի տէրը, Մինասի վեսան,  
Կարապետի եղբօր որդին, Մարտիրոսի հօրեղբայրը:

— Ե՞րո՞ղութիւն, այդքան մարդու տեղ չ'կայ,  
ասում է պանդոկապետը և պարկում:

\* \*

Հաւաքուած մարդկերանցից ամեն մէկը մեքեւ  
նայի վերայ փորձում էր խւր ոյժը: Մեքենան մի  
բոլորաձև երկաթեայ տախտակ էր, որի վերայ խիթեա  
լով պաքը շարժում էր և կանգնում նորա վերայ  
նշանակած աստիճանների վերայ և ցցց էր տալիս, թէ  
քանի փթի ոյժ ունէր խիողը: Մօտենում է մի հաս-  
տամարմին և բարձրահասակ մարդ, մի սաստիկ  
հարուածով այնպէս խիում է մեքինային, որ սլաքը  
խսկոյն պտտում է բոլոր տախտակը. „ապա տեսէք,  
ինչքան է իմ ոյժը,“ ասում է նա:

Հաւաքուած արածանի

\* \*

Ֆոկուսնիկը մի քանի ներկայացումներ տալուց  
յետոյ զրում է հետեւեալ յայտարարութիւնը:  
„Այս օր վերջին և ամենալաւ ներկայացումը կ'լինի,  
կաշվատեմ մտնել շիշը:“ Թատրոնը լցվում է մարդ-  
կերանցով: Մի սեղանի վերայ զրած էր մի փոքր  
շիշ. Փոկուսնիկը ներս է տանում նորա մէջ իւր  
գլուխը, չէ մտնում, աշխատում է ձեռքերը ներս  
տանել, չէ լինում, աշխատում է ոտները մտյնել  
շիշը, չէ լինում. ապա՝ դառնում է դէպի ժողո-  
վուրդը և ասում է.

— Ահա տեսաք, շատ աշխատեցի մանել շիշը.  
Բայց չկարողացայ:

\* \*

Մէկը կրակ ինզրեց ծխախոտ ծխելու, մի աղ-  
ջեկ կրակ տուեց նորան:

— Երկնքի կրակին արժանանաս, որդի, — ասաց  
ծխողը, օրհնելով աղջկան:

\* \*

Ճանապարհին գիւղացու էշը սատակեց, նորա  
կաշին քերթեց և ուսին շալակած գնում էր. Պա-

տահեց նորան մի ուրիշ զիւղացի, որ զիւղիցն էր  
գալիս:

— Ի՞նչ թաղայ խաբար կայ, -հարցրեց իշխ տէրը  
միւսին:

— Ո՞նչեւ:

— Բաս զիւղումը չեն խօսում, թէ իմ էշը  
սատկեց:

— Զ'է:

— Ասած տայ, սուտ ըլի, -ասաց իշխ տէրը,

\* \*

Նոր վարձաբնակը իւր սենեակից զանդը քար-  
շելով ձանձրացրել էր տան տիրոջը:

— Եղբայր, -ասում էր տան տէրը, -քանի քաշես  
զանդը, բաւական է, խնդրեմ էլ քաշես այսուհետեւ:

— Լաւ, ասաց վարձաբնակը. էլ չեմ քաշիլ:  
Վնդ րոսկէ չանձաց, տան տէրը այդ սենեակից հրա-  
շանի մի սաստիկ ձայն լսեց և խկոյն ներս վաղելով  
հարցնում է վարձաբնակին.

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է:

— Մի բաժակ ջուր տուր. — պատասխանում է  
վարձաբնակը:

\* \*

— Տէր հայր, եղբայրս մեռաւ, աղօթք արա, որ

դրախտը գնա: Վաստար ունց հուս պայման ունց  
— Լաւ, որդի, գնա մի բութիւկայ զինի բեր:  
Բահանան շշի բերանը դրեց շրթուքներին և  
ծծում էր:

— Գնաց, տէր՝ հայր:

— Զէ, հալա գնում է,

— Հօմ, գնաց:

— Մօտ կացաւ դրախտի դրանը:

— Հօմ:

— Տարայ մի պատի վերայ կանդնացրեցի:

— Հօմ, տէր՝ հայր, գնաց:

— Որդի, պատից ցած դլորեցի, բայց չգետեմ.  
Դրախտը գնաց, թէ դժոխքը:

\* \*

Դատաստանը իւր կողմը վճռելու համար  
գանդաստղը դատաւորին մի տիկ իւղ խօստացաւ,  
իսկ միւսը խօստացաւ մի խող: Բացուեցաւ դատաս-  
տան: Դատաւորը վճռում էր խող տուողի կողմը:

— Բաս իմ իւղը, պարոն դատաւոր, ասաց ցած  
ձայնով առաջնը:

— Քո իւղը խողը կերաւ. - պատասխանեց դատաւորը:

\* \*

Որովհետեւ մեղը թանկ էր, մի խեղձ մարդ

մեղը ծախողի առաջ դրեց դատարկ ամանը, հացը  
մէջը բրդում էր և մեղին նայելով ուսում էր  
հացը: Վերցջայնելուց յետոյ մեղը ծախողը պահան-  
չեց փողը:

— Ես քու մեղը չեմ կերել:

— Ի՞նչէս չէ, հացը բրդեցիր ու կերար: - Վէճը  
սաստկացաւ և գնացին դատաւորի մօտ:

— Պէտք է տաս մեղի փողը, ասաց դատաւորը:

— Լաւ, կ'տամ-ասաց խեղճը, և դատարկ ձեռ-  
քը պահելով մեղը ծախողի ձեռքի վերայ, ասում  
էր. մէկ, երկու, երեք, չորս, էս էլ հինգ կոպէկ:

— Դու տարար, ասաց դատաւորը:



Գիւղացին մի թուղթ տուեց իւր քահանացին  
կարդալու:

Քահանան, կարծելով թէ այդ թուղթը գիւ-  
ղացու որդու ուղարկած նամակը կ'լինէր, սկսեց  
կարդալ այսպէս. , Սիրելի հայր իմ, շատ բարե կա-  
նեմ քեզ, ես ողջեմ և առողջ . . . .

— Ես ինչ ես կարդում տէր հայր, ասաց գիւ-  
ղացին, էդ նամակ հօ չէ. սանաթ (Աւանին) է:

— Հէր օրհնած, - ասաց քահանան, - ասա սանա-  
թայ որ սանաթաւորի կարդամ է:

արակ ու առ առաջ, ամառ մասունք մասունք առաջ նաև  
. . . . նարակ ամառ գնաց ու առաջ ըստ  
Բժշկի տունը գող ներս մտաւ և ծառային  
հարցրեց.

— Պարոնը տանն է:

— Ո՛չ, պատասխանեց ծառան:

— Ուրեմն գուռը բայց արա, ասաց զողը, մի-  
թուղթ պէտք է գրեմ և սեղանի վերայ կթողնեմ: Ծառան  
բայց արեց գուռը: Դողը չորս կողմը նայեց,  
սեղանի վերայ մի գեղեցիկ ժամացոյց տեսաւ, վեր  
առաւ գրպանը դրեց, և յետոյ թղթի վերայ դրեց-  
, երբ տուն գաս, քո ծառան դուրս արա, դուռը  
բայց արեց ինձ համար, ես էլ վեր առայ քո գեղե-  
ցիկ ժամացոյցը և տարայ:



Ճանապարհորդը գինեվաճառից մի բաժակ  
ջուր ինդրեց: Գինեվաճառը լաւ չլեց և ջրի փո-  
խանակ գինի տուեց: Ճանապարհորդը ասաց. այ-  
բարի մարդ, ուրիշ դուքաններում էսպէս չէ:



Յլսում փողոցներումը գիշերով տիկնոջ ե-  
տելից գնում էր ծառան, լապտէրը ձեռքին: Տիկինը  
ասաց. , էս անտէր տեղը, ի՞նչ շուտ շուտ եմ խոր-

վում ցխումը: “Ծառան խօսեց. , , սիրտ ա՛ռ, էնպէս  
անց կաց. ևս չեքմէք ունիմ հաղած . . . .”

\* \*

○ Փահանան այնպէս քարոզում էր, որ բայի մի  
մարդից, ամենքին լացացրեց: Այդ մարդուն հացրեա-  
ցին. դու ի՞նչի չես լաց ըրում: Պատասխանեց. ևս հօ-  
սրա ժողովուրդը չեմ:

\* \*

Մի մարդ յայտարարութիւն գրեց. „, զնում  
եմ Ոռուսաստան. ով կամենում է, թո՛ղ տեսնէ՞  
ինձ,“ կէս գիշերին մէկը գնաց թըլսկ - թիւկացրեց  
դորա դուռը: Ոռուսաստան գնացողը զարթեց խոր  
քնից, բաց արեց դուռը և հարցրեց եկողին. „Ի՞նչ  
ևս կամենում:“

— Դեռ Ոռուսաստան չես գնացե՞լ.... ասաց միւսը:

\* \*

— Պարսկաստանից թուրքը նոր էր վերադարձել:  
— Գնացիր թաւրիզ, - ասում էին թուրքին, պարս-  
կերէն սովորեցիր:

— Այս, պատասխանեց թուրքը:

— Ասլա՛ ի՞նչպէս են ասում պարսկերէն դարիին,  
ցորենին, կորեկին:

Թուրքը պատասխանեց.  
„Արիիայ ջովդ դէկլար.  
, , Բուղդիայ գեանդմ.  
, , Դաւուեայ ադ գօեանդայ,  
, , Ման գօիւփի գեալդմ:“

Հայերէն: Գարուն ջրէտ են ասում, - ցորենին-  
գէտանէտ, կորեկին նոր պէտք է անուն դնէին. ևս  
թողեցի եկայ:

\* \*

Մի մարդու տան կայքը անուն անուն գրում էին. պարտատիրոջը բաւականութիւն տալու: Թաղական  
օֆիցերը, որ ռուսերէն լաւ չգիտէր, պրիստավին ա-  
սում էր մէկ - մէկ և նա գրում էր. Մի քանի  
բան գրել տալուց յետոյ, օֆիցերը մի արկղի մէջ  
տէր ողորմեաներ գտաւ, համարեց և ասաց. „, գրի՛ր,  
20 աշուշ տուք ու գոմիլ առաջ առաջ!“

\* \*

— Գէ՛որդ, մի զարմանալի բան ասեմ քեզ,  
պատկերահանը այնպէս լսու է նկարել իմ պատ-  
կերը, որ ևս այդ պատկերը շաբաթը երկու անգամ  
պէտք է սալիւմ, ինչպէս ինքս իմ երեսը:



\* \* ✓

¶ **ԱԿՈ** խնդրում էր աղվոկատին. „ի՞նչ անեմ, պարագից ի՞նչպէս ազատուեմ, ինձ վերայ 500 մանէթի պարագ են դնում:”

**Աղվոկատը** պատասխանեց. „ինձ 100 մանէթ տուր, ես քեզ կ'սովորայնեմ. երբ գատաւորը մի բան ասի քեզ, առաջ ա'սա. „Ե՛հ, ի՞նչ անենք.” երբ մի ուրիշ խօսք էլ կ'ասի. ասա. „բան չունե՞ս:”

Դա համաձայնեցաւ և դնաց դատաւորի առաջը:

— **Այս** պարոնը քեզանից գանդատվում է, - ասաց դատաւորը:

— **Ե՛հ, ի՞նչ անենք:**

— **ԱՀՇ'ա,** իրաւունք ունի քեզանից սրահանջելու այդ գումարը:

— **Բան չունե՞ս:**

— **Աս հաստատում է:**

— **Ե՛հ, ի՞նչ անենք:**

— **Պէտք է վճարես փողերը:**

— **Բան չունե՞ս:**

Դատաւորը զրեց, թէ „յիմար է.” և հրամայեց, որ դուրս գնար:

— **ՀՇ'ը,** ի՞նչպէս էր, ասաց աղվոկատը, տեսա՞ր, որ դորձը տարայ:

— **Ե՛հ, ի՞նչ անենք,** ասաց նա:

— Ինձ էլ „Ե՛հ, ի՞նչ անենք,” բաս իմ 100 մաս նէթը.... հարցրեց աղվոկատը:

— **Բան չունե՞ս:**

\* \*

Քահանան մի գողի խոստովանեցնում էր. այդ միջոցին նա գողացաւ խոստովանացնողի ժամացոյցը:

— **Գողութիւն արե՞լ ես, ո՞րդի, - հարցնում էր քահանան, - ի՞նչ ես գողացել:**

— **Մի սհաթ:**

— **Տա՛ր, տիրոջը յետ տու՞ր:**

— **Զ՛է, զուն ա՛ռ, տէ՛ր հայր:**

— **Զ՛է, տիրոջը պէտք է տաս:**

— **Տիրոջը տուի, չառաւ, տէ՛ր հայր:**

— **Ուրեմն քեզ լինի:**

\* \*

Յիմարը, մի բժիշկի պատահելով, թագնուեց:

— Ինչու ես թագնվում, - հարցրեց բժիշկը:

— Որովհետեւ ամսվեցայ քեզ երեալու, որ այս բան ժամանակ չեմ հիւանդացել:

\* \*

Մի ժատ իւր մօտ եկած հիւրին պատուելու համար միշտ ասում էր իւր որդքերանցը, որ նոքա

ոչխարը բերէին և մորթէր նոցա համար . բայց հիւրէրը չէին թոյլ տալիս այդ բանը անելու մի փոքր խորոված ուտելու համար : Գալիս է մի հիւր :

— Ոչխարը բերէք, մորթեմ, գ'է, շուտ արէք, -  
ասում էր ժլատը . -իմ ազնիւ բարեկամն եկել է շուտ:  
չիւրը լուռ էր կացած : Դ'է, բերէք, այս բոպէիս  
մորթեմ, - շարունակումէր տան տէրը, - իմ պատու-  
ական բարեկամիս ոտների տակը, տարին մի անդամ  
չի գայ էսպիսի զոնաղ : Լուռթիւն : Բերէք, շուտ,  
ոյէտքէ լաւ պատուենք սորան, բերեցին ոչխարը : Ժլա-  
տը բռնեց ոչխարի զլուխը, և քսումէր վզնի դանակը .  
Ընը, կտրումեմ իմ ազնիւ բարեկամիս համար, ընը,  
կտրումեմ, ասաց և կտրեց զլուխը :

— Հէր օրհնած, մի խորովածի համար ի՞նչ էիր  
անում, որ մորթեցիր ամբողջ ոչխարը, - ասաց հիւրը :  
— Լեզուդ պատանձուել էր, - ասաց ժլատը, - մի  
քիչ վաղ կասէիր է է է :

\* \* \*

○ Վահանան աշակերտին Հայր մերը կարդացրեց  
և այդ աղօթքի մասին հարցրեց . , , որտեղէ քո Հայրը :  
— Մարաքումն է, պատասխանեց աշակերտը :

\* \* \*

Ժլատը երաղ տեսաւ, որպէս թէ մեծ մեծարք

ունէր: Վախեցած զարթեցաւ և ասաց . , , Աստուած  
մի՝ արացէ, որ ես քնեմ այսուհետեւ :<sup>“</sup>

\* \* \*

Մի մարդ հարբած տուն գնաց, նայեց կնոջ  
երեխն, կինը երկու երեւցաւ աչքումը և ասաց.  
,, Տէր Աստօծ, էս մեկին չկի կարողանում պահել,  
հիմի ինձ համար երկուսը ստեղծեցիր :<sup>“</sup>

\* \* \*

Աշակերտները մի գիւղացու բռնեցին, ներս տա-  
րան ուսումնարանը և ասացին . , , մենք միմեռնց  
հետ զրաւ ենք զրել, գոււ էլ խառնուիր :<sup>“</sup> Գիւղա-  
ցին համաձայնեց, Հանեցին մի - մի մանէթ և ասա-  
ցին . , , այս փողը թող նա ստանայ, ով հարցման-  
քին լաւ պատասխան կտայ :<sup>“</sup> Այս բանում վար-  
ժապետն էլ խառն էր, և նա հարցրեց գիւղացուն.  
. , , Աստուածածնի անունն ի՞նչ էր :<sup>“</sup>

— Մարիամ, պատասխանեց գիւղացին: , , Հիմա դու  
հարցրու ինձ, <sup>“</sup> ասաց վարժապետը : , , Մօրս անունը  
ի՞նչ էր, <sup>“</sup> հարցրեց գիւղացին: Վարժապետը և ա-  
շակերտները չկարողացան պատասխանել . իսկ գիւղա-  
ցին ձեռք խիեց, փողերը բուռը լրեց և գնաց:



— Ինչու այս գիշեր թատրոն չես գնում, - հարցրեցին մէկին:

— Որովհետեւ աջիշում դրուած է. թէ անցքը պատահումէ գիւղում, ես ի՞նչպէս գնամ գիւղը:

— Ինձ էլ ոչ ոք չեմ հաւատում. ի՞նչ անեմ. ես, - հարցնումէր ստախօսը:

— Ասա սեւս տասցի և ամենքը կհաւատան, - պատասխանեցին նորան:

Մի շատ հաստ մարդ նստեց կառքը:

— Ի՞նչպէս էք կամենում տանել ձեզ, - հարցրեց կառապանը. - յանկարծ, թէ երկու անդամնով:

Տիկինը պատուիրել էր աղախնին, որ եթէ աղջեկը գիրք կարդալիս քնի, նա մնմը հանգնէր: Մի գիշեր աղջեկը գիրքը կարդալուց յետոյ ինքը հանգրեց մնմը: Աղախնը ներս վագեց տան տիկնոջ սենեակը, ձայն տալով. , , տիկին, տիկին, հիմայ ես ի՞նչ անեմ: , ,

— Տէ՛ր Աստուած, ի՞նչ է պատահել նորան, - հարցրեց քնածը արթնանալով:

— Ունինչ չեմ պատահել, - ասաց աղախնը, - Մարիամը ինքը հանգրեց մնմը, հիմա ես ի՞նչ անեմ:

\* \*

Դ Հարցաքննութեան ժամանակ աշակերտը միշտ ասումէր. , , չգիտեմ, , ,

— Յիմա՛ր, - ասաց ուսուցիչը բարկացած, - ի՞նչ որ չգիտես, պէտք է ասես. , , այդ հաստատ չգիտեմ: , , Վարժապետը դուրս կանցեց նոր եկած աշակերտին:

— Ո՞վ է քո հայրը, - հարցրեց նա:

— Այդ հաստատ չգիտեմ, - պատասխանեց աշակերտը:

\* \*

Հարբեցողը պառկած էր մահուան անկողնում:

— Մնաք բարով, - ասաց բժիշկը, դուրս գնալով, էզուց առաւօտը, ժամի 8-ին, դուք կլինէք միւս աշխարհում:

— Գրաւ գանկք, բժիշկ, մի շիշ գինու վերայ, որ ես էզուց դեռ 9 ժամին էլ կենդանի կլինեմ, - ասաց մեռնաղը:

\* \* \*

Մէկը փողէր փոխ առնում ժլատից ժլատը  
զրաւ պահանջեց Խնդրողը ասաց. „իմ գլուխը  
զրաւ կ' դնեմ քեղմօտ:“ Ժլատը մնդուկը բաց արեց  
և ասաց նորան. „պառկի՛ էս տեղ:“

— Ինչի:

— Ին դուր որ, իմ զրաւները դիմ էս տեղ են  
պահած, - պատասխանեց ժլատը:

\* \* \*

❖ Փահանան քարոզում ասաց. „էս կանայքը  
էնալէս հագնուվումեն, որ երեսներին թքելու արժաւ  
նի չեն:“ Կանայք շատ նեղացան և դատաստանին  
գանգատուեցին: Դատաւորը ասաց քահանային. „քո  
խօսքերը կրկին յետ առ:“

— Շատ լւա, - ասաց քահանան: Միւս քարոզումը  
քահանան ասաց. „էս կանայքը էնալէս հագնումեն,  
որ երեսներին թքելու արժանի են:“

\* \* \*

Երկու մարդ գնում էին միասին. Նոցանից մէկը  
գանգատուեց թէ „էս անտէր տեղը կարծեմ ոչու  
վից պակաս մարդ չէմ, բայց ոչինչ հնար չեղաւ ինձ.  
Մ անդամ չկարողացայ առաջ գնալ:“

— Համեցէք, - ասաց միւսը, տեղ տալով նորան:

\* \* \*

Հայրը իւր որդուն զբեց հետեւալ նամակը. ○  
„միրելի՞ որդի, Մկայէլ, ահա քեզ համար ուղարւ  
կում եմ երկու զոյտ գուլպայ: Ամէնքը ողջունումեն  
քեզ: Մեր սրահի գոնակը ներկեցինք կապյոտ զոյնով:  
Մեր կատուն ծնեց չորս միխազոյն ձագեր, որոնցից  
երեքը արու են: Եւ ինձ համար կօշիներ կարեցի:  
Ծխախոտ չ'ծխես, վնաս է: Մենք այս օր եկեցինք  
վլաւ, որ դու շատ ես սիրում, քեզ այդ տեղ տա-  
լիս են վլաւ: Ուրեմն, որդեակս, յոյս ունիմ, որ  
դու աշխատումես. զգովշ կաց, եթէ ծուլանաս, ես  
քեզ դուրս կ'հանեմ այդ տեղեց, և դու կլինիս էշ,  
իսկ մենք էլի կլինինք քո ծնողները:“

\* \* \*

❖ Քաթանեանցին Պետրոսը փողէր պարտ, և գոր-  
ծը գանգատուելուն հասաւ: Պետրոսը հարցրեց.  
„քո՞ ազգն ինչ:“

— Քաթանեանց, - պատասխանեց պարտատէրը:

— Ուրեմն, ներողութիւն, - ասաց Պետրոսը, - քո  
կարզը դեռ չէ հասել. ես պարաքերս այլուրէնի  
վերայ եմ վճարում և դեռ գործս թենի վերայ է  
վերջացած:

\* \*

Փաղաքում իջեանել էր զօրքը և մի զինուոր  
պահանումէր վառօղի մնդուկիները: Մի գոռոցքից  
յիսոյ փայլեց փայլակը: Անցնում կին երկու քաղա-  
քացիք: Նոյանից մէկը աղաղակեց. „Տէ՛ր Աստուած,  
մի թոյլ տար, որ կայծակը վայր ընկնի այս մնդուկ-  
ների վերայ, եթէ ոչ մեր քաղաքը կ'կործանուի:“

— Ի՞նչ ես վախենում, ասաց նորան ընկերը սառ-  
նութեամբ, չե՞ս տեսնում, որ մնդուկիների վերայ  
պահապան կայ կանդնած:

\* \*

Գողը բաղագից մի թոփ չիթ էր գողանում:  
Բաղազը աչքը կպցրեց նորան և ասաց. էղակս  
տարածը ինձ ձեռք չի տայ:

— Ուրիշ տեսակ տարածն էլ, ի՞նձ ձեռք չի տայ,  
ասաց գողը:

\* \*

Օ Մի կին իշաներ էր քշում, Տղամսրդիկը տե-  
սան և ասացին.

— Էն կինը նման չէ էն իշաների մօրը:  
Երբ կինը, իշաները քշելով, մօտեցաւ սոցա,  
ասաց. „ապրէք որդիք:“

\* \*

— Հը՛, ինչ ես շտապում, քոյրդ ինչ բերեց տղայ,  
թէ աղջիկ:

— Ես էլ չգիտեմ: Քոյրս ինձ մօտ եղայր է շի-  
նել, թէ մօրաքոյր:

\* \*

Մէկը ներս մանելով հիւրանոյը, և տեսնելով,  
որ բոլոր անկողինները բռնուած էին, ասաց. եթէ  
այդպէս է, ես կպառկեմ բիլեարդի վերայ: Նա քը-  
նեց այն տեղ: Առաւոտը նորան յայտնեցին, որ քը-  
նելու համար պէտք է վճարէր 4 ո. 80 կոպէկ:

— Ի՞նչպէս, թէ . . . հարցրեց հիւրը զարմացած:

— Որոհեաւ մեր բիլեարդը մի ժամում աշխա-  
տումէ 60 կոպէկ:

\* \*

Բժիշկը այնպէս մնանկացրեց հիւանդին, որ  
լսեղջը հագի շորերից աւել ոչինչ չուանդը  
ասաց. „էս շորերից աւելի ոչինչ չմնաց:“ Բժիշկը  
պատասխանեց. „չես դիտի, որ շորերի վերայ մհլամ  
չի կարելի դնել . . . .“

\* \*

Օ Սակրավէրը մի մարդու գլուխը սակրումէր,  
և որքան տեղ կտրումէր, այնքան բամպակ էր կըպշնում նորա զիլին: Սակրողը ասաց. լա՛ւ, ձեռք վեր ա՛ռ, զիլիս կէսումը հ'օ դու բամպակ ցանեացիր, կէսումն էլ ես սեխ ու ձմերուկ պէտք է ցանեմ:

\* \*

Գողը ներս մտաւ մի տուն, վնդոեց, վնդոեց, բայց երբ ոչինչ չգտաւ, մի թ'ղթի վերայ զրեց. պէտք է ամաչես, որ քո տանը ոչինչ չգտայ:

\* \*

— Կրա՛կ, կրա՛կ, - ճայն տուեց քահանան քարոզելիս, երբ տեսաւ որ շատերը քնած էին:

— Որտեղէ կրակը, ո՞ր տեղէ, - ճայն տուեցին ժողովրդականները արթնանալով:

— Դժոխքումնէ, դժոխքումը, նոցա համար, որոնք քնումեն քարոզի ժամանակը, - ասաց քահանան:

\* \*

— Դու ի՞նչ ես մտածում, եթէ ոչինչ չես մտածում, - հարցրեցին ծաղրածու մարդուն:

— Ես մտածումեմ, թէ ի՞նչպէս պատասխանեմ

այն մարդուն. որ ինձ ոչինչ չէ հարցնում:

\* \*

Երեք, լաւ հագնուած երիտասարդներ, ձիու վերայ նստած՝ պատահելով մի դիւղացու, կամեցան ծաղրել նորան: Նոցանից մէկը ասաց.

— Ես կհաստատեմ, որ դու գոմեշ ես:

— Եդ զարմանալի չէ, - ասաց զիւղացին, - ահա՛ ես կհաստատեմ, որ ձեր թամբերը ջորիք են:

— Յիմարացիւ ե՞ս. գ'է հաստատի՛ր, ա'եսնենք:

— Ես շատ անդամ լսել եմ. որ ինչ որ կայ ձիու և եւ՛ մէջտեղը, նա ջորի է: Երիտասարդները, ոչինչ չասելով, հեռացան:

\* \*

Օ կէս զիշերին, զուռնաշու լուսամտից ձայն են տալիս:

— Ա՛րի, մեծարք կայ:

— Միլիօնով չեմ դայ. - պատասխանեց նա:

— Քեզ երեք մանէթ են տալիս:

— Հա՞ էդ ուրիշ բան է:

\* \*

Մի մարդ գնաց հրաւիրելու լնիերոջը. բայց որովհետեւ տանը չէր, նա մի թղթի վիրայ զրեց.

Էգուց Ճաշին քո ընտանիքով մեր տուն համեցէ՛ք,  
և այդ թուղթը կպցրեց ընկերոջ տան դռան վերայ:  
Հրաւիրուածը եկաւ, նայեց դռան վերայ, կարդաց  
դրածը. և հետևեալ օրը իւր ընտանիքով գնա՛ց  
հրաւիրողի տունը: Ճաշը կերած, ընկերը իւր ընտանիքով  
տուն վերադարձաւ, բայց միւս օրը Ճաշին  
դարձեալ գնաց իւր հրաւիրողի տունը: Այսպէս նա  
գնաց երեք, չորս օր շարունակ: Հրաւիրողը համբերուածինը  
հատած, ասաց վերջապէս. ա՛յ մարդ, իմ  
պահելու դառա՞ր:

— Ի՞նչ անեմ, ե՛ղայր. ասաց միւսը, քանի քո  
տնից մեր տուն եմ գնում, միշտ իմ դռան վերայ  
կպցրած թուղթն եմ կարդում, ., էգուց Ճաշին մեր  
տուն համեցէ՛ք:”

\* \* \*

Աղքատը ողորմութիւն էր խնդրում մի ժլաւ  
տից: Սա աղքատին ասաց. պայման կդնեմ քեզ  
հետ, եթէ կ'կատարես, կ'տամ ի՞նչ որ կամենաս:

— Կ'կատարեմ, - ասաց աղքատը:

— Իմ և քո մէջ այս պայմանը լինի, որ դու  
ոչինչ չխնդրես ինձանից, - ասաց Ժլատը:

\* \* \*

Մի մարդու տուել էին. „էշ“ մականունը: Սա

շատ էր նեղանում, որ շուտ շուտ էշ էին կանչում  
նորան, և մի օր Ճաշ պատրաստեց մի քանի մարդ՝  
կերանց համար, որ այդ անունը վեր առնենին իւր  
վերայից: Ճաշ ուստղները նորա „էշ“ անունը փու-  
խեցին, դրեցին „զողուղ“ (աւանան) անունը: Սա ու-  
րախացած, գնաց իւր ինօջը ասաց. էս օր Ճաշ շի-  
նեցի, անունս վիտսեցին զողուղ դրին:

— Սա՛րսաղ, - ասաց կինը, մեծանաս էլի էշ կը-  
դառնաս:

\* \* \*

— Էս օր ես եօթը զննաղ կ'ունենամ, ասաց  
տէրը իւր խոհարարին, գու պէտք է լաւ Ճաշի պատ-  
րաստութիւն տեսնես, գնա՛, մի հորթ մերթի:

— Ի՞նչք հրամայում, ասաց խոհարարը, մի  
ամբողջ հորթ եօթն մարդու համար, քթերից դուրս  
կ'դայ:

— Բաս դիտես ինչ է, ասաց տէրը, գնա՛, կ'ուը  
մորթի:

\* \* \*

— Ես շատ անբաւական եմ քեզանից, - ասում է  
քահանան հացթուխինո երբ ես լաւ հաց եմ ու-  
զում, ուղարկումեմ հեռու փողոցները:

— Ես էշ այդպէս, տէ՛ր հայր, երբ ուզում եմ լա-

Քարող լսել, դնումեմ հեռու եկեղեցիներ.

\* \*

- Ինչու ես զլուխդ արաղով լուանում:
- Ասումն լաւ մազ կդուրս գայ:
- Մի՞ հաւատար, եթէ այդ ճշմարիտ լինէր, իմ բողազում մի մազի հիւս կդուրս գար:

\* \* \*

- Ուր ես դնում:
- Բաղնիք:
- Ինչու:
- Եպիսկոպոսը ինձ այնպէս սառը ընդունեց, որ միսեցի:

\* \* \*

- Խօսումէին, թէ ո՛վ ի՞նչ դործիք է սիրում:
- Ես մուգիկա եմ սիրում:
- Ես՝ արգանք:
- Իսկ դո՞ւ, պարոն, - հարցրեցին մի հաստափորի:
- Ես՝ շամփուրը:

\* \* \*

Եշը քարափից դորուեց և ընկաւ ջրաղացի վերայ, իսկ այն տեղեց քանդելով՝ ընկաւ ջրաղաց-

պանի կնոջ անկողինը: Կինը աչքերը արորելով, շուռ եկաւ և ասաց. „ա՚խ, հոգիս, հանգիստ թող ինձ:“

\* \*

- Ծառան հարբած, այս այն կողմը ընկնելով՝ տուն եկաւ:
- Ելի դու առաւօտը վաղ վաղ հարբել ես, - ասաց տէրը:
- Ներողութիւն. ես էրեգուանից եմ հարբած, ասաց ծառան:

\* \*

- Մէկը շփոթուած կանգնած էր գերձակի մօտ, որ վեր էր առնում նորա չափուր:
- Խնդիր, նեղ չկարես, - ասումէր նա - ոսներս ցաւումն մազօներից:

\* \*

- Հրաւէրքում մի պարոն հարցրեց. „ինչու կանայքը մօրուք չունեն:“
- Ո՛վ կհամաձայնէր սակրել, որովհետեւ նոքա մի բուպէ բերանը փակ չեն պահում, - պատասխանեց մէկը:



\* \*

Մի պարոն տնից դուրս գնալով, զրան կպցրեց  
մի թղթի կտոր, որի վերայ զրել էր. „Ես կէս գիւ-  
շերին. կվերադառնամ: Ով այս զրածը մընումը  
չկարողանայ հարդալ, թող հարեանից մօմ խողբէ:“

\* \*

Հիւանդի մօտ բժիշկ տարան: Հիւանդի կինը  
հարցրեց նորան:

— Ի՞նչ ես նկատում իմ տղամարդիս վերայ: Բը-  
միշկը ասաց. „Ճեռքերից երևումէ, որ հարինք է  
ընկել:“

— Պա՛րոն, ասաց կինը. իմ տղամարդը նաղշքարէ:  
— Ես կարծումէի, հարինք է... ասաց բժիշկը:

\* \*

Գողերը պատահեցին մի հարբած մարդու, որ  
նստած էր ձիու վերայ: Նոքա նստացրեցին նորան հա-  
կառակ կողմից: Հարբածը տուն գնալով՝ կնոջը ա-  
սաց. „Ճանապարհին գողեր պատահեցին և ձիու  
դլումը կարեցին:“

\* \*

Իր շտապով դուրս էր գալիս տնից և տների

մօտ գիպաւ կովին, վեր առաւ գտակը և ասաց.  
„Ներողութիւն, տիկին:“ Յետ նայեց և տեսաւ ու-  
մից ներողութիւն խնդրեց: Մի փոքր յետոյ նա մի  
քուչայում գիպաւ մի կնոջ: Մտաքերելով նոր պա-  
տահածը, նա աղաղակեց բարկացած. „Է՛լի դու իմ  
ոտներիս տակն ես, յիմար անասուն:“

\* \*

Գիւղացին էշը առաջ քշելով, գիւղն էր գը-  
նում: Ճանապարհին մէկը ասաց գիւղացուն.

— Դու էդ գեղն ես գնում. բարեկամիս տե՛ս, ասա՛-  
շուտ մեր տուն գայ, շտա՛պի:

— Թոէ որ ըսենց շտապով հարկաւոր գործ կայ,  
ասաց գիւղացին, հրէն իմ էշը ինձանից առաջ է  
վազում. նրան ասա՛:

\* \*

Մարդ և կին սաստիկ կռուեցին: Քահանան  
եկաւ հաշտեցնելու և ասաց. „Դուք պէսք է միաբան  
լինէք, ինչ որ ճեղանից մէկն է կամենում, էն էլ  
միւսը պէտք է կամենայ...“

— Կռիւն էլ զրանումն է է՛, տէ՛ր հայր-պատաս-  
խանեց ամուսինը, - ես էլ եմ կամենում տան մէծը  
լինեմ, կինս էլ է կամենում:

\* \* \*

Երբ ժլասը իւր տան համար ծառայ էր վարձում, միշտ տեղեկանումէր, թէ արդեօք նա զիտէ՞ր շուացնել և երբ իմանումէր որ չդիտէր-չէր վարձում նորան; Երբ այդ բանի պատճառը հարցրեցին, պատասխանեց.

— Որովհետեւ ես իմ ծառային մէնակ եմ ուղարձում սարդափը զինի բերելու, և բոլոր ժամանակը, քանի որ նա էն տեղ է, պէտք է շուացնէ, որ ես իմանայի, թէ նա զինի չէ խմնում:

\* \* \*

Ծանր բեռնաւորած իշխ ետևից գնում էր զիւղացին, և ճիպոտով սաստիկ խփում էր անաւունին: Մի կին լրւամոից ձայն տուեց.

— Դու խղճմտանք չունես՞:

— Զէ՛, աղջեկ պարոն, պատասխանեց զիւղացին, ես սրանից աւել ոչինչ չունիմ:

\* \* \*

ՎԱՐԺԱՊԵՏԸԼ: Ի՞նչպէս են ասում լատիներէն  
,,ժառանգութիւն”:

ԱՇԱԿԵՐԸԼ: PATRIMONIA

ՎԱՐԺԱՊԵՏԸԼ: Ի՞նչ նշանակում PATRIMONIA

ԱՇԱԿԵՐԸԼ: Մի բան, որ թողել է հայրը:  
ՎԱՐԺԱՊԵՏԸԼ: Իսկ եթէ մի բան թողել է մայրը,  
նորա ի՞նչպէս կանուանէք:

ԱՇԱԿԵՐԸԼ: MATRIMONIA

V \* \*

Դատաւորը պարձենում էր:

— Զարմննալին այն է, որ - ասում էր նա - այս աստիճանը ստանալու համար ոտս մի քայլ առաջ չեմ դրել:

— Յայտնի բան է, - ասաց մէկը, - մի՞թէ քայլեր են դնում, երբ սողում են:

\* \*

Ժլատը առաւօտը ներս է մտնում հիւրանոյը և հարցնում է:

— Ի՞նչ արժէ Ճաշը:

— 50 կոպէկ:

— Իսկ ընթրիքը:

— 30 կոպէկ:

— Եթէ այդպէս է, ինձ ընթրիք տուեցէք:

\* \*

Մարդասպանին տանում էին խեղելու:  
— Ի՞նչու այդ բան շտապում էք, - ասաց մարդասպանը, - չէք զիտում, որ առանց ինձ բան չի լինիլ:

Սմուսինը ինչ առնում էր, կինը ամենեին  
չէր հաւանում: Կնոջ համար շոր առաւ և կինը  
ասաց. դուն զիսի սովոր ես փիսը ջոկել:  
— Փաերի ջոկելը քեզնից սովորեցի, ասաց ա-  
մուսինը:

\* \*

Տէրը իւր ծառային մի պարկ ածուխ բերել  
տուեց: Ծառան պարկը դատարկեց, տարաւ ածխա-  
պանին պահ տուեց, և երբ տուն եկաւ, քունը  
տարաւ, քնեց: Տէրը զարթացրեց նորան և ասաց.  
,,սուփրէն գցի՛, հայ ուտենք:“

— Տարայ, տարայ, - ասաց ծառան:

\* \*

Երկու եղայրներ բաժանվում էին և միջնորդ  
ընտրեցին: Այդ ժամանակը անբաւականութիւն, պա-  
տահեց, և փոքր եղայրը հայհոյեց մեծին:

Մեծը նեղացաւ և ասաց.

— Ինչ՞ ես հայհոյում ինձ, միթէ քեզնից եր-  
կու շապիկ աւել չեմ մաշել:

— Ես էլ էդ եմ գանդատում է, ասաց փոք-  
րը, որ դու միշտ ինձանից աւելնորդով ես մաշել:



\* \* \*

Մի մարդ այնքան գրասեր էր, որ շաբաթներ  
կ'անցնէին, չէր մտաքերում իւր կինը: Մի անգամ  
կինը ներս մտաւ նորա սենեակը և տեսաւ, որ նա  
զրքերի մէջ թաղուած էր՝ հօգոց հանեց և ասաց.  
— Այս, երանի՛ ես էլ զիր ըլեմ: - Ինչ՞ Հարց-  
րեց ամուսինը: Էնդուր որ գեշեր ու ցերեկ դու  
զրքերդ ես միտդ բերում:  
— Ես համաձայն եմ այդ բանին, միայն այն պայ-  
մանով, որ դու օրացոյց լինիս:  
— Ինչ՞:  
— Որովհետեւ նա ամեն տարի վոխվում է:

\* \*

Փահանան պատուիրեց նկարչին եկեղեցումը <sup>⑤</sup>  
գժոկը նկարել նկարիչը գժոկը նկարեց, քահա-  
նային էլ մէջ բերեց այնտեղ: Փահանան շատ նե-  
ղացաւ և դանդատուեց դատաստանին: Դատաւորը  
քահանային ասաց. „ինձ միւս աշխարհի դատաս-  
տանը չ'են յանձնել:“

\* \*

Հիւրը սեղանից մի վառիկ գողացաւ և զրեց  
զրպանը: Հրաւիրողի ծառան ծառուկ մօտեցաւ

նորան և մի ամանով սուպ' թափեց նորա գրպանը:  
— Ինչ ես անում, ասաց գող-հիւրը: Ծառան պատասխան տուեց. „վառիկը ջուր չեւ ուզի՞լ, մինչեւ տուն կտանես, հօ ծարաւ կիսեղոսուի:

\* \*

Ժլատը մեռնելիս ասաց. „Աստուած, առողջացրու ինձ, օրէնը տասը մանէթ կուտեմ. . . .”

\* \*

Մի քաղաքում գիշերով գտնվում էր մի օտարական: Երբ նա շորերը հանել էր և կամենում էր մտնել անկողինը, հանեց զրպանից մի զյդ հողաթափ, հագաւ, ամուր կապանքներով կապեց ոտների վերայ և յետոյ պառկեց անկողնում: Այդ միջոցին խօսեց նորա հետ մի այլ օտարական, որ գիշերում էր միւնոյն սենեակում:

— Պատուական բարեկամ, դուք ինչի՞ էք այդպէս անում:

— Զգուշանալու համար, ասաց, որովհետեւ միանցամ երազումն ոտիս տակը մի շուշա ընկաւ, և այնպէս սաստիկ ցաւեցրեց ոտս, որ ես այն օրից ամենեին բորիկ ոտներով չեմ մտնում անկողին:

\* \*

Մէկը ողորմութիւն էր խնդրում մի հարստից:

— Ողորմութիւն տո՛ւր ինձ, թէ չէ, էնակէս բան կանեմ, որ իմ կեանքումն չեմ արել: Հարուստը վախեցաւ, որ չխեղդուեր նա, և տուեց բաւական փող, յետոյ հարցրեց նորան:

— Ինչ կանէիր, եթէ չտայի:

— Մշակութիւն կանէի, - պատասխանեց խնդրողը:

\* \*

Մէկը բեռնաւորել էր իւր ձին և ինքը նըստած էր վերան: „Մեղք է անասունը, ասաց նա, մի փոքր թեթևացնեմ բեռը:“ Բեռան մի մասը շալաւեց իւր ուսերին և նստեց ձիու վերայ:

\* \*

Մօլլան քարոզում էր և լսողներից մէկը լսց էր լինում դառնապէս: Հարցրեցին նորան պատճառը:

— Ես մի սիրուն էծ ունեի, շատ էի սիրում. Երբ մօլլան խօսում է և արմբ արմբացնում է իւր մօրուքը, միաքս է գալիս իմ էծը և ես լսց եմ ըլում, պատասխանեց նա:

\* \*

Երիտասարդը շատ չարչարում էր մի Հրէայի և Հրէան ասաց.

— Ինձ հանդիսա թո՛ղ, այնպիսի խօսք կասեմ

քեզ, որ քու կեանքումը քեզ ո՛չ ոք չի ասել:  
 — Ասա, ասաց երիտասարդը:  
 — Դու իմաստուն ես, - ասաց Հրէան:

\* \* \*

Գողը ներս մատ մէկի տունը և թրխի-թրխուկացրեց սէնեակի դուռը:

Տան տէրը չէր կարողանում վեր կենալ ցրալցը, և ձայն տուեց:

— Ո՞վ ես:

— Ի՞նչ ես հարցնում, թէ ո՞վ եմ, - ասաց գողը, - դուռը բաց արա՛:

— Փաշի թոկը, - ասաց նա, և դուռը կբացուի: Գողը դուռը բաց արեց, ներս մտաւ և ասաց. „ակտք է փողերդ տաս:“ Տան տէրը ասաց. „փողը ահ՛ա այն պահարանումն է դրած, հանի՛ր և տար:“ Գողը հանեց փողերը. դուրս գնաց և դուռը բաց թողեց: Քնողը ձայն տուեց անկողնից. „գո՞նէ դուռը փակիր:“ Գողը ականջ չդրեց, ինքը վերկացաւ, - դուռը փակեց և ասաց. անիծածը դուռն էլ բաց թողեց . . . .

\* \* \*

Օ Մէկը սովորցրեց մի թութակի ասել. „ի՞նչ տարակյս կայ դորանում,“ և տարաւ ծախելու: Մէկը հարցրեց թութակին:

— Արժե՞ս հարիւր մանէթ:  
 — Ի՞նչ տարակյս կայ դորանում, - պատասխանեց թութակը: Սորան շատ հաւանեց հարցնողը և գնեց, բայց ի՞նչ ասում էր նորան, միշտ միւնոյն պատասխանն էր լսում, մինչև վերջապէս փոշմանեց և ասաց. „շատ յիմարացայ, որ դնեցի այս թուզունը:“

— Եւ ի՞նչ տարակյս կայ դորանում, - ասաց թութակը:

\* \* \*

Եկեղեցու պատի վերայ նկարած էր Սիքայէլ հրեշտակապետը, որ սպանում էր սատանային: Պատաւը մէկ մոմ վառեց հրեշտակապետի առջեւ, միւսը սատանայի առաջեւ:

— Ի՞նչ ես անում, մայրիկ, - աղաղակից քահանան, - դու սատանային մատաղ ես բերում:

— Ես գիտեմ ինչ որ անում եմ, պատասխանեց պառաւը, - ո՞վ գիտէ. ես որտեղ կընկնեմ, վնա՞ս չունի, լսւ է ամեն տեղ բարեկամներ ունենալը:

\* \* \*

Վ արժապետը կամենում էր հասկացնել աշառ կերտներին, թէ ինչ է քիթը: Նա հարցրեց աշառ

Օ կերտներին .,,դուք ամենքդ քիթ ունեք և ի՞նչու  
համար են .,,լոռութիւն ; Վերջապէս աշակերտներից  
մէկը սիրտ առաւ և ասաց .,,վաշտալու համար .,,

\* \* \*

Օ Ժվատի որդին մեռնում է և սա գնում է  
դագաղ առնելու : Ներս է մանում խանութը ,  
տեսնում է , որ մէկը իւր որդու հասակին լաւ  
կդայ և հարցնում է .

— Առա զինը ո՞բքան է :

— 5 մանէթ , - պատասխանում է դագաղագործը :

— Ո՛չ . ասում է ժլատը . - 3 մանէթ կտամ , այս  
փոքրիկ դագաղն էլ տո՛ւր հետը :

— Դագաղագործը չէր համաձայնում , վերջապէս  
երկուսը միասին առաւ 4 մանէթով և տուն էր  
տանում : Երբ բարեկամները բաց արեցին , տեսան  
մէջը մի փոքրիկ դագաղ էլ և հարցրեցին . Երկուսը  
ինչու ես առել :

— Եժան էր , - պատասխանեց ժլատը :

\* \* \*

Օ Վարժապետը դրում է .,,ա . բ . դ . դ .,, և  
հարցնում է նոր եկած աշակերտին : Ապա իմացիր  
էս ի՞նչ գրեցի :

— Դուն ես զրել ու չես գիտում , պատասխա-  
նեց աշակերտը :

Յիմարը , երբ առաջին անգամ լողալ սկսեց և  
խեղղվում էր , ասաց .,,ես այսուհետեւ ոտս ջուր  
չեմ դնիլ , մի՞նչև որ լողալ չովորեմ :,,

\* \* \*

— Դու երբ պէտք է հաղորդուիս , - ասում էր  
տէրը ծառային , - յիմար գն'ա , հաղորդուիր , խոս-  
տովանիր :

— Ես ի՞նչ պէտք է ասեմ . - հարցրեց ծառան :

— Ինչ որ քահանան կասէ քեզ , գուն էլ կըրկ-  
նիր , ուրիշ ոչինչ :

Ծառան գնայ , չողեց խոստովանացնողի առաջին :

— Աս'ա՝ մեղայ Աստուծոյ . - ասում է քահանան :

— Աս'ա մեղայ Աստուծոյ , - ասում է խոստո-  
վանողը :

— Յիմա՞ր ես , ի՞նչ է :

— Յիմա՞ր ես , ի՞նչ է :

— Կո՞րի՛ գնա՛ :

— Կո՞րի՛ գնա՛ :

Քահանան հողաթափով խիեց նորա զլիին ,  
իսկ ծառան էլ խիեց իւր արեխով քահանայի  
զլիին :

— Ետ ի՞նչ դժուար է եղել խոստովանուիլը ,  
ասում էր յետոյ ծառան իւր տիրոջը . - ի՞նչու  
առաջ չասեցիր , որ թուվանքս էլ հետս տանէի :

\* \*

Սի հասարակութեան մէջ մէկին խնդրեցին  
մի անելգօտ ասել: Նա սկսեց. „կատուն մտաւ  
մարաքը . . .“ ասաց և լոեց: - Յետոյ ի՞նչ էլաւ,  
հարցրեցին նորան ամեն կողմից:

— Յետոյ յայտնի բան է, մի տեղեց դուրս կդնար  
էլի, - ասաց պատմողը:

\* \*

Վ արժապետը աշակերտներին սովորցրել էր.  
որ երբ ինքը փոշատօք, նոքա ծափ տային և ասէին.  
„առողջութիւն:“ Սի անգամ դոյլը ջրհորն ընկաւ:  
Վարժապետը ասաց աշակերտներին, որ ինքը իւր  
մէջքին թոկ կ'կապէր և աշակերտները ջրհորի բե-  
րանի մօտ բունեն թոկի ծայրը: Այդ պէս էլ  
արեցին: Վարժապետը ներս մտաւ և յանկարծ  
ջրհորում փոշտաց: Աշակերտները խկոյն թոկը  
թողեցին և ծափ տուին, „առողջութիւն:“ վար-  
ժապետ:

\* \*

Աւաղակները զիշերով կողոպտում էին եկե-  
ղեցու զարդերը, խաչերը, պատկերները . . . : Վեր-  
ջապէս մէկը սեղանը բարձրացաւ, և հաւաքում էր

ոսկէ և արծաթէ պատկերները:

— Վ այ, - ասաց նա, - էս ի՞նչ արեցի, արելսնե-  
րով սեղանը բանձրացայ:

— Վ նաև չունի, ասաց ընկերը, - սիրտդ դուդ  
լինի, թէ չէ տրեխները ի՞նչ:

\* \*

Վ աստիճանաւորը Աբարանու զիւղը գնալիս պա-  
տահեցաւ մի զիւղացու:

— Որ տեղեց ես գալիս,

— Աբարանից:

— Բաս դու յիմար ես, որովհետեւ բոլոր արա-  
րանցիք յիմարներ են:

— Ես յիմար չեմ, - պատախանեց զիւղացին  
չունքի ես գնում եմ էն ճանապարհով, որ դու ես  
եկել, և չունքի դու գնում ես էն ճանապարհով, որ  
ես եմ գալիս:

\* \*

Վ էկը իւր բարեկամին ճաշին հարիսի վերայ  
հրաւիրեց: Ճաշեց յետոյ նա հարցրեց.

— Այս ի՞նչ կերակուր է:

— Հարիսայ:

Հիւրը անից դուրս եկաւ, „Հարիսայ հարի-  
ս կրկնելով. ճանապարհին նա մոռացաւ անունը

և արդէն ցիսի մէջն էր ընկել: Մի անցաւոր հարց-  
բեց դորան:

— Յիսումն ի՞նչ ես մանգալիս:

— Մի բան եմ կորցրել: - Միւսը կարծելով, թէ  
մի լաւ բան էր կորածը, ինքն էլ մտաւ ցեխը և  
սկսեցին փնտռել. բայց ոչինչ չգտան:

— Աղքեր, - ասաց անցաւորը, - մենք էս ցեխը  
էնքան արորեցինք, որ հարիսայ դառաւ:

— Հա՛մ, ես էլ էդ էի կորցրել. - ձայն տուեց  
առաջինը ուրախացած:

✓ \* \*

Պարոն բժիշկ, - գանգատվում էր հիւանել, -  
ես ոչ կարողանում եմ կանգնել, ոչ նստել, ոչ  
պառիել:

— Կախուեցէք եթէ այդպէս է, - պատախանեց  
բժիշկը:

\* \*

Եդ խոտը ի՞նչքանի կ'ծախես, - հարցրեց քա-  
հանան մի իշապանից, որ քշում էր խոտով բեռ-  
նաւորած էշը:

— 50 կոպէկի, չու:

— 30 կոպէկով չես տ'ալ:

— Չեմ տալ, ա'տէր, չու:

— 35—ով:

— Չեմ տալ, ա'տէր, չու:

— 40—ով կ'տաս:

— Չուշ, ա'տէր, չուշ, արի՛ տար:

\* \*

Ճշատը մի մարդու ձաշի հրաւիրեց, բայց Ըկարողացաւ լաւ պատիւ տալ:

Երբ հիւրը զուրս եկաւ նորա տնից, աչքերը  
խուփ արած տուն էր գնում: Հարցրեցին նորան.

— Էդ ի՞նչ ես անում:

— Ինչ եմ անում, ասաց. - Աստուած մ'արասցէ,  
որ ես սովորեմ էս ճանապարհը, թէ չէ քաղցած  
կմեռնեմ:

\* \*

Մի մարդ Հրէային վողէր պարտական: Հրէան  
շատ նեղացրեց իւր պարտապանին. և նա ճարեց  
փողը, տուեց Հրէային և ասաց. „ահա՛ քո վողեւ-  
րը և վեկսիլը: - Այս վեկսիլը կ'եր այս բոսկիս, թէ  
չէ այս սրով զլուխտ կ'արեմ:“

Հրէան ահից կերաւ վեկսիլը. ինչ կարող էր  
անել: Պատահեց որ պարտապանին դարձեալ փող  
հարկաւորուեց: Գնաց միենոյն Հրէայի մօտ: Հրէան  
ասաց. „եթէ վեկսիլը խնձորի վերայ կզրիս, փող  
6

կտամ, եթէ ոչ չեմ տայ:”

\* \*

Երբ ձաշը վերջացած էր, հիւրերը դուրս էին գնում, նոցանից մի շատակիր մարդ ասաց. „Հայրս սիրում էր շատ ուտել, մայրս սիրում էր երկար ժամանակ նստել ձաշին, իսկ ես սիրում եմ երկուսը միասին,“ ասաց և անշարժ մնաց իւր տեղում:

\* \*

Մէկը պատահելով մի կոյրի, աչքերը փակեց, գնաց՝ դիսաւ նորան և ասաց. „Ի՞նչ արեցի՞ր, ինչ խփեցիր քոռ մարդիս:“ Կոյրը ասաց. „Ներողութիւն, ես էլ կոյր եմ:“ Աչքաբաց մարդը հանեց մանկթանոցը և կոյրին ասաց. „Էս փողը բաշխեցին ինձ, չեմ զիտում ընշանոց է:“ Կոյրը ասաց. „Հայրս ոսկերիչ էր. ես կիմանամ,“ այս ասելով փողը առաւ նորանից և փախչում էր: Աչքաբայը ձայն տուեց. „այ մարդ, ի՞նչ արեցիր էդ փողը, վայ, անպատճառ մանկթանոց էր. նա փախաւ:“ Աեր առաւ մի քար և ասաց. „Աստօծ, եթէ քեզ ձշմարտութիւն ունիս, թող, էս քարը զիաւ չե էն քոռին:“ Կոյրը վախեցաւ և ձայն տուեց. „այ մարդ, մուլափի չխփես, ես էստեղ եմ:“ Աչքաբայը ասաց. „Այ, դու անպիտան, ես որ քոռ.

ըլ'էի, խօ կտանէիր էդ փողը.“

\* \*

Գերեզմանաքարի վերայ գրած էր. „ումը փող հարկաւորի, թող քանդէ այս գերեզմանը և մեծ հարստութիւն կ'գտնէ:“ Այս բանը կարդաց մի ժամ, փորեց և մէջը գտաւ մի տախտակ, որի վերայ գրած էր. „եթէ դու ագահ մարդ չլինէիր, մեռածի գերեզմանը չէիր փորիլ:“

\* \*

Մի մարդու սովորյնում էին, որ թագաւորի հետ խօսելիս էլ բառը չ'ասէր: Գնաց նա թագաւորի մօտ և ասաց.

— Կէցցէ՛ թագաւորը. թէ որ էլ ասեմ. խօ կպատճես, թէ էլ չ'ասեմ, չ'ես պատճիլ, բաս ես էլ էլ չ'եմ ասի:

\* \*

Մի տան միջից կռուի ձայներ էին լավում: Փահանան ներս մտաւ և հարցրեց.

— Ես կամենում էի իմանալ, թէ ո՞վ է այս տան մեծը:

— Կստիր, տէր՝ հայր - պատասխանեց պապը, - և մի փոքր սպասիր. իմ տղես և իմ հարսը հեց  
6\*

այդ բանի վերայ են խօսում - կովում:

\* \* \*

Տէրը իւր ծառային ուղարկեց իմանալու, թէ պիշերը ի՞նչ պէտք է ներկայացնէին թատրոնում: Ծառան վերադարձաւ այս պատասխանով: „Առաջ Անզվական փայլուն վակս Միջե - փողոցում, Ղորդանեանցի տանը,“ իսկ յետոյ „Աւազակներ“ - Վակով. յայտարարութիւնը կախ էր արած աջիշի վերայ:

\* \* \*

Բժիշկը ծառային սովորյնում է. „Գրիգոր, եթէ առաւօտը մարդ կդայ, ասա՛ տանը չեմ,“ ասում է և քնում: Առաւօտը դալիս են երեք մարդիկ, և ծառան պարոնի դուռը բաց անելով, բարձր ձայնով կանչում է.

— Աղա՛, երեք մարդ են եկել, ասեմ տանն է, թէ տանը չի:

— Յիմա՛ր, ի՞նչ բղաւում. դէ ասա՛, տանն է. պատասխանում է բժիշկը:

\* \* \*

Եկեղեցու խաչերը իւր տոպրակը լցնելուց յետոյ՝ գողը ձեռք տուեց սեղանի մօտ դրած աւետարանի արձաթէ խաչին: Բայց նա կամեցաւ իմանալ,

թէ, եթէ պատահմունքով բաց անէր աւետարանը, ինչ բան կլինէր զրուած: Բաց արեց Աւետարանը և կարդաց այս խօսքերը.

— Մի՛ շնար, մի՛ գողանար ... , նատե՛ մի՛ խօսիլ, մտիր՝ տոպրակը, “ասաց գողը, պոկելով խաչը:

\* \* \*

Ցեմարը քնելիս իւր որդուն կողքին պառկեցնում էր և միշտ հարցնում:

— Մա՛րկոս, քնեցի՞:

— Հա՛. քնեցիր՝ Յետոյ հայրը աչքերը փակում էր և քնում:

\* \* \*

Գրիշերով փողոցում աւազակը պատահում է մէկին և ասում:

— Կամ փողերդ, կամ կեանքդ:

— Ես էլ էդ պէտք է ուզէի քեզանից, - ասաց միւսը:

\* \* \*

Պատախօս սափրավէրը հարցնում էր. —

— Պա՛րոն, ինչ պէս էք հրամայում սափրել ձեր մօրուքը:

— Ուինչ չխօսելով, - պատասխանեց միւսը:

Համապատակ զմուն այս խոհեմայք այդ այս  
և լինաղառամայ չըկա ը\* \* ծարաց զմուն մայ այս

**Մէկը** գետումը լողանում էր, յանկարծ գետի  
ափին վազող կառքը շուռ եկաւ և երկու կին վայր  
ընկան միջից: Լողնորդը բարձրացնելով նորանց  
գետնից, ասաց. „ներեցէք տիկնայք, որ ձեռնոց-  
ներ ըռնիմ:“

— **Եւ** հանաք չես անում, - ասաց **մէկը** ծաղրա-  
ծու մարդուն:

— **Հա՛**, ումը ասում եմ, թէ դու իմաստուն ես,  
չեն հաւատում:

**Աւազակին** տանում էին կախելու: Ճանապար-  
հին նա պատահմունքով վայր ընկաւ, և վերկենա-  
լով ասաց. „վատ նշան է, իմ տեղը ուրիշ լինէր,  
ամբողջ օրը տնից չէր դուրս գայ:“

— **Կտեսնես'**, ես քեզ կսպանեմ. - բարկանալով  
ասում էր մի մարդու բժիշկը:

— **Ամենեին** չեմ վախենում, որովհետեւ երբ  
հիւանդանամ քեզ չեմ հրաւիրիլ:

\* \* \*  
**Տէրը** իւր ծառային տուեց երկու մանէթ  
ասելով՝

— Ես մէկ մանէթի շաքար առ. էս մանէթի էլ-  
չայ: Ծառան դուրս գնաց, բայց շուտով տուն  
վերադարձաւ:

— Ինչի՞ չես առել. - հարցրեց տէրը: Պատասխան  
տուեց ծառան.

— Ճանապարհին մանէթները խառնուեցին ջերում.  
ու երբ հասայ դուքանը, չէի գիտում, թէ ո՛ր մա-  
նէթի պէտք է առնէի չայն և ո՛րով շաքարը:

\* \* \*  
○ **Մէկը** իւր մատների վերայ բռնած ունէր մի  
թութակ: Երեխան թռչունը տեսնելով՝ ուրախա-  
ցաւ և մօտեցաւ նորան գգուելու:

— **Զգոյշ** կա'ց. ասաց նորան թութակի տէրը.  
սա քեզ կ'կծի:

— **Բայց** ինչո՞ւ քեզ չէ կծում, - հարցրեց երեխան:

— **Որովհետեւ** ինձ ճանաչում է:

— **Բաս** ասա զրան որ իմ անունը „Պօղոս է,“  
խօսեց երեխան:

\* \* \*  
**Մի** մարդ պանիր էր գողացել և փողոցումը

տեսնում էր մի քանի մարդիկ հաւաքուած խօսելիս,  
մօտենում էր և հարցնում նոցա . ի՞նչ, պանիրը :

\* \*

— Ես օր ի՞նչ ես կերել:  
— Ոչ ի՞նչ:  
— Երանի՛ քեզ, որ դու դոնէ ոչ ի՞նչ ես կերել,  
բայց ես որ ոչ ի՞նչ էլ չեմ կերել: . . .

\* \*

Հարցրեցին մի երեխայի .  
— Քանի տարեկան ես :  
— Քանի՞ , - ի՞նը . - պատասխանեց երեխան :  
— Երեգ քա՞նի տարեկան էիր :  
— Երեգ, փոքր ժամանակը :  
— Հա՞ . փոքր ժամանակը :  
— Հինգ տարեկան էի . պատասխան տուեց  
երեխան :

\* \*

Քահանան ներս մօտաւ տպարանը և հարցրեց .  
— Եղ ի՞նչ զիրք էք տպում :  
— Աւետարան, - պատասխանեց զբաշարը :  
— Աւետարան, էրի հա՞ , ասաց քահանան, ես  
հէնց զիտէի թէ աւետարանը երկնքիցն է զիվեր եկել :

66

Չմեռ ժամանակ զիւղացին ներս մօտաւ քաղաքացու տունը :

Առաջին անգամը, երբ նա տեսաւ սենեակի  
մշջտեղումը տաքացրած վառարանը՝ հարցրեց .

— Ես ի՞նչ է :  
— Փիէ է . ասաց տան տէրը : Գիւղացին կարծելով՝ թէ նորան ասում են խէչ (խաչ) է . չոգեց և  
համբուրեց վառարանից : Խակոյն ձայն արձակեց, բերանը հետ քաշելով :

— Տէր Աստօծ, էս ի՞նչ զօրաւոր խէչ է :

\* \*

Հիւանդը մեռնելիս կանչեց իւր կնոջը և ասաց.  
Ես մեռնում եմ, բայց լի՞ր իմ վերջին խրն-  
զիրը. եթէ կամենում ես, որ ես հանդիսաւ մեռնեմ,  
կարապետի հետ չպահպուես, ես նորան շատ եմ  
ատում :

— Ո՛չ, հանդիսաւ մեռիր՝, ասաց կինը . ես ուրիշն եմ խօսք տուել :

\* \*

Մի քանի մարդիկ ինդրեցին մի հովուի, որ  
նա ածէր իւր սրինդը, ինչպէս ածում էր ովար-

Ները ժողովելու ժամանակը։ Հովհել սկսեց սուլել  
(շուայնել) կամաց ձայնով։ Կտղները ասեցին նորան։

— Այդպէս չլինի, բարձր ածա։

— Զէ, ասաց հովհել, - երբ անասունները մօտիկ  
են, էսպէս կամաց ենք ածում։

\* \* \*

**Մէկը**, կամենալով ցոյց տալ իւր քահանային,  
թէ իւր որդին գիտէր սրբազն պատմութիւն, ասաց  
նորան քահանայի առաջեւ։

— Արամ, ասա մեզ, ո՞վ է ստեղծել երկինքը  
և երկիրը։

— Գիտեմ, հայրիկ, - պատասխանեց երեխան։

— Ի՞նչպէս չգիտես, յիմար, - ասաց նորան հայրը։

— Մի բարկանալ, հայրիկ, ասաց երեխան, ես  
եմ ստեղծել. էլ չեմ ստեղծիլ։

— Քահանան կարծելով թէ մի ուրիշ հարց-  
մունքի լաւ պատասխան կտար, ասաց նորան։

— Աիրելս, ո՞ր օրը մեռաւ Ֆիառոս, Գրիտոս։

— Տէր հայր, ասաց երեխան, ես դեռ չեմ սո-  
վորել այնքանը՝ թէ նա հիւանդացել է։

\* \* \*

**Աղքատը** ասաց մի հարստի։

— Պարոն, դուք պէտք է ինձ բաւական ողոր-

մութիւն տաք ձեր հարստութիւնից, որովհետեւ  
մենք երկուսս էլ մէկ ընտանիքի որդիք ենք, երբ ա-  
ռաջ ենք եկել Աղամից։

— Այս, ասաց հարստատը. ահա՛ քեզ երկու  
կոպէկ, և հաւատացնում եմ քեզ, եթէ քո միւս  
աղքականներդ էլ այդքան տան, դու ինձանից էլ  
շատ կհարստանա։

\* \* \*

Երկու մարդ էին խեղգում։ Խ'կ այն բոպէին,  
երբ այդ մարդասպաններին բարձրացրին կախաղմնի  
վերայ և թոկը գցեցին նոցա վեզը, յանկարծ հա-  
ւաքուած ժողովրդի մէջ մի ահաւոր ձայն բարձրա-  
ցաւ. մէկ եզը թոկից յետ էր եղել և վազելով ամեն  
կողմը՝ գետին էր գցում իւր պողերով ամեն բան,  
ինչ որ պատահում էր։ Խեղգուողներից մէկը իւր  
ընկերոջը ասաց. „Գէ՞որդ, ի՞նչ լաւ է, որ մենք  
էն խալխի մէջը չենք։“

\* \* \*

Երեխային ասացին. ինչի՞ պաս կերար։

— Պաս չեմ կերել. միս կերայ։

\* \* \*

Պա'րոն, այստեղ չպէտք է ծխել, - ասաց կան-

գուկտորը երկաթուղու վագոնում նստողին, - տեսանում էք այս յայտարարութիւնը. , բոլոր պարզնաերին խնդրում են չծխել:“

— Բայց ես պարզն չեմ, ուրեմն կարող եմ ծխել:

\* \*

Օ Ժամը գնում էր անտառի կողմը իւր որդու հետ: Յանկարծ դուրս փախաւ մի արջ. բռնեց հօրը իւր ծնօտների մէջ և տանում էր. որդին կամենում էր պողի խիել արջին, իսկ հայրը ձայն էր տալիս. , բութ բերանու խիի, մորթին ըլնասես, որ կարողանամ ծախել:“

\* \*

Ա՛յ, ես կ'յանկանայի ունենալ քո փողերը, - ասացին Հրէաին:

— Ի՞սկ ես կ'յանկանայի ունենալ քո խելքը, այն ժամանակ երկուսս էլ ոչինչ չինք ունենալ:

\* \*

Ա՛յ հիմա խելքը ես, - ասում էր մայրը իւր Փոքրիկ երեխային:

— Որ խելք եմ, մայրիկ, մի քիչ թողնես ցխումը ման գամ, - ասաց երեխան:

\* \*

Մի հասարակութեան մէջ մի պարծենկու խօսում էր:

— Ես այնպիսի կաղամբ տեսայ, որի տերեների տակը 1000 մարդ էր անձրեխց պաշտպանվում:

— Իսկ ես այնպիսի պղնձ տեսայ, որին շնորուհամար 300 մարդ էր աշխատում, - ասաց միւսը:

— Բայց ի՞նչի համար է այնքան մեծ պղնձը, հարցրեց առաջինը:

— Վո տեսած կաղամբը մէջը եփելու, - պատասխանեց երկուդը:

\* \*

Հրէան թողեց իւր դաւանութիւնը և մլըրատուեց Հայոց եկեղեցումը:

— Վո ողորմած հոգի հայրդ, որ իմանայ, վախից միւս կողքի վերայ կշուռ գայ, - նախատելով ասում էր մի այլ հրէայ:

— Վ նաս չունի, - ասաց - նոր մլրտուածը, - միշաբաթից յետոյ էլ եղբայրս կմլրտուի, և հայրս էլի կշուռ գայ, միւս կողքի վերայ կպառկի:

\* \*

Մի երիտասարդ տեսնելով մի օրիորդ, ասաց. — Քէփս դալիս է, որ տեսնում եմ զեղեցիկ:

6

աղջիկ: Օրիորդը նեղանալով ասաց. , չիսկ գուշ յիշ  
մար և անձնունի: “

— Այ քեզ բան, - ասաց երիտասարդը, - հազիւ  
ես կարողացաց մէկ սուտ խօսել, իսկ սա երկուսը  
ասաց:

\* \*

Հիւանդը մեռնելիս կտակումը զրել տուեց.  
,, մէկ մանէթ էլ տալիս եմ տիրացու Մարդարին,  
ոչ թէ այն պատճառով, որ երգէ, ոյլ լուէ:

\* \*

— Ու ոք ինձ տեսութիւն չէ դալիս, - անքալով  
գանգատվում էր հիւանդը:

— Ենպէս պէտք է լինի - ասաց միւսը, - ի՞նչու  
պարտքերդ վճարեցիր:

\* \*

Վարդապետի ծառան մի օր խնդրեց վարդա-  
պետից, որ թոյլ տար գնալու իւր քրոջ հարսա-  
նիքը մի ուրիշ գիւղում: Վարդապետը թոյլ տու-  
եց, և ծառան դուրս գնաց: Արդէն նա ձիով ան-  
ցել էր մի քառորդ ժամնուայ ճանապարհը, երբ յան-  
կարծ վարդապետը միւս ծառային. ուղարկում էր

նորան շուտով յետ կանչելու: Զարմացած ծառան  
տուն էր գալիս իմանալու, թէ ի՞նչ է պատահել:

— Արայն դուռը փակի՛ր, ասաց վարդապետը, և  
յեաց շարունակիր՝ քո Ճանապարհը:

\* \*

Երբ աշակերտները դուրս էին գալիս ուսումնա-  
րանից, տեսան մի զիւղացի, որ իշաները քշում էր:  
Խշաները միաձայն զւացին:

— Աւանակ, ասացին աշակերտներից մի քանիսը,  
չես կարող իշաներիդ մի փոքր մարդավարութիւն  
սովորցնել:

— Ի՞նչ անեմ, պարոններ, երբ իշաներս իրանց  
ընկերներին տեսնում են, ուրախութենից զռում են:

\* \*

Գիւղացին քահանային խոստովանելիս ասաց.

— Հարեանիս ոչխարը գողացել եմ:

— Տար, յետ տուր, - ասաց քահանան, թէ չէ  
արձակում չեմ տալ:

— Ես վաղուց կերել եմ, տէր հայր:

— Որդի պէտք է յետ տաս, թէ չէ գատաստա-  
նի օրը էն ոչխարը քո առաջդ կ'կանգնի:

— Աւելի լաւ. էն ժամանակը ոչխարը կվերառնեմ  
և կ'տամ հարեանիս:

\* \* \*

Օովի վերայ դնալիս նաւավարը բարձրացրեց  
վերաւորուած ընկերոջը և ծովն էր դցում։  
— Ախար դեռ ես չեմ մեռել. - ասաց ընկերը։  
— Առ'ւտ ես ասում, բժիշկը քեզանից լաւ գիտէ,  
նա ասաց, որ դու մեռածես։

\* \* \*

Գերեզմանաքարը փորագրողը մեռնողի տարիքի  
համար սխալուելով գրել էր 89։ Նորան ասացին,  
որ սխալ է, մեռնողը 90 տարեկան էր, թող մէկ  
տարի էլ աւելացնէ։ Փորագրողը 1 տարի էլ աւելացրեց և դուրս եկաւ. 891։

\* \* \*

Երկու մարդ պատահեցին միմեւանց մի նեղ  
փողոցում, և ոչ մեկը չէր կամենում ճանապարհ  
տալ միւսին։

— Ես երբէք յիմարներին ճանապարհ չեմ տալիս,  
ասաց մէկը։  
— Իսկ ես միշտ, ասաց միւսը և ճանապարհ  
տուեց։

\* \* \*

Հարբածը գինետնից դուրս դալով ասում էր .

\*, բժիշկները ասում են, թէ երկու բաժակ գինին  
կարող է մարդուս պահպանել ամբողջ օրը. իսկ ես  
երկու շիշ գինի եմ խմել և չեմ կարողանում  
ոտքի վերայ կանգնել։“

\* \* \*

Բռնուած աւազակը եկաւ դատաւորի առաջ  
սկ շորերում հագնուած։ Երբ հարցեցին պատճառ-  
ուր, նա ասաց, ես առաջուց սգի շորեր եմ հագ-  
նում իմ մահուան վերայ, որովհետեւ իմ մեռնեւ-  
լուց յետոյ, ովկ մոքով կանցկացնէ սկ հագնել  
իմ վերայ։

\* \* \*

Մի պարոն զրեց հետեւեալ յայտարարութիւնը  
, իմ շունը կորել է. ով կ'գտնէ, նորան 20  
կոպէկ կ'բաշխեմ։“ Մի քանի օրից յետոյ նա աւելացրեց Յերեք օրից յետոյ փախել է իմ կինը, ով նորան յետ կըերէ, կ'նծայեմ նորան հինգ կոպէկ։“

\* \* \*

Փահանան ծառային ուղարկեց միս առնելու. Օ  
իսկ ինքը գնաց եկեղեցին քարոզելու. Մսավաճառի  
անունը Դաւիթ էր։ Ծառան միս առնելուց յետոյ  
ներս մտաւ եկեղեցին քարոզը լսելու, այն բոպսէին,

երբ քահանան քարոզումը ձայն տուեց, „ի՞նչ աշաւց Դաւիթը:“ Ծառան ժողովրդի միջից ձայն տուեց. „Ասեց մինչև տեր հայրը չվճարէ խորովածացուի փողը, ել միս չեմ տայ ձեզ. . . . :“

\* \*

**Մի** օր պոչտալիոնը այնքան շիոթուել էր, որ մոռանալով իւր ազգը, մի նամակ վաղեցնում էր ամեն կողմը, ամբողջ օրը որոնելով Պետրոս Մարտիրոսեանցին (իւր ազգը:)

\* \*

**Օ Տէրը** հարցրեց իւր ծառային, Մարտիրոս, որ տեղ ես լինում այս երեք գիշերները, որ միշտ առաւօտն ես տուն գալիս: „Ծառան պատասխան տուեց.“ բժշիկ ծառան ինձ տասց. թէ խոլերան Մարդու բոնում է գիշերուայ տասը ժամից մինչև Մարդու բոնում է գիշերուայ տասը ժամից մանակից ման եմ գալիս փողոցներում, որ խոլերան ինձ չկարողանայ դանել:

\* \*

**Օ Զիու** վերայ նստած՝ մի պարոն պատահեց զիւղացուն, որ պարկերը ալիւրով լարձած իշխ վերայ գնում էր ջրաղացը և հարցրեց:

— **Գիտե՞ս** ի՞նչ զանազանութիւն կայ իշու և ձիու մէջը: Գիւղացին պատասխանեց: „Այն զանազանութիւնը, որ էշը իւր վերայ պարկեր է տանում. իսկ ձին ախմախ մարդուն:“

\* \*

**Հ**արսանիքից դուրս գնալով. մի պարոն ձաննաս պարհին իմացաւ միայն որ լաւ կոնծել է. որովհետեւ այս - այնկողմը լնինելով, պատերից էր կազում: Մի փոքր գնալուց յետոյ նորան երեսում էր. թէ ամէն բան իւր չորս կողմը պտուտ է գալիս: Նա կանգնեց. զրպանից հանեց բանալին և անդադար շուռումուռ էր տալիս ձեռներում: Այդ ժամանակ մօտեցաւ գիշերապահը, և տեսնելով այս բանը լուսնի լուսով, հարցրեց:

— Ուստայ ի՞նչ ես անում:

— Ես մի բան եմ վիքր արել. ես կենում եմ էս փողոցումը, չունքի բոլոր տները պտուտ են գալիս, ես մնում եմ, թէ եփ պէտք է կարգը հասնի իմ տանը, որ գայ էս կողմը և ես էլ էն նմաւոին գուռը բաց անեմ:

\* \*

**Ք**անի տարեկան ես, - հարցրեց աստիճանաւորը զինուորին:

— Քսան երկու, - պատասխանեց զինուորը, - բայց հիմայ ես քսան երեք տարեկան կլինէի, եթէ ամբողջ տարին հիւանդանոցում չպառկէի:

\* \*

**ԱՌԿՐ ԽԻՐ ԼՈՒՍԱՄՈՒՅՑ ԹԵՍԱԼ ՍԱՎԻՐԱՎԵՐԻՆ և ՃԱՅՆ ՄՈՌԵՅ:**

— Դու կանչուած էս :

— Ոչ, - ասաց սավիրաւվերը, - սպասելով, որ այդ պարոնը կ'կանչէր իւրեան :

— Դէ, եթէ այդպէս է, մի շոավիր, - ասաց ճայն տուողը, - կամաց զնա՛:

\* \*

**ԶԱՅՈ ԺԱՄԱՆԱԿ ՀԻՒՐԱՆՈԳՈՒՄ ՄԱՐԳԻԿ ԼԻՔՆ ԷՒՆ:** Նէրս է մննում Հրէան, բայց նորան չեն թուղում; Հրէան շատ աղաճեց, վերջապէս մէկը այսպէս առաջարկեց նորան :

— Եթէ դու մի այնպիսի հանելուկ կ'ասես, որ մենք չենք կարող մեխել, քեզ, ամէն մէկս մի մասնէթ կտանք և նէրս կթողնենք մեզ մօտ:

Հրէան հարցրեց: „Այն ի՞նչ ձուկն է, որ եփուելով երկու ամաններում, գաւնում է երկու ձուկ, բայց էլք մի ձուկն է և ունի մի անուն;” Հատ մուածեցին, բայց իզուր: Հրէան ամէնքից ստա-

ցաւ մի րուբլին և ներս մտաւ սենեակը: Բայց այստեղ նորանից պահանջում էին լուծումը:

— Ես էլ չգիտեմ, ասաց Հրէան, և այդ պատճառով տալիս եմ մի մանէթը:“

\*

**ԻՄ ՈՐԳԻՆ ԱՐԳԻՆ ՈՒՍՈՒՄԸ ԱՒԱՐՄԵց և առեւս ՄԱՍՈՎ ԳՈՒՐԾ ԵԿԱԼ:**

— Այս ի՞նչ է, - ասաց լսողը, - իմ որգին այնպէս լաւ է պատասխանել հարցաքննութեան ժամանակը, որ վարժապետները խնդրել են նորան, որ միւս տարի մէկ էլ հարցաքնուի:

\*

**ՔԱՀԱՆԱՆ ՔԱՐՈՂՈՎՄ ԷՐ ԵԿԵՂԵցՈՎՄ. յանկարծ ամպը սաստիկ ձայնով գոռաց:** Քահանան այնքան վախեցաւ, որ մոռացաւ քարողի շարունակութիւնը, որ սովորել էր անգիր: Բայց նա չշփոթուեց սորանով: Ծածկելով իւր առաջեւը դրած Աստուածաշունչը, նա ասաց, Նրբ Աստուած խօսում է, մարդը պէտք է լուէ, և սկսեց վերջին Հայր մերը:“

\*

**ՄԻ ԿՈՅ ԱՍՈՒՄ է միւսին:**

— Ես, հրաւիրուած եմ շաքար-ծախող կարապիւտի տանը, խնդրեմ էզուց դու զնաս իմ փոխանակ.

\*

— ինչու գու չես գնում, -հարցրեց միւսը:  
— Ես էգուց չեմ կարող լաց լինել, որովհետեւ  
եղայրս մեռել է:

\* \*

Ինչու չես ծախում երեսիդ որինչ: - ասացին  
մի սև երես մարդու:

— Ե՛ք, ինչ անեմ, -պատասխանեց, - ես շատ  
անգամ սյդ պատճառով գնացել եմ պղնձագործի  
մօտ, բայց նա ինձ պատասխանել է թէ. , , ,  
~~առաջ է լին որդին է, առ այսու էշ է:~~

\* \*

Բերդում բռնուածը գրեց իւր պարաստիրոջը,  
զու ինձ բռնել տուեցիր բերդումը, և ամեն օր  
ծախս ես անում 50 կոտէկ իմ ճաշի փող, ինչ-  
րեմ, ինձ ազատիր՝ այս տեղից, և ինձ օրական մի-  
այն 25 կոտէկ տուր, իսկ մնացածը հաշուիր՝ իմ  
պարտքումը:

\* \*

Իմ պատկիրը այնպէս լաւ պէտք է հանես,  
ասում էր մի օրիորդ պատկիրահանին, -որ ինձ այն-  
պիսի մարդիկներ ճանաչեն, որոնք ինձ ամենեին  
չեն տեսել:

\* \*

Մի խեղճ մարդ բժիշկ հրաւիրեց իւր հիւանդ  
կնոջ համար: Բժիշկը կասկածում էր, թէ նորան  
կարո՞ղ էին վարձատել:

— Ես ձեզ 10 մանէթ կտամ, եթէ իմ կինս  
կմեռցնէք կամ, կրժշկէք ասաց տղամարդը: - Զու-  
րորդ օրը հիւանդը մեռաւ: Բժիշկը եկաւ իւր վար-  
ձը ստանալու:

— Միթէ, դուք մեռցրիք իմ կինս -հարցրեց  
նոր այրիացածը:

— Աստուած մ'արասցէ:

— Ուրեմն դուք բժշկեցիք:

— Այդ անկարելի էր:

— Եթէ այդպէս է, դուք իրաւունք չունէք 10  
մանէթ ստանալու:

\* \*

Գողը փախաւ, բերդից: բայց երկար ժամանակ  
անգործ մանգալով՝ նա կրկին վերադարձաւ բերդը և  
լնդրեց, որ նորից ընդունեին. որովհետեւ այն տեղ  
գոնէ նորան կերակրում էին ամեն օր ձիաբար, բեր-  
դի վերատեսուչը, քննելով այդ. զործը. գրեց հե-  
տեւեալ հրամանը, ,որովհետեւ խնդրողը ինքնակամ  
յօժարութիւնով թողեց բերդը. ուստի մերժել  
նորան իւր խնդիրը:“

\* \* \*

Մի մարդ զնում՝ էր մի պարոնի համար աճր-  
դով (տորդ) սեղան առնելու։ Ճանապարհին նորան  
պատահեցաւ բարեկամը և միւնոյն բանը խնդրեց  
նորան։ Սկսուեցաւ գործը։ Ոճրդախօսը ցոյց տուեց  
սեղանը և յայտնեց զինը։ Մի քանի պարոններ ձայն  
տուեցին 4 5 անգամ և էլ չեն աւելացնում 4  
մանէթից։ Իսկ մեր խելօք գործակատարը անդադար  
առաջ մի բարեկամի կողմից, յետոյ միւսի կողմից  
աւելացնելով ասում էր։ , ինձ շատ հէտաքրքրում է  
իմանալ, թէ իմ բարեկամներից որին կընկնի  
սեղանը։”

\* \* \*

Քաղաքագլուխը, սպասելով թագաւորի գալ-  
ստեանը, բերանացի մի ձառ էր պատրաստում։ Երբ  
թագաւորը եկաւ, քաղաքագլուխը սկսեց այսպէս  
, թագաւոր՝, այն ուրախութիւնը. որ մենք զգու-  
մենք տեսնելով ձեղ, այնքան մեծ է. որ . . . .  
Այս տեղ նա այնքան շիռթուեց որ մռացաւ շա-  
րունակութիւնը։ Թագաւորի մեծամեծներից մէկը՝  
կամենալով օգնել քաղաքաղլիին ասաց, „Այն ու-  
րախութիւնը, որ դուք զգումէք, այնքան մեծ է,  
որ չէք կարողանում լեզուով ասել։”

\* \* \*

Երբ ես մի յիմար բան եմ ասում, առաջին  
անդամ միշտ ես եմ ծիծաղում։

— Բաղդատոր ես, ուրեմն, դու շատ ուրախ  
պէտք է անցկացնես կեանքդ։

\* \* \*

Տէրը. Գնա՛, տես՛ արեկի սհաթը. սհաթի  
քանիսն է։

ՆԱՌԱՆ. Աղա՛, ախր հմի գշեր ա։

Տէրը. Ի՞նչ կայ մի ճրադ վեր կար։

\* \* \*

Քահանան, կամենալով իւր քարոզը բարձրից  
սկսել, ասաց, „ո՞ր տեղից սկսեմ ես. ինչի՞ վերայ  
խօսեմ։” Մի պառաւ, կարծելով. թէ քահանան  
չեր պատրաստուել քարոզելու, ձայն տուեց, „Տէր  
հայր այժմ, ուշ է մտածել, թէ ի՞նչի վերայ քա-  
րոզես. դորա վերայ տանը պէտք է մտածել։”

\* \* \*

Յարութիւն Համբարձումեանին հարցրեցին-թէ  
ի՞նչպէս էր նորա անունը և հայր-անունը։

Որովհետեւ հարցնողը Ուռւ էր, նա պատասխան  
տուեց ուռսէրէն, „Յօք Վոսկրեսենիւ Բաշտում!“

\* \* \*

Աշակերտների ազգանուները ցուցակում՝ կարգալիս վարժապետը ձայն տուեց, „Քրիստոս՝ Զանաւանց՝ փոխանակ Քրիստովորի։“

\* \* \*

Պատարագիչ քահանան շատ ցանկանում էր քթախոս քաշել: Դորա համար նա դարձաւ դէպի ժողովուրդը և ասաց „Սիրելի ժողովուրդ, ձեզանից շատերը սովորութիւն ունեն, որ պատարագի ժամանակ բռնօթու կողմից կհանեն (այս ասելով ինքը հանեց իւր տուփիկը) և այսպէս կքաշեն բռնօթին (քրեց իւր քիթը) ի՞նչ է, մեղք չէ։“

\* \* \*

Ապանեացին ասում էր գերմանացուն, ձեր լեզուն շատ կոշտ լիզու է, ևս կարծում եմ. որ Աստուած ձեր լեզուով բարկացաւ Ադամի վերայ:

— Այսո՛, ձեր լեզուն շատ կակուղ է, - պատասխանեց գերմանացին, - և ևս կարծում եմ. որ օծը ձեր լեզուով խարեց Եւային։

\* \* \*

Ուսումնարանումը հարցաքննութիւն կար Ա. արժապետը առաջարկեց մի աշակերտի հետեւալ հարցը

,,Եթէ ես ունենայի կարկանդակ, և <sup>2/12</sup> տայի գէւորդին, <sup>2/12</sup> Սարգսին, <sup>2/12</sup> Մարկոսին և կէս կարկանդակ ինձ համար պահէի, քեզ ի՞նչ կ'մնար։“ Աշակերտը երկար չմոտածելով, պատասխանեց ամանը։

\* \* \*

Գէորդ, - Հարցնում էր փաստաբանը մի ծանօթի. որին նա յիմար էր կարծում. - քո կարծիս քով ի՞նչ բան է ամենազարմանալին աշխարհիս վերայ :

— Ազնիւ փաստաբանը և այրուող գետը:

\* \* \*

Դերասանը. որ բեմի վերայ երգեց մի քանի կուսլետներ կատուի, շան, աքաղաղի, ձիու.... վերայ, արդէն հեռանում էր բեմից: Գալերէց մէկը ձայն տօւեց, , իսկ եշը ի՞նչպէս է զում, , , հենց այդ պէս, - պատասխանեց զերասանը՝ հեռանալով բեմից:

\* \* \*

Հիւրանոցում սեղանի վերայ մի ուսանող երկար ժամանակ խօսում էր իւր զիտութեան վերայ: Վերջապէս ներկայ եղողներից մէկը հարցրեց: „Մենք այժմ բաւական լսեցինք այն մասին, ինչ որ դուք

զիտէք, պատմեցնք այժմ, լինչ չժիշտչ դուք: „Այդ  
ես կարող եմ ասել երկու խօսքով.՝ ես չգիտեմ  
ինչպէս վճարեմ ճաշի փողը:“

\* \*

Կինը և իւր ամռախնը մոտածում էին. թէ  
ինչպէս ուրախացնեն իւրեանց աղջկան նորա ծնն-  
դեան օրը: - Գիտմու, լինչ է, - ասաց ամռախնը կնու-  
ջը արի՝ ծածուկ սովորենք նորանից ֆրանսերէնը:

\* \*

Ծառան յայտնում է իւր տիրոջը, որ նորա  
մնդուկը դողացել են աւազակները: „Յիմարները  
չգիտեն, որ բանալիքը իմ ձեռքիս է, ասաց:

\* \*

Պառաւը որ ջերմում էր, բժիշկ հրաւերեց:  
Սա եկաւ, քննելով հիւանդի բազկի զարկը՝ և տես-  
նելով որ ջերմը սասափի էր, հարցրեց. թէ քանի  
տարեկան է: Հազիւ, թէ պառաւը ասաց որ ութ-  
սուն տարեկան է. բժիշկը յետ ձգեց նորա ձեռքը  
և ասաց բարկացած, „Միթէ կի շատ էք կամենում  
ապրել:“ Այդ խօսքերը բերանին նա դուրս գնաց:

## II. ՄԱՍՆ

Մի անդիւացու ասացին, թէ „մարդը միակ  
կենդանին է, որ կարողանում է ծիծաղել:“

— Ճշմարիտ է, - պատմախաննեց նա, - դորան նոյն-  
պէս կարելի է աւելացնել և այն. թէ. „մարդը մի-  
ակ կենդանին է, որի վերայ կարելի է ծիծաղել:“ ○

\* \*

Բնական պատմութեան պրոֆէսաօրը պատուի-  
րել էր ուսանողներին ժողովիլ գէօլոգիքական տիւ-  
բեր և բերել դասատուն: Մի անգամ ամբիոնի վե-  
րայ դարսուած էին մի քանի հետաքրքրական տիւ-  
պեր, որոնց մէջ մէկ ստահակ դրել էր հասարակ  
աղևսի կտոր: Պրօֆէսաօրը, վեր առնելով մէկը  
միւսի ետեից ասում էր, աս Քարիտի տիսն է,  
Զէշայրեան հանքերից . . . աս դաշտային շտապի կտորն  
է Պրտլանդից . . . աս կվարց է Գաղամից, . . . իակ  
ահա՛ այս, - ասաց նա վեր առնելով աղիւսը, - այս

տեղ գտանուողներից մէկի անամօթութեան տիպն է:”

\* \* \*

Քահանան իւր քարոզի բնաբանը ընտրել էր երկրորդ պատուիրանքը և մեղադրում էր ժողովը դին նորանով, որ նոցանից իւրաքանչիւրը ունէր իւր կուռքը, որին նա զոհ էր մատոցանում: Քարոզի վերջը ժողովուրդից մի կին նկատեց քահանային. „Զէ, որ, տէր՝ հայր, դուք էլ ունիք կուռք, ծխախոտը:”

— Այդ պէս է, բայց ես նորան այրում եմ անխնայ, - պատասխանն էր քահանայի:

\* \* \*

Պատարանի զրագիրը գանձապետից խնդրեց յաջորդ ամսուայ ռոճիկը. բայց զեռ ամիսը չլրացած մեռաւ: Փոքր ժամանակից յետոյ գալիս է միւս զրագիրը և նոյնպէս խնդրում է ռոճիկը ժամանակից առաջ, պատճառ բերելով տօները:

— Ո՛չ, պատասխանում է գանձապետը, - ես միւս զրագրին էլ այդպէս փող տուեցի, բայց զեռ ժամանակը չլրացած մեռաւ, և նորա ամսական ռոճիկը խնձանից պահանջեցին:

— Բայց, պարոն, մի՞թէ ես ցածութիւն կանեմ:

\* \* \*

Ի՞նչ է խսկապէս փիլսոփիայութիւնը, - հարցուց մատաղահաս և գեղեցիկ օրիորդը մի ուսումնականի:

— Սատել ձեր կողքին և չշփոթուել, - պատասխանեց նա քաղաքավարութիւնով,

\* \* \*

Հասարակական զբոսարանում երեւցաւ մի սապատող մարդ: Երիտասարդներից մէկը ասաց, „նայեցէք նոր Նզօբոսին:”

— Այս, Նզօպոս է, - պատասխանեց սապատողը, որովհետեւ կենդանիներին ստիպում է խօսել:

\* \* \*

Ի՞նչ բան է էշ, - գոյակմն թէ բայ, - հարցրեց վարժապետը:

— Բայ, - պատասխանեց աշակերտը, - որովհետեւ կարելի է ասել, ես էշեմ, դու էշ ես, նա էշ է:”

\* \* \*

Քաջամարդիկի Հրէայ զինուորին առաջարկեցին ընտրել երկու պարգևներից մէկը. Երկաթեայ խաչ կամ 35 տալեր: Հրէան հարցրեց.

— Ի՞նչ արժէ խաչ:

— 1<sup>1</sup>/<sub>2</sub> տալեր:  
 — Եթէ այդպէս է, - ասաց Հրէան, - տուեցէք ինձ  
 33<sup>1</sup>/<sub>2</sub> տալեր և երկաթեայ խաչ:

\* \*

○ Մօլլա - Նասրէդդինը փողոցումը ցեխն ընկաւ.  
 և տեղեց վերինալով, ասում էր.

— Օ՛հ խայտառակուեցանք աշխարքումը, էս ի՞նչէ:  
 բայց երբ ըրս կողմը նայեց. տեսաւ, ո՛չ ո՛ք տես-  
 սող չկար, ասաց. „Էհ առաջ էլ մի զատ չեինք:“

\* \*

Ե՞րբ են ձաշում Վաշինգտոնում վաճառա-  
 կանները:

— Երկու կամ երեք ժամին:  
 — Ի՞նչ ուշ է: - Իսկ հարուստները:  
 — Երեքին կամ չորսին:  
 — Իսկ ծառայողները:  
 — Երեկոյեան վեց ժամին:  
 — Իսկ սննօտի անդամները:  
 — Ութ կամ ինը ժամին:  
 — Տէ՛ր Աստուած. բայց նախագահը:  
 — Կախագահը, - նա միայն հետեւեալ օրն է  
 ձաշում:



\* \* \*  
 Կոշկակարը յայտնում է հասարակութեանը,  
 „Ես շարունակում եմ խիրուրդիքական օպերացիա-  
 ներ անել հին կոշիկների և կիսակոշիկների վերայ. . .“  
 Իմ աշնանային կոշիկները առաջդական են ինչպէս  
 կօնդրէսի ակտը, բայց զարմանալի կերպով օգտագո-  
 տեն ուղղղ ձանապարհով գնացողների համար, նոցա-  
 պնդութիւնը հաւասար է ծշմարտութեանը. և նո-  
 քա այնպէս յարմար են գալիս ոսներին, ինչպէս  
 անմեղութիւնը երեխայի դէմքին:

\* \*

Երիտասարդները խօսում եին սովորնացող  
 պատերազմի վերայ:

— Պարոններ, ինչու ենք վախենում, - նկատեց  
 մէկը, - չէ, որ մենք Սամվասն ունինք: Նա մէ՛նակ  
 կարող է ոչնչացնել թշնամու գորքը. Ամենքը ծի-  
 ծաղեցին: Փոքր Սամվասնը պատասխանեց.

— Դուք ծշմարիտ էք ասում, բայց կատարեալ  
 յաջողութեան համար ես կիմողիւմ չնորհել ինձ  
 ձեր ծնուներից մէկը:

\* \*

Ասում են, դուք լաւ երամիշտ էք: Ի՞նչ

կարողէք ածել :

— Ամեն բան, ի՞նչ կամենաք :

— Դուք ածում եք „ծիծառակլ”<sup>“</sup> :

— Ածում եմ :

— Իսկ, հայոց աղջիկներ :<sup>“</sup>

— Եղիպէս ածում եմ :

— „Ինձ համար չէ :<sup>“</sup>

— Ածում եմ :

— Գէ, ածեցէք բոլորը միասին. ևս շտապում եմ :

\* \*

Ի՞նչպէս ցաւում եմ, ասաց մէկը ընկերոջը, ի՞նչպէս ցաւում եմ խեղճ՝ կարապետին, նորա աչքերը համարեա բոլորովին փակուեցին և ոչինչ չէ տեսնում:

— Թող՝ ամուսնանց, - պատասխանեց ընկերը, - և եթէ այն ժամանակ նորա աչքերը չեն առողջանալ, նշանակում է, ցաւը անբժշկելի է :

\* \*

Մի ֆրանսիական եկեղեցում բարձրացաւ բէմի վերայ նոր ատենաբան: Բազմաթիւ հասարակութիւնը նստած լսում էր լրած ուշագրութիւնով: Ատենաբանը հավեց, հանեց թաշկինակը, որի հետ դուրս թափուեցին և մի կապոց խաղաթղթեր:

Բարձրացաւ սաստիկ ծիծառ, Ամենասբանը, ամենենին չ' շփոթուելով, հրաւիրեց մօտիկ նստած երախաներից չորսին հաւաքելու թղթերը: Ապա գառնալով դէպի չորս Աւետարանիների պատկերները սկսեց հարցնել երախաներին նոյցա անունները: Ոչ մէկը նոցանից չգիտէր Աւետարանիների անունները: Յետոյ ատենաբանը դարսեց նոյցա առաջեւ չորս թագաւորների պատկերները խաղաթղթերից: Երախաները միաձայն ասացին նոյցա անունները:

— Ահա, այսպէս եք կրթում ձեր որդքերանցը, ասաց բարձր ձայնով քարտպաղը, սոքա չեն ձանաշում ոչ մի Աւետարանիչը, բայց խաղաթղթերի անունները շատ լաւ զիտեն: „Յողովովի վերայ զարմանալի տպաւորութիւն թողեց, և մ.ծ մասը դուրս եկաւ եկեղեցուց, համազուած լինելով, որ խաղաթղթերը դիտմամբ էր բերել և շաղ տուել.”

\* \*

Քանի ժամանակ կայ, - հարցրեց վարժապետը:

— Երեք, - պատասխանեց աշակերտը:

— Որո՞ք են:

— Բարի լցո, բարի օր և բարի երեկո:

\* \*

Յովհաննէս: - ածում էր տիկինը ծառացին,

Հրամայիր՝ լծել կարէտը և վեր առ կարտօչիքը,  
ես զնում եմ վիզիտների։ Ես ոչ մի տեղ չեմ  
դուրս գալ կարէտից, և որ տեղ մենք կ'կանգնենք  
դու թող՝ այն տեղ մի թուղթ։» — « Հրամերես,  
տիկին» - պատասխանեց ծառան, Պատելով կէս քաշ  
զաքը և բաժանելով շատ պատկերներ. տիկինը  
նկատեց. «Այժմ պէտք է զնալ էլ Պ. Մարտի-  
րոսեանցի տունը։»

— Զի կարելի, - յայտնեց ծառան, ինձ մօտ մնա-  
յել է միայն սե տասնանոցը, - Վիզիտի կարտօչիքը  
տեղ նա վեր էր առել խաղաթղթերը։

\* \* \*

Գիտե՞ս բազմապատկման աղեւսակը, - հարցրեցին  
երեխային։

- Գիտեմ։
- Ուրեմն, ո՞րքան կ'լինի մէկ անդամ մէկ։
- Եղքան մեծ բաները գեռ չեմ սովորել։

\* \* \*

Տիրացուն շատ դժուարանում էր յաճախ կրկ-  
նել Սէդրոքի, Միսաքի և Աբեղնազովի անունները,  
որովհետեւ այդ անունները Դանիէլի երրորդ զլխումը  
կրկնվում են տամներկու անդամ, ուստի տիրացուն  
բաւական համարեց առաջին անդամ կարգով ասել,

իսկ վերջին անդամները ասել միայն. « Լեռոյէւեալ  
պարոնները։ »

\* \* \*

Երիտասարդը հասարակութեան մէջ հարցրեց  
մի երեկով զերասանի։

— Ի՞նչ զանազանութիւն կայ վօղեկիլ, կատակ-  
երգութեան և ողբերգութեան մէջ։

— Պատասխանը ձեր հարցի մէջն է, ասաց գե-  
րասանը, - այն, որ դուք չգիտեք դոյա զանազանու-  
թիւնը, - ինձ համար վօղեկիլ է, ձեզ համար ողբեր-  
գութիւն, իսկ բոլոր այս ներկայ եղողների համար  
կատակերգութիւն է։

\* \* \*

Երկու ձանապարհորդներ պատահեցին միմեանց  
ուրբաթօրը։

- Բարով Գէորգ, ո՞րտեղից ես գալիս։
- Բարով Մարտիրոս, Թիֆլիսից։
- Ե՞րբ ես դուրս եկել։

— Շաբաթ օրը։

- Վա՛, շաբաթը էգուց է։
- Ես շտապեցի, վաղ դուրս եկայ, շատ հարկա-  
որ գործ ունեի։

Արամի Անսա զգմանաբան միջնամ խո  
\* \*

Մի պարոն վիճեց իւր ծանօթի հետ, և վրէժ  
առնելու համար առաւոտը վաղ նորա դռների վե-  
րայ զրեց. Հետև չետևեալ օրը թշնամին երկե-  
ցաւ նորա դռների մօտ. և տալով նորա ծառային  
իւր վիզեան կարտօչին, ասաց.

Երեկ քո տէրը մէր տանն էր, և դուռը չբա-  
նալով զրել էր իւր անունը իմ դռներին վերայ,  
տուր նորան իմ կարտօչին. և ասա՛, որ ես եկայ  
նորան վերադարձնելու իմ վիզեան:

\* \*

Երբ ֆոնտնէլին հարցրեցին ի՞նչ բան է գեղե-  
ցի կինը, - պատասխանեց.

— Աչքի զրախտ, հոգու դժոկք, քատիկ  
քաւարան:

\* \*

Հարուստ Ժլատը իւր նոր տան պատի վերան  
կամենում էր նկարել տալ, իսրայէլացւոյ անցումն  
կարմիր ծովի վերայով բայց դորա համար շատ  
փոքր դումար էր խոստանում: Նկարիչը քաթանի  
վերայ նկարեց մի մեծ կարմիր շերտ:

— Այս ի՞նչ է, - ասաց բարկացած Ժլատը, - դուք

ծիծաղում էք ինձ վերայ:

— Ամենեին: Դուք պատուիրեցիք նկարել ան-  
ցումն կարմիր ծովով, և ահա ձեղ կարմիր ծովը:

— Բայց ո՞ւր են չրէայքը:

— Հրէայքը արդէն անցան: Մի՞թէ դուք կար-  
ծում էիք, որ այդպիսի արժան գնով կարելի էր  
նկարել ծովն էլ, չրէաներն էլ:

\* \*

Մ. Նասրեդինը ճանապարհին քշում էր իւր  
իշաները: Նա համարեց և տեսաւ, որ բոլորը եօթն  
են, նստեց մէկի վերայ, համարեց նորից, տեսաւ,  
որ վեցն են: Իշուց ցած դարով, նա մասձում էր  
իւր մէջ, զարմանալի բան է, համարում ես, բո-  
լորը եօթն են, նստում ես - տեսնում ես վեցն են:

\* \*

Մի անգամ արքունական քարտուղարը ասաց  
Նապալէօն առաջինին. - , թա՛զաւոր, դուք ան-  
դառնեղի կերպով սպանեցիք յեղափոխութիւնը:

— Ախալիում էք, - ասաց Նապալէօնը, - ես Կառան  
(զամբեկա) եմ այն երեսի վերայ, որ տեղ կանգնեց  
յեղափոխութիւնը. բայց երբ ես կ'մեռնեմ, այն  
նշանը կ'թերթէ երեսը և կ'շարունակէ ճանապար-  
հորդութիւնը:

\* \* \*

Մի կարծեցնալ ուսումնական հաստատում էր թէ  
— Կենդանիները հասկացողութիւն ունին բարոյ  
և չարի վերայ;  
— Երեխ նորանք մի անդամ կերել են արգե-  
լուած խոսք:

\* \* \*

Օ Իմ արհեստը աւելի հին է, - ասում էր փաս-  
տաբանը, - նա սկսվում է համարեա աշխարհի սկզ-  
բից: Կայենը սպանեց Արելին - ահա ձեզ ոչ ո՞ւ դոչ:  
— Իսկ իմը, - ասաց բժիշկը, - բոլորովին կից է աշ-  
խարհի ստեղծագործեան հետ: Եւան ստեղծու-  
եցաւ Ադամի կողմից, - ահա ձեզ իշխութիւնին:  
\* \* \*

\* \* \*

Փոքրիկ ծառային հարցնում էր վարձողը:  
— Քո եղայրը քեզանից մեծ է, թէ փոքր:  
— Առաջ փոքր էր ու... հիմա զգիտեմ ինչպէս  
է: պատախանեց ծառան:

\* \* \*

Անդիհային ներս է մանում մի խանութ և

պահանջում է ամենանուրբ ժապաւէն: Ընտրելով  
մի կտոր, նա հարցրեց, , ի՞նչ կարժենայ սորա մի  
մասը. մի ականջից մինչեւ միւս ականջի երկայ-  
նութիւնով: “Ասե զնոսով: զնոսով և զնոս ճան  
— Երկու զինէին այս վեց ամս ունի ամս  
— Լաւ, - ասաց գնողը, և հանեց երկու զինէին,  
իմ աջ ականջը զլիսիս վերայ է, իսկ ձախը՝ բրիս-  
տոլումը, առաջին սիւնի վերայ, բայց որովհետեւ  
ձեր խանութում այդքան ժապաւէն չէք ունենալ,  
ուստի ես առ այժմն բաւականում եմ այս կտորով:  
Վաճառականը իրաւացի համարելով գնողի պա-  
հանջը, առանց վիճելու տուեց նորան կտորը, որ  
կունենար 10 արշին երկայնութիւն:

\* \* \*

Հոգեհացին օտար քահանան երեք տօլման մի  
լուի կտորի մեջ էր փաթաթում և ուտում:

— Տէ՛ր հայր, - հարցրեց մեռելատէրը, - ձեր գիւ-  
ղում քանի մեռել են մի պատանքում կօլորւմ:  
— Թէ որ մեծ ա' մէկը, - ասաց քահանան, - թէ  
որ փոքր են, երեք - չորս մի պատանում ենք  
փաթաթում:

\* \* \*

Հոգեհացին Անդիհայի ուսումնական նիւտոնը

մի անդամ այնքան շփոթուած էր, որ աղախինը  
բերեց ժամացոյցը և մէկ ձու և տալով նորան, ապայ,  
որ թող նայէր ժամացոյցին, որովհետեւ ձուն երեք  
բռուէ պէտք է եփուէր: Նիւտոնը ժամացոյցը ձգեց  
եռ եկող ջուրը, իսկ ձուի վերայ նայում էր ձեռքե-  
րումը, ինչպէս ժամացոյցի վերայ:

**Օ** Տիկինը իւր երկայն շրջազգեստի վեշեքով  
աւելում էր բուլվարը:

— Երիտասարդը ոտք դնում է շորի վերայ և  
պատովում է:

— Անկի՛րթ, -ասաց բարկանովով տիկինը, -եթէ  
ես տղամարդ լինէի, ձեզ կ'սպանէի:

— Եթէ դուք գեղեցիկ լինէիք, ես ձեզ կհամ-  
բռւընէիս պատուիսնեց երիտասարդը:

— Գրագիրը նամակ էր զրում: Ծանօթը նկատեց,  
տառափանակներ ես անում պարոն:

— Անպիտա՞ն խանութապան, այնպէս վատ դրիւ է  
տուել, որ ի՞նչպէս զրես անսխալ:

\* \* \*

**ՄԵ** պարոն շատ նման էր ջուն -քանտողեան-

յին, որին հասարակութիւնը սաստիկ ատում էր:  
Այդ պատճառով, նորան մի անդամ բռնեցին և  
փոքր էր մնացել, որ սպանէին : -, Պա՛րնմեր, -ասաց  
նա, ես կարող եմ երկու ապացոյց տալ ձեղ, որ ես  
ջուն -քանտողեանցը չեմ: Առաջին՝ ես գրպանում  
միայն հինգ կոսէկ ունիմ. երկրորդ ես սիրով առա-  
ջարկում եմ, որ դուք տեսնէք այդ փողերը:

— Նորան աղատութիւն տուեցին, բարձրածայն  
ծիծաղելով:

\* \* \*

Ծխական ուսումնարանում երախաներին ու-  
վարցրել էին. որ վարժապետի ձեւները առաջ  
ձգած նշանակում է հովանուկան դիմ, վերե բար-  
ձրացած -ռեղլահայշաց: Մի անդամ եկեղեցում եպիս-  
կոպուր քարոզում էր, և նկատելով, որ երեխաները  
խօսում են, նա ձեռքը վերե բարձրացրեց, որ նո-  
քա լուէն, -իսկ աշակերտները քարոզի միջում,  
աղաղամեցին միաձայն, -ռեղլահայշաց:

\* \* \*

Հնիթրիքի վերայ հիւրը աշքը չէր հեռացնում  
մի գեղեցիկ կնոջից:

— Ինչո՞ւ դուք ինձ աչքով էք անօւմ, -պարոն,  
հարցրեց նազելի տիկինը:

— Արողութիւն, տիկին, - պատասխանեցնա, - ևս  
աչքերս փակում եմ ինչպէս ամեն մարդ, երբ նա-  
յում է արեգակին. ձեր երեսի փայլունքը շլաց-  
նում է աչքերս:

\* \*

Բժիշկը մեռաւ և ծախվում էր նորա գոյքը,  
որի մէջ կար և մի նամակ հետևեալ մակադրու-  
թիւնով, , , բժշկական արհեստի միակ և ամենաշ-  
թանկագին գաղտնիքը:“

Այդ նամակի գինն էր 10,000 ռուբլ: Երբ  
գնողը բաց արեց կնիքը, դտաւ մի թղթի կտոր, որի  
մէջ գրուած էր, , , պահպահ ցուրտ պահիր. ստա-  
մոքսդ՝ թեթև, ոտներդ տաք, - և երեք գործ չես  
ունենալ բժիշկների հետ:“

\* \*

Քահանան քարոզել նիւթ ընտրեց. „Որ հար-  
կանէ զքեզ յաջ ծնօտ քո, դարձն' նմա և զիւօնի“  
քարոզը վերջացնելուց յետոյ ժողովողից մէկը մօ-  
տենում է և ասում.

— Հիանալի՛ քարոզ էր, խօսք չկայ, բայց դուք  
կ' կատարէք ձեր ասածը „ասաց և զարկեց նորա  
երեսին: - Քահանան սառնութեամբ ասաց. նոյնպէս  
գրուած է աւետարանում:“

— Որով չափով չափէք, չափեսցի ձեզ .,, և  
այդ ասելով, ուտացրեց նորան մի լաւ ապտակ:

\* \*

Մի պրօֆէսոր զնահատելով առ հասարակ  
գիտութիւնը, ասում էր.

— Ես ուսանողներին 3-ից աւել չեմ կարող  
թուանշան գրել, ինձ կը գրեմ 4, իսկ Աստու-  
ծուն միան - 5:

\* \*

Ագահը սնտուկը ոսկելով լցրեց ու ծածուկ  
պահեց մի գերեզմանաքարի տակ, որի վերայ փորա-  
գրել տուեց, , , այս առև լատանացաւ:“ Գողը ոսկին  
հանեց, և քարի վերայ գրեց, , , այս առև չէ, յաբու-  
լիւն առաւ:“

\* \*

Հենրիկոս IV-ը որսի ժամանակ մոլորուելով  
անտառի մէջ՝ պատահեց մի զիւզացու և ինդիրեց  
ցոյց տալ ճանապարհը: Գնալու ժամանակ զիւզա-  
ցին ասաց:

— Պա՛րոն, երեւում է որ գու թագաւորի զօ-  
րավարներից ես. կարել՞ է, որ քեզանով ևս էլ  
թագաւորի տեսութեան արժանի լինիմ:

— Ինչո՞ւ չէ, -պատասխանեց Հենրիկոսը, -երբ տեղ  
համենք, դու իմ կողքից մի՛ հեռանալ և տես,   
ով մեզ մօտեցողներից զլիսարկը չվերառնէ. նա՛ է  
թագաւորը: -Երբ հասան ամրոցը. բոլոր պալատա-  
կանները դուրս թափուեցին թագաւորի առաջ,  
զլիսարկները վեր առած: Հենրիկոսը դառնալով դէ-  
պի զիւղացին, որ զլիսարկը ծածկած կանգնած էր.  
հարցրեց.

— Տեսա՞ր, ո՞վ է թագաւորը:

— Ի՞նչ պէս չէ. զիտեմ, պարոն, կամ դու ես,  
կամ ես - ասաց զիւղացին:

\* \*

Գինետան դռների վերայ դրած էր, ո, Եթէ  
զինետանը ո՛չ ոք չկայ, ինդրում են զանգը քար-  
շել: “ Անցաւորը կարդաց այս դրուածը, ներս նա-  
յեց լուսամոից զինետանը, և տեմնելով, որ ո՛չ ոք  
չկար, քարշեց զանգը բոլոր ուժով: Գինեվաճառը  
իսկոյն դուրս վազեց և հարցրեց, Ի՞նչ էիք կամե-  
նում: ” ոչինչ, - պատասխանեց անցաւորը, բայց,  
որովհետեւ այստեղ ինդրում են զանգը քարշել,  
երբ զինետանը ո՛չ ոք չկայ, - որ և պատահեց իս-  
կոյն, - ուստի ես կամեցայ կատարել ինդրու:

\* \*

Մի զիւղացու որդի, Պիթագրոս անունով,

միշտ աշխատում էր մանկութենից ամեն բան լաւ  
շնուր: Մի օր զիւղից գալու ժամանակը Դիմոկրիտոս  
վիլխոտիան տեսնելով, որ այդ երեխան վայսի կտոր-  
ները շաա կարգով կապած և շալակած տանում էր,  
հարցրեց. „, Ֆո՞ւ կապեցիր: ”

— Այս, - ասաց երեխան. -

— Նորից յետ արա՛ և կապի՛ր տեսնեմ, ասաց  
վիլխոտիան: - Երախան ցրուեց փայտերը և կապեց:  
Փիլխոտիան դորան հաւանելով, իւր մօտ առաւ և  
կրթում էր: Այդ երեխան երևելի Պիթագորոսն էր:

\*

Երեակայիցէք, - ասում մէր մէկը, - ուսումնական-  
ները կարողանում են գուշակիլ արեգակի և լուսի  
խաւարմունքը:

— Ի՞նչ մեծ բան է, - պատասխանեց ընկերը, - չէ,  
որ նոքա այդ հաշեւը օրացուցից են դուրս բերում:

\*

Գծագրութեան վարժապետը առաջարկեց աշա-  
կերտին ցոյց տալ դասատան մէջ քառանկիւնի ձև:

— Դասատանը քառանկիւնի է - պատասխանում մէր  
աշակերտը, - լուսամուտները, դրները, սեղմնը . . . .  
վերջ ապէս ամեն բան քառանկիւնի է, բայց վարժա-  
պետից և աշակերտներից:

Առաջ մաս մենա բյուլետին ու հայության ոչքի  
ուսուցչին գիտական աշխատավոր աշխատավոր աշխատավոր  
Անգլացին գրաւ դրեց, որ կէս ժամումը ըն-  
կերոջ հետ կուտէ երկու փութ կարտոֆել, - և  
տարաւ զրաւը, որովհետեւ ընկերը լսողն էր:

\*

Եէկապիրը իւր պիհներից մէկում իւաղալով  
թագաւորի դերը, կանգնած էր թագուհու լօժի  
մօտ: Այն միջոցին, երբ նա իւր ծառաներին զա-  
նազան հրամաններ էր տալիս, Ելեղավետայ թագու-  
հին կամենալով շփոթել նորան, վայր զցեց իւր  
թաշկինակը բէմի վերայ: Եէկապիրը, ամենելին  
չշփոթուելով, ասաց իսկոյն: „Բայց, իմ հրաման-  
ները կատարելուց առաջ վեր՝ առէք մեր քրոջ  
թաշկինակը:“

\*

\*

Աղայ, ձիաները զողացան, - ասաց ձանապար-  
հին ծառան իւր աիրոջը:

— Ինչո՞ւ ինձ վաղ չիմաց արիր:

— Է՛է. ես Յուդայ իս չեմ, որ մատնեմ:

\*

\*

Սաստիկ հարդածը. ներս մնաւ իւր տունը,  
և նկատելով պատի հայելու մէջ իւր պատկերը,

գլուխը շարժելով՝ դարձաւ գեղի իւր կինը և ա-  
սաց, „Թէ ես եմ քու մարդը, բաս նա՛ ովէ Հ. . :“

\*  
\*

Մի աստեղագէտի, որ զբաղուած էր մոլորակի  
ընթացքի հաշվովը, ասացին, որ նորա տունը  
Տիւր է եկել:

— Ժամանակ չունիմ, ասացէք որ թող յետոյ  
շնորհ բերէ:

— Ե՞րբ, ասեմ, որ կրիմն գայ հիւրը, - հարց-  
րեց ծառան:

— Քսան երկու տարի և երեք ամսից յետոյ,  
պատասխանեց աստեղագէտը, շփոթուած մտածելով  
իւր մոլորակի վերայ:

\*  
\*

Կալատողը, որ օրէնը մի մանէթ էր աշխա-  
տում, մի օր գործի չ'զնաց:

— Ինչո՞ւ այս օր չ'եկար, - հարցրեց գործի տէրը:

— Տանըցիք բաղնիս գնացին. հաւն էլ ձու ունէր  
ու.... պատասխանեց կալատողը:

\*  
\*

Ի՞նչ տամ, որ երեխիս զիր սովորցնես, - հարց-  
ր էր հայրը վարժապետին:

- 20 մանէթ, -ասաց վարժապետը:
- Ի՞նչ ես ասում, քսան մանէթով մի էշ  
կ'առնեմ:
- Աւելի լաւ, մի էշ էշ քո տղան կ'լինի, կ'ու  
նենաս երկու էշ:

\* \* \*

Հարցրեցին մէկին. „Ի՞նչպէս է լինում, որ  
արել ծածկուելով արևմտքում, առաւօտը երեւ  
ում է արելքում:

— Այդ է դժուարացնում ձեզ, -պատասխանեց  
անկիրթը, -նա վերադառնում է միւնոյն ճանաւ  
պարհով. խակ եթէ մենք այդ չենք տեսնում, դորա  
պատճառը այն է, որ ճանապարհը մութն է  
լինում:

\* \* \*

Թիֆլսի մի մրգավաճառ, Սարուխան անու  
նով, որ յայտնի էր քաղաքին խր՝ դոված բակլա-  
յով, -աւադ հինգ շարթի զիշերը նստած էր եկե-  
ղեցում: Աւետարանի երկար ու ձիղ զինները նորա  
վերայ խոր քուն գցեցին: Երբ քահանան հասաւ  
այն տեղը, ուր դրուած էր.

— Եւ աղաղակեաց Յիսուս ՚ի ձայն մեծ և ասէ.  
— Սարուխանի բակլայ, լաւ Սարուխանի բակլայ

ձայն տուեց խկոյն քնած Սարուխանը երաղում:

\* \*

Կրեսոսի որդին համբ էր: Սի օր թշնամիքը  
բռնեցին կրեսոսին և պէտք է սպանէին: Երեխան  
տեսնելով, որ սուրը բարձրացրել կամենում են  
սպանել հօրը, այնչափ ոյժ տուեց, որ լեզուի  
կապը քակուեցաւ, և կանչեց, „Նմ՝ հայրն է,  
հայրս է, միք սպանիլ“: Ամենքը զարմանալով, թոյլ  
տուեցին կրեսոսին: Այնուհետեւ երեխան համար-  
ձակ խօսում էր:

\* \*

Տէր տէր, սեղան են տանում, -ասաց աիրա-  
ցուն քահանային:

— Ինձ ի՞նչ:

— Զեր տունն են տանում:

— Քե՛զ ի՞նչ:

\* \*

„PÜMORIST“ ում սպուած էր: Նապալէօնը  
թագ ստացաւ ֆարիզում 1805 թուին: Այս թուի  
թուանշանների գումարն է 14: -Նապալէօն գահից  
ընկաւ 1814-ին: Այս թուի թուանշանները ևս  
տալիս են 14: Տասն ու չորսը հանելով տասն ու  
9\*

չորսից, մնացորդում կ'ստացուի ոչինչ, կամ լաւ ախնեքն NIHIL. Այս NIHIL-ը դուրս է գալիս հետեւալ անունների սկզբնական տառերից „NAPOLEON IOACHIM, HIERONYMUS, JOSEPH, LUDWIG,” որովհետեւ այն տէրութիւնների անունների սկզբնական տառերը, որոնք գահընկեց արեցին Նապալէօնին փարեղում, այսինքն PRUSSIA, AUSTRIA, RUSSIA, INGHILTERRA և SUECIA-կազմում են նորա համար մահառիթ խօսքս՝ „PARIS.”

\* \*

Չորս ուսանողներ, կամենալով ծաղըել զաստավի պահապաննն, ասացին. „Ես բժշկականութեան ուսանող Այծեանցն եմ, ես իրաւաբանութեան կանդիդատ Գոմիշեանցն եմ...” Չսպասելով միւսներին, պահապանը խօսեց երրորդին, պարսներ, գնացէք վողոցը, մենք չենք զբում այս տեղից անցիենող տաւարի ազգանունը:

\* \*

Ո՞ի հացկերութեան մեջ վօլտէրին հարցրեցին աշխարհիս հնութեան վերայ: „Ես կարծում եմ, ասաց նա, - որ աշխարհը նման է պառաւ կնոջը, որ սիրելով զարդարուիլ, ծածկում է իւր տարիքը.”

\* \*

Անգլիացին տպեց հետեւալ հրաւիրական տոմսակը, և ուղարկեց իւր բարեկամներին, „վաղը ամսի չորսին, հինգ ժամին, ինձ կ'կախեն, ուստի խնդրեմ՝ շնորհ բերէք ինձ յուղարկաւորելու համար.”

\* \*

Ագահ մարդը տուեց իւր ծառային 32 շիւպատուական գինի, որ տանէր շարեր գետնատանը այնպէս, որ համարելը հեշտ լինէր. Ծառան շարեց այնպէս, որ ամեն կողմից 9 էր դրուած:

1	7	1
7		7
1	7	1

Յետոյ, երեք օր, շարելու ժամանակ, ծառան ամեն անգամ կ շիւ գողացաւ, բայց տէրը բաւականանում էր հաշուով, որովհետեւ ամեն կողմից դարձեալ ինն էր: - Ծառան հետեւալ անգամները այսպէս էր շարում:

2	5	2
5		5
2	5	2

3	3	3
3		3
3	3	3

4	1	4
1		1
4	1	4

Մէկը լուացքի տաշտ է առնում: Ճանապարհին մտածելով, որ մի օր այդ տաշտը կ'կոտրվի, ու պէտք է ջննել տայ ինքը կոտրում է, տանում է զարբնի մօտ շննել տալիս և ապա տանումէ տուն:

,,Խսպանիայ“ լրագիրը Խսպանիայի թագուհու վերաւորուելու վերայ զրում է. „Յօդուած զրողը 22 տարեկան երիտասարդ է“: Ներկայ զարու Երևանու մասի Երևանու տարուայ Երևանու ամսուայ մէջ, օրուայ Երևանու մասումը, Երևանու ժամում, Զապէլ Երևանու թագուհին իւր հասակի քսան և Երևան երրորդ տարուայ մէջ, իւր Երևանու աղջիկը եկեղեցի տանելու ժամանակը, վերաւորուեցաւ մի աւազակից, որ բնակվում էր „Յաղթական կամար“ ասուած փողոցում, Երևանու համարի Երևանու յարկում“:

\* \* \*

- Քունս տանում ա՞ . . . . . , - ասում էր ծոյլը.
- Պառկի՛, քնի էլի . . . . . :
- Համ պառկեմ, համ քնեմ:
- Կողես զու պառկի՛, ևս քնեմ:

\* \* \*

Երբ Լուտերը գերմանիայի գիւղերում նոր հաւատ էր քարոզում. զիւղացիները ասային.

— Ով առաքելաշնորհ քարոզիչ, զիտես որ այս տարի մեր երկիրը ո՛րքան աղքատ բերք է տուել, աղացումենք, օրհնիր՝ մեր երկիրը, որ այսուհետեւ տարին երկու անգամ բերք տայ:

— Շա՛տ լւաւ. ասաց Լուտերը, ևս կ'օրհնեմ, որ երկարին ձեր տարիները մինչև այսօր ձեր տարին 12 ամիս ուներ, թող այսուհետեւ 24 ամիս մէկ տարի լինի, և ինչպէս խնդրումեք, տարին երկու անգամ բերք կ'տայ:

\* \* \*

Մի ծերունի, որ շատ գժուար էր լսում, քահանային ճաշի էր հրաւիրել: Սեղանը օրհնելիս քահանան սկսեց. „Հայր մեր, որ յերկինս ևս . . .“

— Ի՞նչ ի՞նչ, ի՞նչ ասի՞ր - հարցնում է ծերը:

\* \* \*

Ողբերգութեան ժամանակը, երբ ամենքը լաց էին լինում, մի գեղեցիկ կին չէր լաց լինում:

— Զարմանում եմ, - ասաց մէկը. - Ի՞նչպէս չէք լաց լինում:

— 0°. Ես սիրով լաց կ'լինէի, եթէ հրաւիրված լինէի, - ասաց կինը:

\* \* \*

Քա՞նի տարեկան ես, - հարցրեցին մի երեխայի:  
— 9:  
— Երեկ քա՞նի տարեկան էիր:  
— 8:

\* \* \*

Քրիստոս յարեաւ ՚ի մշուելոց:  
— Հըլքու, - ասաց միւսը, որ չգիտէր, ինչ՝  
պէս պատասխանէր:

\* \* \*

Մէկը երազում տեսաւ, որ իւր կինը փաղաք-  
շում էր իւր սիրահարին: Նա զարթեց կատաղած  
և ոչինչ չորոշելով, յանկարծ սպանեց իւր կնոջը,  
որ հանդարտ քնած էր իւր կողքին:

\* \* \*

Մրգավաճառի դուքանին մօտենում է մէկը և  
երկու մատները կամենում է կոխել նորա աչքերը:  
— Ի՞նչ ես անդւմ, զօ՞-, - ձայն է տալիս մրգա-  
վաճառը, յետ խիելով նորա ձեռը:

— Վա՛, տեսնում եմ. թէ տեսնում ես, կեր  
էլի էս մրգերը. ասաց առաջինը:

\* \* \*

Գիւղերում ժողովք անելուց յետոյ քահանան  
և իւր ծառան բաժանում էին իւրեանց մէջ հա-  
ւաքածը: Քահանան երկու մասն էր վեր առնում,  
ծառային մէկն էր տալիս:

— Տէ՛ր տէ՛ր, ի՞նչ ես անում, հաւասար պէտք է  
տաս, - ասաց ծառան:

— Ի՞նչու հաւասար, ես քահանայ իմ, դու իմ  
ծառան:

— Ի՞նչ անենք, երկուսս էլ մարդ ենք, ես էլ  
քու չափ աշխատել եմ:

— Քու աւետարանը՝ իմ պարկը, - քու գաւա-  
զանը՝ իմ մահակը:

\* \* \*

Յովակի II-ը հասնելով փոստի կայարանը,  
կառավարիչը յայտնեց նորան, որ նոր ահա՛ ու-  
ղարկել է վերջին սայլակը մերձակայ գիւղը իւր  
ծնողներին շուտով կանչելու, որովհետեւ այդ օրը  
իւրեան որդի է ծնուել:

— Զէ՞ր կարելի խնդրել ձեզ, որ ես լինէի ձեր  
կնքահայրը, - հարցրեց Յովսէկիը:

— Յատ ուրախութեամբ, - պատասխանեց կառաւ վարիչը: Երբ փոքր ժամանակից յետոյ մլրտում էին երեխային, քահանան հարցրեց անծանօթ կըն քահօր անունը մատեանում զրելու համար:   
 — Յովսէփ է իմ անունս, - ասաց թագաւորը:   
 — Ի՞նչ Յովսէփ, - հարցրեց քահանան:   
 — Յովսէփը յայտնի է:   
 — Բայց ո՞ր Յովսէփը, ապդը Ի՞նչպէս է:   
 — Յովսէփ II,   
 — Ի՞նչ անուն ունի ձեր պաշտօնը,   
 — Կայոր:

Կառավարիչը շփոթուած խկոյն ընկաւ թաւ գաւորի ոտները և ներողութիւն էր խնդրում:   
 — Ու ինչ, ասաց Յովսէփը, ես ձեր կնքահայրն եմ: - Ապա փող ընծայեց իւր սանահօրը, և նստելով սայլակը, ասաց, „Ես չեմ մնուանալ իմ սանիկս:“

\* \* \*

Նապօլէօնը մի շտապեցուցիչ յանձնաբարութիւն տալով ում և իցէ, յառախ աւելացնում էր „Գնացէք, շտապեցէք, չմոռանաք, որ աշխարհս ստեղծուած է վեց օրում:“

\* \* \*

Ի՞նչպիսի ֆրակ կարեմ ձեզ համար, - հարցրեց դերձակը, - անզլիական, ֆրանսիական թէ գերմանական:   
 — Կարեցէք ինձ համար չէզոքական, - պատասխանեց կարել տուողը:

\* \* \*

Մի եկեղեցում կային երեք քահանաներ, որոնցից երկուսը հայր և որդի էին. Դոքա շատ զիկում էին միւսին: - Մի օր, երբ երրորդ քահանան բուրվառը ձեռքին պատարազի ժամանակ, աջահամբոյր էր ժողովում, որդի քահանան կարդում էր աւետարանը: Երբ հասաւ այն տեղը, ուր զրուած է. „Ես ՚ի հայր և հայր իմ է. Ես և հայր իմ մի եմք.“ միւս քահանան ասաց ժողովը դի միջից.

— Պու էլ մեռնիս, քու հայրն էլ:

\* \* \*

Նկարիչը կամենում էր նկարել երկու մարդ, որոնք պրօցէս) ունէին միմեանց հետ, և որոնցից ուրեմն մէկը տարել է զործը, միւսը տանուլ է տուել: Նա առաջինին նկարեց շապկի մէջ հագ-

նուած, իսկ երկրորդին—մերկ:

\* \*

Կարդում էին մի գիրք, որտեղ ասվում էր, թէ Պարսից շահը հրամայեց կախել երկու խմբագիրներ այն պատճառով, որ նոքա իւրեանց թերթերում տպել էին երկու ստութիւն:

— Ի՞նչ, աղաղակեց Սուվորովը, - միայն երկու ստութեան համար. ի՞նչ կ'լինէր մեզ, եթէ այդպիսի շահ մեզանում լինէր. կ'անհետանային Եւրոպայի բոլոր խմբագիրները:

\* \*

Առջ ի՞նչ ես արել, - հարցրեց բժիշկը հիւանդին, որ նատած էր ջրամբարում (վաննա), - ո՞վ խորհուրդ տուեց քեզ:

— Դուք ինքններդ, պարոն բժիշկ, - ձեր գեղատումակի վերայ գրուած է, ,ընդունել ամեն անգամ 30 կաթիլ լոյն մէջ:

\* \*

Նապօլէօնի աստիճանաւորներից մէկը վարժելով զնուորներին, ասաց:

— Մարքերեցէք, որդիք, որ դուք պէտք է ապանէք թշնամուն միայն փառքի համար:

— Բայց ի՞նչ բան է փառքը, - հարցրեց կայսրը, որ պատահմամբ անցնում էր այդ կողմը:

— Փա՛ռքը՝ ձերդ մեծութիւն. տարած պատերազմի հետեւեալ օրն է:

— Շնորհում եմ քեզ մի աստիճան ևս:

— Զինուորներ՝ աղաղակեց ծերունին, - ահա՛ այս էլ փառք է:

\* \*

Թուղթ խաղացողը բոլոր իւր կայքը տանուլ տալուց յետոյ, ասաց խաղընկերոջը:

— Մտի՛ր իմ տունը, և ի՞նչ բանի վերայ առաջ ձեռքդ դնես, քեզ լինի:

Խաղացողի մոքովը անցկացաւ ձեռքը դնել նորա կնոջ վերայ: Տան տէրը, որ այդ հասկանում էր, մի փայտեայ սանդուղ դրեց գէպի տանիքը, և կնոջը վերև ուղարկեց: Տանողը բարձրանում էր գէպի տանիքը, բայց ամուր կանգնելու համար երկու ձեռով բռնեց սանդուղը աստիճանից:

— Ահա՛, այդ է քունը, - ասաց տանուլ տուողը:

\* \*

Ֆրանսիայի Հենրիկոս I V-րդ թագաւորը իւր ձիերից մէկին այնքան սիրում էր, որ մի անգամ թերանից այս խօսքերը դուրս եկան. ,,, Ով իմ ձիւու

մահուան լուրը բերէ, կ'կախեմ նորան : “ Ժամառ  
նակ անցաւ, ձին մեռաւ : Ախուռապետը մօտենումէ  
թագաւորին . , , Աւազ, ո'վ թագաւոր, քո ձիդ  
ափսոն . . . . այն գեղեցիկ ձին . . . . Հրամանքիով մե-  
ծութեան ձին . . . . ափսոն . . . . այն փառաւոր  
ձին . . . . , , թագաւորը անհամբերութիւնով աղա-  
ղակեց :

— Հը, ինչ է, մեռա՞ւ ձին :

— Թագաւոր, պիտի կախուես, - ասաց ախուռա-  
պետը, - որովհետեւ դո՛ւ տուեցիր քո ձիու մահու-  
ան լուրը :

\* \* \*

Վարժապետը հարցաքննութեան օրը հար-  
ցրեց աշակերտին . , , ի՞նչ բան է երկակինցաղը . , ,  
չեանելով, որ աշակերտը չ'զիտէ, նա շշնջեց նորա  
ականջում . , , Այնպիսի կենդանի է, որ ապրում է  
գետնի վերայ և . . . . “ Այնպիսի կենդանի է, որ  
ապրում է գետնի վերայ և գետնի տակը ” , , շտա-  
պով պատասխանեց աշակերտը . , ,

\* \* \*

Անապարծը անդադար խօսում էր իւր որսոր-  
դական հմտութիւնների վերայ :

— Կոր՝, ասաց նորան մէկը, որ ձանձրացել էր

նորա ստախօսութիւններից, - տո՛ւր ինձ մէկ մանէթ,  
և ես ամբողջ օրը կ'լինիմ քո նապաստակը :

\* \* \*

Սրեգակի խաւարումը մեծ սարսափ էր տա-  
րածել շատ տեղեր, և մի զիւղում ամենքն էլ հա-  
ղորդվում էին, պատրաստուելով դէպի մահը:  
Գիւղի քահանան, որ քարոզում էր այդ աստուա-  
ծային բարկութեան վերայ, տեսնելով իւր ժողովը-  
զին կիսամեռ գրութեան մէջ, ձայն տուեց . Շատ  
միք շտապիլ, սիրելի ժողովուրդ, խաւարումը յետ  
է զցուել մինչեւ երկու շաբաթ :

\* \* \*

Իրանդային իշխանեց մի հիւրանոցում: Գիշե-  
րը հրդեհ պատահեց: Վախեցած ծառան վազեց  
արթնացնելու իւր տիրոջը, և աղաղակեց .

— Պարո՞ն, և դ-համարում հրդեհ է ընկել:

— Իսկ ես, որ համարումն եմ հարցրեց նրան-  
դացին :

— Տասն երկու երրորդում:

— Ուրեմն, ինձ զարթեցրու՛, երբ կայրուի 10-դ  
համարը, ասաց նա և շուռ եկաւ. միւս կողքի վերայ:

\* \* \*

Հուշակաւոր թուաբան և անին, մահուան ան-  
կողնում պառկած՝ խորին լուսթիւն էր պահպա-  
նում, իզուր աշխատում էին բարեկամները մի  
խօսք դուրս խել տալ նորա բերանից: Այս բոպէին  
ներս մտաւ մէկը և ժպտալով հարցրեց նորան.  
,,Ի՞նչքան կլինի 12 անդամ 12:—,,Հա...րիւ...ր  
քա...ռա...սուն և...չո...“ պատասխանեց հի-  
ւանդը և հոգին աւանդեց:

\* \* \*

Եպիսկոպոսը տեսնելով քահանայի մօտ երկու  
փոքրիկ երեխաներ, հարցրեց. „Ո՞ւմ երեխայքն են  
սոքա:“

— Իմ քրոջ եղբօր որդիքն են, սրբազա՞ն հայր.  
,,պատասխան տուեց քահանան:“

\* \* \*

Դու վախում ես, -ասաց մի անդամ Նապօ-  
լէօնը մի զինուորին, որ գունատուել էր թշնամու-  
երեալովը:

— Թա՛քաւոր, Ճշմարիտը խոսսովանուել, . . . ա-  
մեն բան. ինչ որ այստեղ պատրաստվում է, շատ

մխիթարական չէ . . . :

— Զգոյշ կաց, գնտակը սուր աչքեր ունի, նա  
ընտրումէ երկչուններին:

— Ուրեմն, նա ինձ չի կարող դանել, թագաւոր:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ զերդ Մհծութեան խօսքերը ինձ  
քաջալերեցին . . . :

— Պատերազմից յետոյ ևս քեզ մի ուրիշ բան էլ  
կ'տամ . . . :

— Այդ ճշմարիտ չէ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ, անկասկած ևս կ'սպատերազմեմ  
մինչև վերջին շունչը:

\* \* \*

Հիմք: (Դուրս գնալով) շնորհակալեմ:  
Հրակատողը: Չ'արժէ:  
Հիմք: Ով է ասում, որ արժի . . . :

\* \* \*

Մօլլայ - Նասրէդղինը ժողովադին քարովելիս  
ասաց, „Սիրելեք, զիտէք, ի՞նչ կայ:“ Մի մասը  
ձայն տուեց, „չզիտենք,“ - իսկ միւս մասը թէ. „զիտենք,“ - Ուրեմն, թո՛ղ զիտեցողը չզիտեցողին  
սովորյնի, „ասաց Մօլլան և վերջացրեց քարովը:“

\* \* \*

Որսորդների հասարակութեան մէջ պնդում  
էին, թէ անասուններն էլ ունին երևակայութիւն:  
Այս „ասաց մէկը“ այդ ձշմարիտ է. ես մի կով  
ունեի, որ ամբողջ ամիսը երևակայում էր, թէ  
ինքը եղն էր:

\* \* \*

Մէկը պատճում էր իւր բարեկամին, թէ  
ինչպէս Ճանապարհին աւազակները կողոպտել էին  
նորան, փողեր, հրացան, շորեր, ամեն բան տարել  
էին, և վերջը ուրախացած ձայն տուեց. „Յիմարա-  
ները չ'իմացան, որ ուզալթունը (10 կոպէի) գոտ-  
կում մնաց: . . . .“

\* \* \*

Ելուտօնը ունէր մի կատու և մի կատուի  
ձագ: Չ'կամենալով վերկենալ նոցա համար դուռը  
բաց անելու, նա դրան մէջ շինեց երիու ծակ, մեծ  
և փոքր. առաջինը կատուի համար, միւսը նորա  
ձաղի համար:

\* \* \*

Գիւղացի փեսան առաջին անգամ պէտք է

դնար իւր աներոջ տունը: Ծնողները նորան խրա-  
տեցին, որ Ճաշի ժամանակը ոչ ինչ չ'ուտէր,  
մինչեւ նորան կ'ինսդրէին և խօսելիս մեծ մեծ խօսէր:  
Նա գնաց: Փոքր ժամանակից յետոյ սփոռոցը զցե-  
ցին և արդէն ամենքը նստոտած՝ ճաշում էին, իսկ  
փեսան պինդ սղացում էր խրատները:

— Ինչի՞ հաց չես անուշ անում, փեսայ, - հարց-  
րեց աները:

— Ապա՞ն, - պատասխանեց փեսան :

— Ո՞նց թէ ապան, հաց անուշ արա:

— Պանավա՛ր :

— Ի՞նչ ջանավար, փեսայ, համեցէք հաց կե՛ր,  
խօսեց զգանչը :

— Ուզտ:

— Հաց ես կերել, - հարցրեց միւսը:

— Ա՛րջ . . . .:

\* \* \*

Գրում էին մէկի տան կայքը պարտքը վճա-  
րելու համար: Գրել տուողը համարելով, թէ քա-  
նի թոփ չեթ կար, ձայն տուեց զրողին „, Տեսի ՚  
պյուшки սից:“

\* \* \*

Մի անգամ Անդիհայի Յակոբ թագաւորի քթի  
10\*

վերայ մի ճանձ՝ նստեց : Քշելով նորան , ճայն տու-  
եց թագաւորը . „Մի՛թէ իմ բոլոր տէրութեան մէջ  
բայի իմ քթից , ուրիշ անդ չգտար քեզ համար :

\* \*

Հայրը խրատում էր իւր աղջկան . „Այն  
աղջիկը , որ մարդի է դնում , լաւ է անում . բայց  
աւելի լաւ է անում նա , որ մարդի չէ դնում : “

— Հայրիկ , - պատասխանեց աղջիկը , - մենք աշ-  
խատենք , որ միայն լաւն անենք , թող ուրիշը մեր  
արածից աւելի լաւ անէ :

\* \*

Աղնուականներից մէկը թագաւորի ներկայու-  
թիւնով հարցրեց Բալակիրևին . „Դու գնացիր  
Պարսկատան , զիտե՞ս Պարսիկների լեզուն : “

— Չատ լաւ զիտեմ , պատասխանեց զուարձախօսը :  
— Բայց ի՞նչպէս է նոցա լեզուն :  
— Այդպէս կարմիր է ի՞նչպէս քունը :

\* \*

Նապօլէոնը և Մարիա Լուիզան պսակուելուց  
յիտոյ այցելութիւն էին անում զանազան քաղաք-

ներ : Մի փոքրիկ քաղաքի դռանը շնած էր յաղ-  
թական բրաբիոն հետեւեալ մակագրութիւնով :

„IL N'A PAS FAIT UNE SOTTISE“

„EN ÈPOUSANT MARIE LOUISE“

Կարդալով այս գրութիւնը , Նապօլէոնը հրա-  
մայեց կանչել քաղաքապիլին :

— Դու՞ք էք պարապում Փրանսիական բանաս-  
տեղծութիւնով , - հարցրեց Նապօլէոնը :

— Չերդ մեծութիւն , ես երեմն շարադրում եմ  
ոտանաւորներ :

— Յիրաւի , այս ձեր շարադրութիւնն է :

— Ճիշդ այդպէս է , Ձերդ մեծութիւն :

— Գործ էք ածում դուք քթակտու , - հարցրեց  
Նապօլէոնը , տալով նորան հարուստ տուփիկը , որ  
զարդարուած էր անդամանդներով :

— Գործ եմ ածում , Ձերդ մեծութիւն , - բայց ,  
ես մտածել անգամ չեմ կարող . . . . . :

— Վեր առէք այդ տուփիկը քթակտով , և

„QUAND VOUS Y PRENDEREZ UNE PRISE“

„RAPPELEZ VOUS MARIE LOUISE“

\* \*

Քահանան շատ պարտքեր ուներ : Մի անդամ  
քարոզի ժամանակ նա նկատեց , որ իւր պարտա-

տէրների մեծ մասը հաւաքուել է եկեղեցում։ Այս  
հանգամանքից ստիպուած, նա իւր լնտրած բնաւ-  
բանը փոխեց և քարոզը սկսեց այս բնաբանի վերայ,  
,,Համբերութիւն ունեցէք և ես ձեզ բոլորիդ բա-  
ւականութիւն կ'տամ։“ Սկսեց քարոզը, խօսելով  
մեծ բարեգործութեան-համբերութեան վերայ, և  
վերջապէս ամփոփեց հետեւեալ խօսքերով, „Ո՞րելի  
ժողովուրդ, այս իմ գատողութեան առաջին մասն  
էր, այժմ հարկաւոր է խօսել պարտքերը վճարելու  
մասին։ բայց, որովհետեւ այսօր արդէն ուշ է  
ուստի թողնե՞ք այդ մինչև մի յարմար դիպուածի։“

\* \* \*

Հարցաքննութեան ժամանակ հարցնում են  
աշակերտին, „Մարդը ո՞ր թագաւորութեան է  
պատկանում։“ Երկնային թագաւորութեանը, պա-  
տասխանեց քննուողը :“

\* \* \*

Ներկայացնում էին „Տրի օտկոպիկա, կա-  
տակիբութիւնը։ Թատրոնից տուն վերադառնալով,  
15 տարեկան օրիորդը ասաց իւր մօրը,“ Ախ.  
մայրիկ, ի՞նչ հիանալի պիեսա էր։ նորա մէջ  
բոլոր աղջկերքը մարդի են գնում։“

\* \* \*

Մի քանի մարդիկ վիճում էին այն հարցի վե-  
րայ, թէ ո՞վ աւելի բարձր էր, Նիլերը, թէ Գէօ-  
տէն։ Մի պարոն, ականջ դնելով այդ անվերջանալի  
վիճին, սկսեց ամեն կողմից տեղեկութիւններ հա-  
ւաքել, և վճռեց պարզ ու հասկանալի կերպով.  
որ Նիլերը Յաւէք էր Գէօտէից 5½ դիւմով։

\* \* \*

Իսահակ Նիւտոնը ունէր մի սիրելի չնիկ, որին  
նա տուել էր „Մարգարիտ“ անունը։ Մի օր, երբ  
Նիւտօնը իւր առանձնասենեակից մտաւ կից սե-  
նակը, շնիկը թողեց միայնակ։ Երբ մի քանի բոպէից  
յետոյ ներս մտաւ Նիւտօնը, տեսաւ որ շնիկը մի  
աշտանակը վայր էր զցել իւր թղթերի վերայ, և  
աշտանակը վայր էր զցել իւր թղթերի վերջայրած աշխա-  
յնքան տարիների զրէթէ վերջայրած աշխա-  
տութիւնը բոցի մէջն էր և համարեա՛ միխիր դար-  
ձած։ Նիւտօնը, որ արդէն զառամել էր ծերու-  
թիւնից, տեսնելով այս անդառնալի կորուսոր՝ բա-  
ւականացաւ միայն բացագանչել ,,,Ո՞՛. Մարգարիտ,  
Մարգարիտ, ի՞նչ փոքր ես զգում այն ցաւը, որ  
դո՛ւ ես պատճառել։“

Մի չայի, որ նոր էր վերադարձել Պարսկաստանից՝ հարցրեցին:

— Պարսկերէն սովորեցի՞ր:

— Հա՛, սովորեցի:

— Գվիսին ի՞նչ կասեն:

— Ար:

— Մազերին . . . :

— Արախոտ:

— Ականջին . . . :

— Արածակ:

— Գտակին . . . :

— Արաբուն:

— Ես հօ՛ թաւրիպ չեմ էլել, ասաց հարցնողը, զիտեմ վզին ի՞նչ են ասում:

— Ի՞նչ, - հարցրեց նոր վերադարձածը:

— Արակոթ:

\* \*

Մայրը խրատում էր իւր աղջկերանցը:

— Ղոնաղի առաջը խելօք կանգնեցէք, ձայն չհանէք, ձեռքներդ դօշներիդ կացրեցէք, որ ձեզ հաւանեն, ու գուք էլ մարդու գնաք:

— Մայրիկ այ՛, ես հօ՛ խելօք եմ կանգնած, ձայն չեմհանում, - ասաց նոցանից մէկը:

\* \* \*

Լուդովիկոս ԽՎ-ը ներս մտաւ խորհրդարանը ուր անդամները դրել էին մի շարադրութիւն, որ դրուած էր թագաւորի բարեգործութեան և նորա պատերազմական յատկութիւնների վերայ: Թղթի վերայ դրել էին նյոնպէս մի ակնոց, որ թագաւորը գործ էր ածում կարդալու ժամանակը: Թագաւորը հագնում է ակնոցը և կարդալով սաստիկ փաղաք-շական շարադրութիւնը, ասաց շրջապատողներին. „ի՞նչ վատ ակնոց է. շատ չափազանց է մեծացնում:

\* \*

Մշակը կէսօրին հանդստանալով աշխատանքից, մի մեծ աման լցրեց մածնով, լսւ բրդեց և կերաւ բոլորը. յետոյ մի անբողջ հաց թրչեց ջրումը և կերաւ նյոնպէս ու վերջապէս մի բաժին բոլուս էլ մաքրազարդեց և պառկեց ծառի տակը:

— Այ՛ մարդ էդ ի՞նչ արեցիր. իսօ՛ սաթլամ կ'լինիս, - ասաց վարձողը:

— Սաթլամն էլ կ'ուտեմ, - պատասխանեց մշակը:

\* \*

Տղամարդը քնած էր: Կինը՝ զարթնացնելով նորան, ասաց:

— Ատե՛փան, Ատե՛փան;  
 — Հը հը՝, -ասաց քնածը, զիր թռչելով:  
 — Կարապետը ուզում էր քեզ զարթնայնի. չժռ-  
 զի, լաւ չարի:

\* \*

Քահանան, մի քանի արշին չկթ առնելով  
 բազակից, սկսեց:  
 — Եւ վա՛մ սուրբ խաչի պատուականի քո . . . . :  
 — Տէ՛ր տէր, փո՛ղը . . . ի՞նչ ես ասում, - վրա-  
 բերեց բազակը :

\* \*

Մի օր, երբ հասակը առած որդին պառկած  
 էր, ծնողները խօսացին նորան պսակելու վերայ,  
 կարծելով, թէ նա քնած էր:

— Աևր ինչով պսակենք, փող չունենք, բան  
 չունենք: որ ծախսենք, եա՛ հարսին ինչով պտի  
 պահի . . . - ասում էր հայրը:

— Մեր էշը ծախսենք ասաց, - Մայրը:  
 — Տեսնենք, - ասաց հայրը, և երկար ժամանակ  
 էլ չեն խօսում այդ հարցի վերայ:  
 — Նա՛նի, ասաց մի գիշեր որդին մօրը, - էն իշի  
 առակը էլի խօսէք . . . ի՞նչ լաւն էր է է . . . . :

\* \*

Ղարաբաղը զիւղերից մէկում մի օտարական  
 հարցնում էր քահանային:  
 — Այս ի՞նչ եկեղեցի է, տէ՛ր հայր:  
 — Քեզ ծառայ, սուրբ մինաս, - պատասխանեց  
 քահանան:

\* \*

Քաղաքագլուխը ճառ կարդալով թադաւորի  
 առաջ, չափազանց շփոթուեց: Թագաւորը կամե-  
 նալով հանդարտել նորան, ասաց. „Վերջացրեցէք  
 երկու խօսքով:“ Քաղաքագլուխը ճառի կիսում  
 դադարեց և ասաց, „Խեցչէ լուժաւորը:“

\* \*

Զատիկ օրը, քահանան ներս մտնելով մէկի  
 տունը, սկսեց „Խորհուրդ մեծ և պանչելի . . . . :“  
 — Ի՞նչ ես ասում, տէր տէր, էս օր Զատիկ է,  
 ասաց տան տէրը:

\* \*

Հիւրանոցում մի վանդակի մէջ երգում էր  
 գեղձանիկը: Մէկը ներս մտնելով հարցնում է:  
 — Այս թռչունը ի՞նչքան արժէ:

— 25 մանէթ :

— Պատրաստեցէ՞ք :

Միւս անդամ ներս է մտնում և հարցնում :

— Պատրաստեցի՞ք :

— Այս՝ - պատասխանում է պանդոկասպեաբ :

— Բերէք ինձ համար 5 կոպէկի, - ասայ հիւրը :

\* \*



Թաղաւորը նկարչին պատուիրեց մի մեծ թղթի վերայ նկարել ամեն ազգերից մի մարդ իւր յատկանիշ շորերի մէջ, մօտայի մէջ : Նկարիչը բռնըրի պատկերը խրեանց շորերի մէջ նկարեց . իսկ ֆրանսիացուն բոլորովին մերկ թողեց, միայն ուսերի վերայ գցել էր մի երկայն մահուդ :

— Այս ի՞նչ ես արել, - հարցրեց թաղաւորը բարկացած, ինչո՞ւ ֆրանսիացին շորերի մէջ չէ :

— Թա՞գաւոր, - պատասխանեց նկարիչը, - գա այնա պէս շուտ շուտ փոխում է իւր մօդաները, որ իմ արհեստը չկարողանալով դորան հասնել, չգիտէ ո՞ր մօդայում հագցնէ դորան, ուսափ ես դորա վերայ գցել եմ այդ մահուդը . թող ինքը ի՞նչ մօդայով կամենում է, շոր կարէ իւր համար :

\* \*

Տէրը և ծառան ճանապարհորդելիս ներս մտան

մի հիւրանոց . Հիւրանոցի սպասաւորը բերեց երկու եփած վառիկ, զրեց սեղանի վերայ և գնաց : Տէրը նատեց սեղանի մօտ և ուտում էր, Ծառան կանգնած էր դիմացը, պատի մօտ և նայում էր, կարծելով թէ մի վառիկ իւր համար կ'թողնէր : Տէրը կերաւ մի վառիկը :

— Մէկը կերաւ, - ասաց ծառան ցած ձայնով, աչքը չհեռացնելով սեղանից :

— Մէկելն էլ առտում, ... ասաց նա՛ մի քանի բոպէից յետոյ :

— Թակերն էլ կերաւ . . . . :

— Բգերն էլ կերաւ . . . . :

Տէրը հանդարտ ուտում էր, և շուտով կ'վերջացնէր :

— Անիծածը դիփ կերաւ, յանկարծ դուեց ծառան բարձր ձայնով :

\* \*

Մէկը ձաշում էր մի եպիսկոպոսի մօտ, որ շատ անհամ քարոզող էր : ձաշից յետոյ հիւրը քննեց իսկ եպիսկոպոսը զարթեցրեց նորան, որ գնար եկեղեցին իւր քարոզը լսելու : , Ներողութիւն, - ասաց հիւրը ես այստեղ էլ կարող եմ քնել :

\*  
Լեսինդը մի անգամ զբօսնում էր բարեկամների հետ։ Նոքա անցան կախաղանի մօտից, որտեղ կախուած էր մի յանցաւոր։

— Շուտով մի տապանագիր շարագրի՛ր այս կախուածի վերայ, - ասաց Լեսինդին իւր բարեկամներից մէկը։

— Դորանից հեշտ բան չկայ, պատասխանեց Լեսինդը։

,,Այս տեղ հանգստանում է սա։“

,,Երբ առի չեա։“

\* \*

Պատարագի ժամանակը քահանան բուրվառ էր զցում կանանց գասումը։

— Սալոմէ, ինչի՞ չես գալի մեր տուն, - հարցնում էր քահանան մի կնոջ։

— Գուքամ, տէր տէր, - ասաց կինը։

— Ասում ես ու չես գալի։

— Գուքամ, տէր տէր, ցելս էր ու . . . .

— Է՛հ, ասումիս ու չես գալի, - կրկնում էր քահանան։

Քահանան թողեց նորան և շարունակում էր խունկ ծխել, միշտ կրկնելով, „Ասումիս ու չես գա-

լի, ասումիս ու չես գալի։“ Նա այն ժամանակ նկատեց իւր սխալը, երբ կանայքը բարձր ձայնով յանկարծ ծիծաղեցին։

\* \*

Միջին - գերմանիայի մի քաղաքում, մի վաղուց այրիացած մարդ պսակուեց մի օրիորդի հետ։ Հարսանիքից յետոյ այդ պարոնի որդին պսակուեց իւր նոր խորթ մեծ - մօր հետ։ Այսպէս, հայրը դարձաւ իւր որդու փեսան, և նորա (հօր) կինը դարձաւ ոչ միայն սելիական խորթ որդու խորթ քոյրը, այլ և իւր մօր սկեսուրը, իսկ սա (սկեսուրը) դարձեալ իւր աղջկայ խորթ քոյրը դարձաւ, որովհետեւ իւր (սկեսորի) տղամարդը դարձաւ իւր խորթ մօր խորթ հայրը և իւր հարազատ հօր աները։

\* \*

Մէկը 4 և միւսը 5 տարեկան երեխաներ կանգնած էին տանիքի վերայ և նայում էին գէպի մօտակայ հարսանիքի - տունը որտեղ փող էին փչում։ Կրեխաները ցրտից զողում էին։

— Գի՛գոլ, մըսում ես, - հարցրեց մէկը։

— Ցէ՛, ցէմ մըսում, - ասաց միւսը։

— Ալսակ, գուն մըսում ես։

— Ցէ՛! ես էլ ցէ։

Արէկը, թումիսն անունով, հարցնում է քահանային եկեղեցումը:

— Տէր տէր, ևս տօն չունիմ, երբ պէտք է լինի իմ տօնը :

— Հէսց այսօր քո տօննի է, - ասաց քահանան: Հարցնողը սպասում էր:

„Փառք ՚ի բարձունս“ երգելու ժամանակը, քահանան կանգնացրեց նորան առեանումը: Երբ հասաւ այն տեղը, ուր ասում է . „Ձի դու միայն, սուրբ դու միայն, բարձրեալ ես դու միայն.....“ քահանան մէկ մնմ տուեց նորա ձեռքը: Հարցնողը բաւականացաւ, գտնելով վերջապէս իւր տօնի օրը:

\* \*

Որքան պէտք է վճարեմ, որ ինձ անցկացնեք դեսի միւս ափը, - հարցնում էր բժիշկը ձկնորսին:

— Բայն կոպէկ:

— Ոօ! Այդ շատ թանկ է:

— Ու, պարմ, մնկը ձկնորսներս առաւել արժան դնով ենք անցկացնում, քան թէ բժիշկները, որոնք ոչ ոքի չեն անցկացնել դէպի միւս աշխարհը 50 մանեթից պակաս:

\* \*

Մի մարդ նստած էր ճանապարհին և ողորմութիւն էր ինզրում: Անցաւո՞ներից մէկը աղքատին հարցրեց. „Ի՞նչ ես կամենում:“

— Ա՛յ, ասաց աղքատը, ևս չեմ կարողանում խօսել:

\* \*

Ես և կինս մարդարէ ենք, - ասում էր զիւղացին մի հասարակութեան մէջ:

— Ի՞նչպէս, - հարցրեցին նորան:

— Այնպէս, որ երբ զնում ենք դաշտը. եթէ երկինքը ամզած է լինում, ևս ասում եմ անձրեկ' գայ, իսկ նա ասում է չե գայ. - կամ իմ խօսքս է կատարվում, կամ նորանը:

\* \*

Բարեգործական նպատակի համար մի մարդ ստորագրութիւն էր բաց արել: Դա մօտ եկաւ մի հարսաի, որ տուեց նորան մի մանեթ. Ժողովարարը, ցոյց տալով նորան թերթը, ասաց „Պարոն, տես սէք, ձեր որդին հինգ մանեթ է տուել:“ Հարուսալը պատասխանեց. „Եթէ ես ել այնպիսի հարուսալ

մարդու որդի լինէի, ինչպէս իմ որդին, ես տասը  
մանէթ կ'ընծայէի:“

\* \*

Տասն տարեկան երեխան իւր մօր մօտ նստած՝  
կարդում էր աւետարանը. երբ եկաւ այն տեղը,  
ուր զրուած է, „Աղռւէսները որջեր ունին և եր-  
կաքի թռւունները բոյներ. բայց մարդու Որդին  
չունի մի աեղ, ուր գնէ իւր զլուխը.“ աչքերը  
լցուեցին արտասուքով և հաւաշերով սկսեց լսլ:  
Մայրը հարցրեց, „Ինչու ես լաց լինում:“ Նրեխան  
առ ժամանակ չկարողացաւ պատասխանել, և յետոյ  
ասաց. „Մայրիկ, եթէ ես այնաեղ լինէի, իմ զրւ-  
խիս բարձը նորան կայի:“

\* \*

Մ. Նասրէդդինը 1 հատը 1 կոպէկով ձու  
առաւ, եփեց, ներկեց, և տարաւ փողոքը 10-ը  
հատը 5 կոպէկով ծախում էր: Այդպիսով օրա-  
կան 200 ձու էր ծախում:

— Ե՞տ ի՞նչ ես անում, - ասում էր մէկը Մօլո-  
յին. - ախր դու շատ ես վիասպում. . . . :

— Վ նաս չ'ունի, - ասաց Մօլան, - թող ուրիշնե-  
րը ասեն, թէ „Մ. Նասրէդդինը բանի վերայ է.  
պարապ չէ:“

\*, \*, \*  
,,Եղեշէից վարժապետը կարդում էր այն տեղը  
ուր զրուած էր“ Խորհուրդ էր կանչում իւր կող-  
մանկիցներին, . . . . որոնք վառվում էին այրելու  
եկեղեցու սուրբ ուխաը. „Աշակերտներից մէկը այդ  
լսելով, ձայն տուեց. “Խեղճ անասուն, ասա՞ ուղար-  
ինչ էր արել նորան, որ այրում էր:“

\* \*

Գրողը գիշերով ներս մտաւ աղքատի լուսաւ,  
մռւակից, որ պառկած էր անկողնում, բայց գեռ-  
չէր քնած: „Բարեկամ, ասաց նորան աղքատը,  
դու գիշերով եկել ես մի բան որոնելու այնաեղ,  
ուր ես ցերեկով ոչինչ չեմ գտնում:“

\* \*

Թագաւորը, որ իւր ծառային մեծ գումար էր  
տուել առեւտուր անելու հեռաւոր երկրներում  
հրամայեց իւր պալատականին, որ մի ցուցակի վե-  
րայ ներկայացնէր իւրեան քաղաքի բոլոր յիմարների  
անունները և ազգերը, հաստատելով, որ արդարե  
առքա յիմարներ են: Մի քանի օրից յետոյ, երբ թա-  
11\*

գաւորը պահանջեց ցուցակը, պալատականը ներկաւ-  
յացրեց նորան մի թուղթ, որի վերայ առաջին տե-  
ղը բանել էր թագաւորի անունը:

— Ի՞նչպէս թէ, բացագանչեց թագաւորը, մի՞թէ  
ես յիմար եմ, ապացուցի՛ր այդ:

— Թագաւոր, պատասխանեց պալատականը, ես  
կարծում եմ, որ . . . . որովհետեւ եթէ ասածո  
ձշմարիտ չէ, դու այնքան գումար չեր տալ մի  
անպիտան ծառայի:

— Բայց, կարել է, նա կ'վերադառնայ, - ասաց  
թագաւորը:

— Երբ նա կ'վերադառնայ, - խօսեց պալատականը,  
այն ժամանակ քո անունը կ'ջնջեմ և տեղը նորա  
անունը կ'զրեմ, որովհետեւ նա յիմար կ'լինի, եթէ  
այնքան հարստութիւնը ձեռքին կ'վերադառնայ  
չնդիմաստանից:

\* \*

Լիւտերը ներկայ էր նոր քահանայի քարոզին:  
Երբ այդ վերջինը կակաղում էր նոյն իսկ առաջին  
խօսքերում, և անդադար կրինում էր բնաբանի  
խօսքերը. „Ես եմ հովիւն բարի.“ Լիւտերը հրա-  
մայեց նորան իջնել ամբիոնից և ասաց. „Կարել է,  
դու բարի ոչխար ես, բայց ոչ երբեք բարի հովիւ:“

\* \*

Ֆրեդրիկոս - Ալիչելը IV-դը, մի անդամ  
ճանապարհորդելով, հասաւ մի քաղաք, որի քա-  
ղաքազուլու իւր ճառի մէջ ասում էր. „Քեզ  
ողջունում են հազար հազարներ, - և դարձեալ  
բիւրաւոր մարդիկ . . . . :“

— Շատ ջնորհակալ եմ, - ասաց թագաւորը, - ող-  
ջունեցէք նոցա իմ կողմից, միայն իւրաքանչիւրին  
առանձին:

\* \*

Մէկը խնդրում է իւր դրացուց նորա էշը:

— Տանը չէ իմ էշը, - ասում է դրացին:

Յանկարծ էշը զոռում է ախոռից:

— Ապա այս ի՞նչ է, հարցնում է խնդրողը:

Դրացին առանց կարմելու պատասխանում է.  
„Օրհնած, ի՞նչպիսի մարդ ես դու, իշխն աւելի ես  
հաւատում, քան թէ իմ խօսքերին:“

\* \*

ԴերԱՍԱՆԸ: Երեկոյին թատրոն չէք գալ:

ԾԱՆՈԹԸ: Ի՞նչ պէտք է ներկայացնէք:

ԴԵՐԱՍԱՆԸ: Սողում - Գոմորի հրգեհը:

ԾԱՆՈԹԸ: Ի՞նչ էք ասում, հօ թատրոնը  
կայրուի:

ԴԵՐԱՄԱՆԸ: Վնաս չունի. յետոյ իսկոյն ջըրա  
հեղեղը պէտք է ներկայացնենք:

\* \* \*

**ՄԷԿԸ** Բալակիրեին, հարցրեց.

— Ե՞րբ պէտք է մեռնես դու, յի՞մար:  
— Զգիտեմ, կարծեմ քեզանից յետոյ, - պատաս-  
խանեց Բալակիրեր, - որովհետև յիմարների ցուցա-  
կում ես շատ ցած եմ գրուած քեզանից:

\* \* \*

Գողը ուսումնարանի նախադաւթից վեր առաւ  
աշակերտների վերաբկուները: Սանդուղից վայր իջ-  
նելիս նորան պատահեց աշակերտներից մէկը և  
հարցրեց.

— Ուր ես տանում այդ վերաբկուները:  
— Տանում եմ մաքրելու:  
— Ահա, իմն էլ տա՛ր մաքրի՛ր. և ժամփ երկուսին  
քեր այստեղ:  
— Շատ լաւ, ասաց գողը և անհետացաւ:

\* \* \*

Ֆրանսիայի թագաւոր Ֆրանցիսկ I. տեսութիւն  
գնալով փապին, և զարմանալով նորա շքեղ զար-  
դերի վերայ, ասաց.

— Ինչպէս կարդում ենք Աստուածաշնչում, հո-  
գեսոր հովեւները ասլրում էին աղքատ և պարզ:

— Ճշմարիտ է, - պատասխանեց փապը, - բայց այդ  
այն ժամանակներն էր, երբ թագաւորները արա-  
ծացնում էին հօտերը:

\* \* \*


Ֆրեդրիկոս - մեծը իւր զօրավարներից մէկն  
զրեց. „Ուղարկում եմ ձեզ թշնամու դէմ 60,000  
զօրքով:“ բայց ցուցակում գրուած էր միայն 50,000  
մարդ: Զօրաւորի հարցմունքին թագաւորը պատաս-  
խանեց. „Ես միայն Ձե՛ղ հաշվում եմ 10,000  
մարդ:“

\* \* \*

Կաթոլիկ վարդապետը 30 մանեթ տուեց մի  
չայ մարդու, որ նա կաթոլիկութիւն ընդունէր:  
ՎԱՐԴԱՊԵՏԸ: Դու էլ Հայոց եկեղեցին ես  
գնում. յե՛տ տուր ուրեմն իմ  
30 մանեթը:

ՀԱՅՆ:

Ես երեք ամիս ձեր եկեղեցին էի  
գնում. երեք ամիս էլ դու արի  
մեր եկեղեցին, յետոյ կստանա  
քո փողը:



\* \*

Վիւտօնը, սաստիկ շփոթուած լինելով, բըռա-  
նեց իւր կողքին նստած կնոջ ցուցանատը և կամե-  
նում էր նորանով մաքրել ծխամհրչը:

\* \*

Ինչից գիտես, թէ մի Աստուած կայ, - հարց-  
րեց մայրը երեխային:

— Որովհետեւ Աստուած ամեն տեղ է, և լըց-  
նում է ամեն տեղ. այնպէս, որ էլ ուրիշ Աստու-  
ծու համար տեղ չի մնայ:

\* \*

Ոտուսուհին, որ աղախին էր վարձում, հարց-  
րեց, արդեօք նա կարող էր ծամերը հիւսել և  
յարդարել, ինչպէս հարկն էր:

— Կէս ժամում ես կ'պատրաստեմ ամենահիանալի  
ծամեր, - պատասխանեց աղախինը:

— Բայց ես ի՞նչ շինեմ մինչեւ կէսօրը, չէ. դու  
շատ արադ ես աշխատում, - պատասխանեց վարձողը:

\* \*

Քարողիք սովորութիւն ունէր քարոզի բնա-

բանները գրել թղթի կտորների վերայ, որոնց դար-  
սում էր իւր առաջ նոցանից օգուտ քաղելու հա-  
մար: Մի անգամ, բացադրելով երկրորդ բնաբանը,  
նա այնպէս տաքացաւ, որ վայր ձգեց բէմից երրորդ  
բնաբանի թուղթը և չնկատեց այդ: Աերջացնելով  
ամեն բան, ինչ որ ունէր ասելու երկրորդ բնաբանի  
մասին, նա նայեց գտնելու երրորդը. - Բայց ի՞նչ, ոչ  
մի տեղ չերեաց:

— ««Երրորդ»» - ասաց նա, ահով նայելով բո-  
լը կողմէրը: Մի փոքր սպասելով, նա նորից ար-  
դասանեց. ««Երրորդ»» . . . բայց երրորդը չէր  
երեսում: ««Երրորդ», ասում եմ, եղթայրներ, »»  
շարունակեց քարոզելը, - բայց չէր հետեւմ ոչ  
մի խօսք:

Այսուեղ իսկոյն կանգնեց մի պառաւ և ասաց.

— Եթէ, ես չեմ սխալվում, տէր՝ հայր, - եր-  
րորդը դուրս թռաւ լուսամտովը, սորանից մի քա-  
ռորդ ժամ առաջ:

\* \*

Հոչակաւոր շատակեր Մօնտմօրի աշքերը չէին  
կարողանում պարզ աեսնել: Մէկ օր, երբ նա  
գտանվում էր մի շատ փարթամ ճաշի վերայ, բա-  
ւականին շատ ուտելուց յետոյ հարցրեց իւր ծա-  
ռային. „Կերա՞յ ես ամեն բանից:“

\* \*

Մ. Նասրէդղինի մօտ երկու գանդատաւորներ  
երեցան:

— Ահա՛ էսպէս է մեր բանը, ասում էր գան-  
դատաւորը, - էսպէս էսպէս. էս մարդը իմ զլուխը  
էս բանը բերեց:

— Դու իրաւունք ունիս, - ասաց մօլլան:

— Տեսնում ես, էս մարդը ինձ էստեղը զցեց.  
Հիմի էլ ուզում է զլիս օյին գայ, - ասում է միւս  
գանդատողը:

— Դու իրաւունք ունիս, - ասաց մօլլան:

Կինը, որ լսում էր այս դատաստանը, տանը  
ասաց մօլլային.

— Ա՛յ մարդ, էդ ի՞նչպէս կարելի է. ախր գանդա-  
տողներից մէկը մեղաւոր կ'ըլի, զու երկուսին էլ  
ասում ես. , իրաւունք ունիս:“

— Դու էլ իրաւունք ունիս, - ասաց մօլլան:

\* \*

Մի անգլիացի լորդ՝ կակազ լինելով. հրամա-  
յում էր իւր ծառային, որ հասկացնէր ուրիշին  
իւր միտքը: Մի անգամ, կամենալով զուարձանալ  
մէկ սեմինարիստի վերայ, նաև հարցրեց. „ինչո՞ւ  
Բարաղամի էշը խօսում էր,“ բայց որովհետեւ ոչ

ոք չկարողացաւ հասկանալ, ուստի ծառան կրկնեց  
մի և նոյնը: Սեմինարիստը պատասխանեց. „Բարաղամը  
կակազ էր, այդ պատճառով նորա էշը խօսում էր  
նորա փոկանակ:“

\* \*

Դուք ո՞վ էք, - հարցրեց բարձրահասակ դաւ-  
տաւորը շատ կարձահասակ վկային:

— Իրաւագէտ եմ, - պատասխանեց վկան:

— Իրաւագէտ, բայց ես կարող եմ ձեզ գըր-  
պանս դնել:

— Շատ ճշմարիտ է, և այն ժամանակը դուք  
աւելի իրաւագիտութիւն կունենաք գրպանում, քան  
թէ զլիսում:

\* \*

Վարժապետը սպալորցրել էք, որ երկու բացա-  
սական մէկ ստորասական կլինի: Մի գեղեցիկ օր ա-  
շակերտները խնդրեցին զբունուլ:

— Ո՛չ, ոչ, - ասաց վարժապետը:

— Ուրեմն կ'զնանք, վարժապետ, - ձայն տուեց մի  
աշակերտ, - որովհետեւ երկու „ոչը“ մէկ „այո“ է:

\* \*

Երբ „Յակօթ Լ-ը նստեց Անգլիական գահի վե-

րայ, մի քաղաքի բնակիչներ շնորհաւորում էին նորան, ցանկանալով, որ նորա թագաւորութիւնը տեսէր այնքան ժամանակ, մինչդեռ կլուսաւորեն արեւդակը, լուսինը և աստղերը: „Պարոններ, - պատասխանեց թագաւորը ժպտալով, - եթէ ձեր ցանկութիւնը կատարուէր, իմ որդին պէտք է թագաւորէր մոմերը վառած:“

\* \* \*

Հրաւէրքում սեղանի շուրջը նստածած տան տէրը կանչում է ծառային:

— Ի՞նչ էս հրամայում, - ասում է ծառան, ներս մտնելով:

— Գնա՛, սանդուղը բե՛ր, զի՞ր այս պատի վերայ:

Սանդուղը բերեց և դրեց:

— Դէ՛, բարձրացիր դլուխը: - Ծառան բարձրացաւ:

— Նայի՛ր այդ տեղից, տես՛, սեղանի վերայ ի՞նչն է պակաս:

Ծառան երկար ժամանակ նայում էր. վերջապէս ձայն տուեց:

— Ա՛ղը, աղը, էս՝ սհմթիս, ա՛ղա:

\* \* \*



Այն միջոցին, նապօլէօնը պատրաստվում էր խսդանական պատերազմի համար, Տալէյրանը աշ-

խառում էր հեռացնել նորան այդ մտադրութիւնից:

— Ո՞ո, - ասաց նապօլէօնը, - այդ պատերազմը ինձ համար մի հասարակ նախաձաշիկ է:

— Վախում եմ, որ Զերդ մեծութիւնը երկար ժամանակ չնատէ սեղանի մօտ, - նկատեց Տալէյրանը:

V \* \*

Երեք երիտասարդներ պատահեցան մի գիւղացու, որ քաղաք էր գնում: Նոցանից մէկը ծաղրելով ասում է զիւղացուն. „Բարո՛վ տեսանք, Աբրահամ նահապէտ:“ Գիւղացին նայում է երեսին և շարունակում է ձանապարհը: Երկրորդը ձայն է տալիս. „Բա՛րով տեսանք, Խահակ նահապէտ:“ Գիւղացին չէ պատասխանում: Երրորդը ասում է, „Բարով տեսանք Յակօր նահապէտ:“ Գիւղացին կանգնում է և ասում, „Պա՛րոններ իմ անունը ո՛չ Աբրահամ է, ո՛չ Խահակ և ո՛չ Յակօր, ինձ կոչում են Սաւուղ որդի կիսեայ. Հօրս կորցրած էշերը որոնելու էի եկել, երեք հատը զտայ:“

\* \* \*

Սասսիկ հարբածին ասում է կլուրի տէրը:

— Պա՛րոն զուք այնպիսի զրութեան մէջ էք, որ ես կհրամայեմ ձեզ գուրս տանել:

— ԱՌԵ, ինդրեմ, շնորհ արէք, ամբողջ ժամէ, ևս  
դուրս գնալու ձանապարհ եմ որոնում:

\* \* \*

Միրտութեան ժամանակ, քահանան երեխաս  
յին զցել էր աւազանը, ուր ջուրը համարեաւ եռ  
էր գալիս: Նա հանեց մեռած երեխան, և տալով  
տատմօրը, ասաց. , , իս չետ. մի ուրիշը բերէք:

\* \* \*

Հոգեվարք պառկած Հնդկացու անկողնի մօտ  
նստած էր Բրամինը: Հանդերձեալ աշխարհի վերայ  
մոռածելով, յանկարծ մեռնողը աղաղակում է.

— Ինձ ի՞նչ պէտք է պատահի:

— Դու ուրիշ մարմնի մէջ պէտք է բնակուիս,  
պատասխանեց Բրամինը:

— Եսրանից յետոյ ուր պիտի դնամ:

— Ուրիշ մարմնի մէջ:

— Յետոյ:

— Դարձեալ ուրիշ մարմնի մէջ, և այնպէս միւ  
լինաւոր դարձեր: Այս բոլոր ժամանակը մի վայրէ  
կնում կշռելուց յետոյ, աղաղակեց խղճալի մարդը.  
,, եւ վերջը ուր պիտի գնամ:

— Հեթանոսութիւնը այդ հարցին բնաւ չէ կա-

րող պատասխանել: - Ողորմելի Հնդիկը մեռաւ, զուր  
աշխատելով իմանալ. թէ վերջը ուր պէտք է գնար:

\* \* \*

Տիկինը: Իսկ Շէկսպիրը կարդացել էք դուք:  
ԿԱՎԱԼԵՐԻ: Ի՞նչպէս չէ, կարդացել եմ, շատ  
հետաքրքրական է. միայն չեմ յիշում, ում շարադրութիւնն է:

✓ \* \* ✓

Մաքսիմիլիան Ա-ը պալատի պատի վերայ մի  
պատկեր էր նկարել տալիս Դիւրեր նկարչն. և  
հարկաւոր էր նորան սանդուղ բռնել:

— Բնանեցէք սանդուղը, - ասաց կայսրը մի ասպետի:  
— Մի նկարը, - հարցրեց հպարտութիւնով ասպետը:  
կայսրը նկքը բանեց սանդուղը, ասելով.

— Իմ տէրութեան մէջ հասարակ մարդկերանցից  
ես ասպետներ շատ կարող եմ ստեղծել, բայց բոլոր  
իմ ասպետներից չեմ կարող ստեղծել մէկ Դիւրեր:

\* \* \*

ԱՅՑԵԼՈՒՆ:

Ասացէք, ինդրեմ, ես ձեզ  
մօտ գտայ երկու գանդ գաւ-  
լիէի-մէկը մեծ, միւս փոքր:  
Նորանցից ո՞րն է իսկականը:

ՄՈՒԶԵԻ ՏԵՍՈՒՁՅ: Երկուսն էլ իսկական են.  
մէկը - երեխայական հասա-  
կիցն է, միւսը ծերութեան:

\* \*

Ֆրեդրիկոս-Մեծը անցնում էր ուսումնարանի  
մօտից այն բողէին, երբ երեխաները դուրս էին գա-  
լիս, և ձայն տուեց նոցա, „Ուսումնարան գնացէք,  
ուսումնարան:“ Մի երեխայ յանկարծ ձայն տուեց,  
ցոյց տալով թագաւորի վերայ, - տեսէք, սա չգիտէ  
թէ դասերը վերջացել են, դեռ թագաւոր էլ է:“

\* \*

Մի հասարակութեան մէջ եզրուիդը տեսնե-  
լով խարտեաշ դէմքով մի մարդ, ասաց - Այս  
մարդը խարտեաշ է, ինչպէս Յուդան:

— Պարոն, պատասխանեց վշտացածը, - դեռ յայտ-  
նի չէ, իրաւ է արդեօք, որ Յուդան խարտեաշ էր,  
բայց ոչ ինչ կասկած չկայ նորանում, որ նա պատ-  
կանում էր Յիսուսի հաստրակութեանը **COMPAGNE DE  
JESUS**, - այսպէս են անուանում իւրեանց Եզրուիդները:

✓ \* \*

բիչը ցոյց տուեց նորան երկուսը. մէկը հարիւր մա-  
նէթանոց, միւսը երկու հարիւրանոց: Հրէան գնեց  
առաջինը: Հետեւեալ օրը նա վերադարձաւ և ասաց  
,,Ես մտածեցի, որ աւելի լաւ է կ'վերառնեմ երկու  
հարիւր մանէթանոց տուփիկը: Ոսկերիչը տուեց նո-  
րան տուփիկը և Հրէան վճարեց այսպէս, “ էրեգ ես  
ձեզ տուեցի հարիւր մանէթ, և հիմայ տալիս եմ  
այս տուփիկը, որ նոյնպէս արժէ հարիւր մանէթ,  
ուրեմն դուք ստացաք ընդ ամենը երկու հարիւր  
մանէթ: Ոսկերիչը բաւական մնաց այս հաշուից:

✓ \* \*

Վ. Նասրէդզինը մէկ ձի էր սուել դալալին Ը  
(առևտրական): որ ծախէր 30 մանէթով: Գալալը  
ձին տարաւ փողոցը և բազմութեան մէջ գովում էր,  
համարելով ձիու արժանաւորութիւնները, թէ նա  
շատ լաւ է տեսնում, շատ լաւ է լսում, շատ  
մաքրասէր է, շատ լաւ է արշաւում . . . . , և զինը  
նշանակել էր 50 մանէթ: Մօլլան մտածեց, եթէ  
իւր ձին այդքան լաւ է. էլ ինը՞ւ է ծախում, նա  
դալալին տուեց 50 մանէթ և ձին յետ առաւ,  
տարաւ տուն:

— Այ կնիկ, զիտե՞ս - ասաց Մօլլան կնոջը, իմ  
ձին շատ լաւ ձի է էլել, ես էլ 50 մանէթ տուեցի

և ինքս առայ, . . . . :

— Ես ել մի լաւ բան եմ արել, ասաց կինը,  
մէկ առնող եկաւ. մէկ լիտր մանած էր ուզում:  
Կշուեցի իմ մանածը, քիչ պակաս եկաւ, յետոյ  
ինչ մատանիք ունէի, դինդ ունէի . . . . վիճն աւելացրի, ուղեղ մէկ լիտր շինեցի, և մեկ լորի դինը  
առայ . . . . :

— Բա՛ս, էդպէս պէտք է ըլի, - ասաց Մօլլան,  
ևս դրսից պէտք է աշխատեմ դու ներսից . . . . , որ  
ժամանակով մենք էլ տուն դառնանք, անուն  
ունենանք . . . . :

\* \*

Տալէյրանը՝ կարգալով հնոյի առաջ մի բրօւ  
շիւր, քնեց, և գիրքը վայր ընկաւ նորա ձեռներից  
տախտակամածի վերայ: Հիւրերից մէկը նկատեց  
զարմանալով, որ այդ երգիծական հեղինակութիւնը  
զրած էր Տալէյրանի քաղաքական վարքի դէմ:

\* \*

Երկու կարդինալներ յանդիմանում էին Ուա-  
ֆայէլին այն պատճառով, որ նա Ս. Պետրոսի և  
Պողոսի պատկերները շատ կարմիր էր նկարել: Նկա-  
րիչը, վշտացած այդ նկատողութիւնից, ասաց. „Ես

նորանց նկարել եմ այնպէս. ինչպէս նոքա երկնքու-  
մնն են: Այդ կարմրութիւնը բռնել է նոցա դէմքը  
ամօթից, որովհետև եկեղեցին այդպէս վատ է կա-  
ռավարվում:“

\* \*

Դամբուրդ քաղաքում միևնոյն օրը թաղում  
էին մէկ մանկահասակ օրիորդ և մի գրենադեր: Եր-  
կու դագաղներն էլ բոլորսվին նման էին միմեանց:  
Դէպքին հարկաւոր էր եղած, որ թաղելու ժամա-  
կը սխալմունք լինէր դագաղների մէջ. օրիորդը թա-  
ղուեցաւ զինուորական յարգանքով, իսկ զրինադերի  
դագաղը զարդարուած էր կուսական սպակներով:  
Օրիորդի բարեկամներից մի քանիսը կամեցան վերջին  
անգամ նայել նորան և հրամայեցին բաց անել դա-  
գաղը. բայց ո՞բքան զարմացան, երբ իւրեանց մա-  
նուկ օրիորդի տեղը տեսան նոքա հին զրինադերի  
թանձրամազ և երկարաբեղ դէմքը, որի դագաղի  
ետելից նոքա հետեւում էին արտասուբով:

\* \*

Գիւղի եկեղեցու մ կային երկու քահանաներ՝  
տէր Յակօր և տէր Խորայէլ: Հասարակութիւնը  
ընարեց մի երրորդն էլ: Հին քահանաները նորի

Ներկայութիւնով՝ ամսական գանձանակը իւրեանց  
մէջ բաժանելու համար՝ սաղմոսից անզիր սերտել  
էին մէկ տուն և ասում: „Եղել բաժին տեառն ժու-  
ղովուրդ իւր Յակոբ, և վիճակ ժառանգութեան իւ-  
րոյ Խորայէլ“ և փողի կէսը քաշում էին մէկի  
կողմը, միւսը՝ միւսի կողմը: Խակ նոր քահանան  
նայում էր՝ նայում, բայց վերջը իւրեան ոչ ինչ  
չէր ընկնում:

Դա աշխատեց, գտաւ սաղմոսի մի յարմար  
տուն. և երբ մէկ օր էլ այդպէս. „Եղել բաժին  
տեառն ժողովուրդ իւր Յակոբ. և վիճակ ժառան-  
գութեան իւրոյ Խորայէլ, ասելով նստած՝ երկու  
քահանաները բաժանում էին իւրեանց մէջ գան-  
ձանակը՝ նոր քահանան խորանից դուրս բերեց  
կրակով լի ջեռարանը և խվելով զեռ մէկի՝ յետոյ  
միւսի զլիին, ասաց. սաղմոսից սովորածը „Հուր  
բորբոքեցաւ ՚ի վերայ Խորայէլի և բարկութիւն նո-  
րա էլ ՚ի վերայ Յակօբայ: „Երկու քահանաները  
փողերը թողին, խոյն յետ փախան, խակ նորը հա-  
ւաքեց բոլորը և զրեց գրպանը:

\* \*

Մի անգամ Նիւտօնը շփոթուած՝ նստած էր  
պատի վառարանի մօտ և ընկղմուած խորին մուա-  
ծողութեան մէջ: Շուտով նա զգաց, որ սաստիկ

տաքութիւնից ոտները այրվում են: Նա ձայն տու-  
ւեց ծառային բոլոր ուժով, և հրամայեց. „Այս  
վառարանը մի փոքր հեռացրո՞ւ:“

\* \*

Գլասգօվում մի գերասանուհու բենիֆիսն էր:  
Դուրս կանելով դորան մի քանի անգամ, և ծաղկ-  
ներում կորյնելով, այցելուները դուրս կանչեցին և  
գերեկտորին: Սա դուրս եկաւ ուրախ դէմքով, բայց  
երեակայեցի՞ք նորա զարմացքը, երբ յանկարծ թա-  
փուեցին նորա վերայ կաղամբի տերեներ, գազար,  
կանաչի... ևն: Մի քանի րոպէ զիրեկտորը սառ-  
նութիւնով տարաւ այս յարձակմունքին, բայց երբ  
այցելուները միենոյն ժամանակ սկսեցին խրխռալ  
խոզի պէս, նա ասաց շատ հանդարտ. „Պարոններ,  
ես շատ պինդ ջղեր ունիմ. այս պատճառով եթէ  
այս կանաչեղէն գցող իշաներից մէկը, փոխանակ ու-  
տելու, ներս կ'մննէ իմ բանջարանոցը, այն ժամա-  
նակ ես անխնայ կ'փշեմ նորա, կողքերը:“ Հասա-  
րակութիւնը լրեց:

\* \*

ԿԻՆԸ:

Այս կատուն էլ ինձ աւելի շատ է  
սիրում քան թէ դու:

ԱՄՈՒՍԻՆԸ: Հոգիս', այդ նորանից է . . . , որ  
դա քսակ չունէ:

\* \* \*

ՄԵԿ Ամերիկական ամսագրի համարը չ' դուրս  
եկաւ: Խմբագիրը իւր բաժանորդներին գրեց հետեւ  
եալը: „Հրապարակօրէն խոստովանում եմ, որ իմ  
կոռուասէր կինը, մի քանի մղոն հեռաւորութեան  
վերայ ուխտ գնալով. ինձ ստիպեց օրօրել երեխայիս  
օրորոցը: Հրաժարութեալով բոլոր անսյին կուիներից,  
ևս համերութիւնով կրում եմ ամուսնութեան  
ծանր խաչը և սրբութիւնով կատարում եմ իմ կնոջ  
բոլոր հրաժանները: Յայտնի բան է, յարգելի բաժան  
նորդներս կցաւին այսպիսի կնոջ վերայ և կներն  
նորան ամսագրական մեղքը, որի մէջ միակ մեղա-  
ւորը իմ քսանտիպալան է:“

\* \* \*

ՄԻ աեղ հրաւերք կար: Տան տէրը ծառային  
կանգնացրել էր դրների մօտ, որ իսկոյն իմաց անէր,  
երբ կ' գար այն կինը, որին սպասում էին ամենքը:  
Յանկարծ, դրների մօտ կանգնում է կառքը, որի  
մէջ նստած էր հրաւերուած բժիշկը: Ծառան մօ-  
տենում է և ասում. „Պա՛րոն, թոյլ տուեցէք

իմանալ, դուք չէք արդեօք տիկին Մարտիրոսեանը:“

\* \*

ՄԷԿԸ ներկայացրեց Կլիմենդ ՎԻ փապին իւր  
շարադրած ոտանաւորը: Փապը ասաց. „Երլորդ  
տան մէջ պակաս է մի վանկը:“

— ԶԵՇՐԴ սրբութիւն, - ասաց շարադրողը, բարե-  
հածեցէք մի փոքր առաջ տանել ընթերցանու-  
թիւնը, և տուք կ' գտնէք մի տուն, որտեղ կայ ա-  
ւելորդ վանկ, որով և կ' լրանայ պակասը:

\* \*

ԶԻՆԱՐԱՆԻՆ այցելութիւն գնալով մի պարոն ○  
Հարցրեց այդ շինութեան հիմնարկութեան թիւը:

— Թիւը մենք չենք կարող մտաքերել Ճիշդ, - բայց  
շատ հաւանական է, որ մեր զինարանումն է շի-  
նուած այն սուրը, որով հրեշտակը Ադամին և  
Եւային արտաքսեց դրախտից:

\* \*

ՄԻ օր Քսանթոսը Եզօպոսի հետ գնաց գերեզ-  
մանատունը: Եզօպոսը մի տապանի վերայ տեսաւ  
այս Յունական տառերը Ա ա՛լֆա, Բ վե՛գա, Ծ գեշ-  
տա, Օ ո՛մբրան, Ե է՛փախան, Ր բիդա, Խ խհի:

Այս տառերը ցոյց տալով Քսանթոսին հարցրեց .

— Ի՞նչ են նշանակում սոքա :

— Զեմ հասկանում,-ասաց Քսանթոսը երկար քննելուց և մասձելուց յետոյ :

ԱՌիբայ, եթէ ես այս տառերի զօրութիւնով այս տեղ գանձ գտնեմ, ինձ ի՞նչ կ'տաս :

— Կէսը քեզ կ'տամ և քեզ կ'ազատեմ .

Եզօպոսը չորս քայլ հեռացաւ, փորեց, հանց գանձը տուեց Քսանթոսին և ասաց, „Կատարի՛ր խոռոտմունքդ :“

— Ես քեզ չեմ աղատիլ մինչև այն տառերի զօրութիւնը ինձ չհասկացնես :

